

370.1
U-8284

ԱՌ ՄԱՆԿԱՄԱՐԴ ԿԱՆԱՅՍ ԵՒ ՕՐԻՈՐԴՄ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՕՐՈՐՈՑԷՆ ՊԱՐՏԻ ՍԿՈՒՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆիննաննըլար եօդուըու, թիւ 27

معارف عمومیه نظارت جلیله سنگ رخصتname سبله طبع او تنشدر

ԱՐ ՄԱՆԿԱՄԱՐԴ ԿՈՆԱՅՍ ԵՒ ՕՐԻՈՐԴՆ

ար

370.1

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՕՐՈՐՈՑԵՆ ՊԱՐՏԻ ՍԿՍԻԼ




ՀԵՂԻՆԱԿ

ԽՇԽԱՆՈՒՏՀԵՆ Մ. ՌԱՋՈՒՍՈՎ,

“The child is father to the man.,,” «Մանուկը մարդուն հայրէ է»

Wordsworth

Աւետարքին



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԱՂԻՆԵՐԻՆ

ՎԱՐԴԱՆ Գ. ՔՈՎՉԱՆՅԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍՅԱՆ

873⁶

2002-57



ԿԸ ՁՈՒԵՄ

ԱՅՍ ԳՐԻ ՈՅ ԿՐ

ՔԱՂՅՐ ՑԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑՍ

ՈՐ անխառն սիրով սիրեցին

Ցեսին ծայր չփառութեամբ սնու ցին

ՈՒ ՄԵՇՑՈՒՑԻՆ ՁԻՍ

Թեեւ ընդհանրապէս մեր մէջ հրատարակութեան զործը թէ՛ նիրապէս եւ թէ՛ բարոյապէս մեծ բացալերութիւն մը չի խոսանար, այսու հանդերձ չենք վարանած ձեռնարկել ներկայ զործոյն բարգմանութեան եւ հրատարակութեան, անսաղով միայն ի վեր բան զամենայն մեր խղճին ձայնին : Որովհետեւ մեր բուռն փափառն եր լուրջ եւ աշխարհի ծառայութիւն մը մատուցանել մեր սիրելի Ազգին, հարկ անհրաժեշտ համարեցանի կրութեան մեծ եւ կենական խնդրոյն վերաբերեալ այս անժխտելի եւ հիմնական աշխարտութիւնները տարածել մերայնոց մէջ : Իցի՛ւ թէ ոչ թէ միայն խօսնով, այլ զործնականապէս զնահատուեին սոյն աշխարտութիւններ . յա՛յնժամ միայն մեր փառաց արժանացած կը համարեկինից զմեզ, երեւ երբեք փառն մը կ'ակնկալենի ասկ :

Հաւանական է որ մեր ներկայ բարգմանութեան մէջ Հայերէն ո՞նի եւ բարգմանութեան վերաբերեալ՝ ո եւ է սխալմունին կամ խորրութիւնն մուտքած ըլլան, վասն զի բաց հայկաբան եւ զաղիարան ըլլալու յաւակնութիւնը չունին : սակայն բաղդատապէս աննշան սխալի մը համար օգուտ մը չունի եւ չի կրնար ունենալ խծրծել զայն :

Ուսի կ'աղայենի ամեն անոնց որք ամեն ինչ ,
արժէ կամ շարժէ , ֆենադատելու անզուսպ մար-
մաշ մը ունին , այս մասին ներդամաքար եւ
խղճամաքար վարուին : Պարկեց եւ արդար
ֆենադատութեան համար ի՞նչ ըսելիք կրնանի ո-
նենալ սրանց շնորհակալ ըլլալիք զաս :

Չի մոռնանի նաեւ յիշելու թէ ներկաց գրքոյկին
ընագրին մէջ այն փոքրիկ մասը որ սոսկ զայդա-
ցի մանկուոյն վրայով կը խօսի եւ հետեւաքար
Գաղիացոց կենաց պայմաններուն միայն կը վե-
րաբերի , զանց առնուած և ընթերցողաց շփո-
րութիւն չի պատճառելու համար :

Մաղթելով որ սոյն գրքոյկիս մէջ ամփոփուած
կենսական աշխարհութիւնի օրինաքեր ըլլան մե-
րազնեկից համար , խոնարհաքար կը ներկայեմ զայն
սիրելի ընթերցողաց խորին ուշադրութեան :

ԹԱՐԳՄԱՆԻԳԸ



ՆԱԽԱԲԱՆ

Նոր եւ տարօրինակ բան մը բրած ըլլալու յաւակնութիւնը չունիմ։ Ինձի կը բուի միայն թէ առաջին մանկութեան այս կարեւոր խնդրոյն վրայ խօսող գիրքերն անմատչելի են բազմաթիւ անձերու։ ուստի ջանադիր եղայ մէկ բանի էջերու մէջ ամփոփել ինչ որ նշանապէս անհրաժեշտ է զիտնալ ընկերական այս մեծ խնդրոյն նկատմամբ։ Կը յուսամ թէ այս տողեր, ուր զիտական մանրամասն ծանօթութիւններ պահանջող ամէն խրնդիր բոլորովին զանց առնուած է, պիտի կարենան անցնիլ ամէն օրիօրդաց եւ մարց ձեռքք, ինչ որ ալ եղած ըլլայ անոնց դասիարակութիւնը կամ կացութիւնը։ Բնականաբար, այս էջեր ուղղուած են մանաւանդ անոնց որք բացարձակ սզիտութեան մէջ խորասուզուած են, սզիտութեան՝ որուն դարման անելու ժամանակը հասած է սակայն։

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



ԱՌ ԻԳԱԿԱՆ ՊԱՏՍՆԵԿԱՌԻԹԻՒՆ

Կը փափաքիմ խօսիլ ձեզ այնպիսի նիւթոյ մը
վրայ որ խիստ պարզ է , խիստ ընտանի եւ միանգա-
մայն ձենէ իւրաքանչիւրին կենաց խիստ հարկաւոր ,
բան մը որ շատ աւելի անժխտելի օգտակարութիւն ու-
նի քան այն ամէն ուսմունք որոց նուիրած էք ձեր
անձեր : Մինչեւ իսկ կը համարձակիմ ըսել թէ այս
ուսմունք պիտի ծառայեն մանաւանդ զիւրացնելու
այն ճիգերն ու ջանքեր զորո ձենէ իւրաքանչիւրը
պիտի պարտաւորի ի գործ դնել ապագային մէջ մա-
նուկները խնամելու եւ կրթելու համար :

Եթէ , ըստ բնական օրինաց , ամուսնանաք եւ
մայրեր ըլլաք , այս խնդրոյն կենսական կարեւորու-
թիւնը բնականաբար պիտի զգաք : Իւրաքանչիւր
կին ճակատագրեալ է զբաղիլ մանուկներով . իր
բնական կոչումն է այս եւ իր կենաց ճշմարիտ շահն
ու օգուտը միանգամայն :

Մարդկութեան բազմանդամ ընտանեաց իրեւ-
երէց քոյրեր , իբրեւ ազգականունիներ այս ըն-
տանեաց՝ ուր մահը , հիւանդութիւնը կամ աշ-
տաթեան ծանրութիւնը կը զրկեն ձեր փոքրիկ աղ-

դականները իրենց մօրմէն . վերջապէս բովանդակ
աշխարհի մէջ ուր կան միլիոնաւոր որբեր եւ լքեալ-
ներ որք կը կարօտին մայրական խնամոց եւ հոգա-
ծութեանց , իսկոյն կրնաք դատել թէ կայ միշտ
մանաւանդ նուազութիւն քան առատութիւն այն-
պիսի անձանց որք մանկանց կրթութեան կը նուիրեն
իրենց անձերը : Ամէն մարդասէր սրտի ամենազե-
ղեցիկ երազը — որ կը յուսամ թէ օր մը իրականա-
ցում պիտի գտնէ — սա է թէ օր մը պիտի գայ երբ չի
պիտի գտնուին այլեւս որբեր այն լքման իմաստով
զոր այս բառը կ'արտայայտէ : Եթէ Քրիստոս, յայտա-
րաբեռով թէ դուք ամէնքդ իրարու եղբայր էք , ու-
զած է բացատրել այս բառով թէ մենէ մէկը պէտք չէ
որ զլանայ խնամք , սէր կամ զթութիւն իր նմաննե-
րուն , ո՞վ աւելի կը կարօտի այս նպաստներուն քան
այն անթիւ փոքրիկ արարածները որք կը շրջապա-
տեն զմեզ եւ որոնցմէ հաղարաւորներ կը կորսուին ա-
մէն օր առ ի չգոյէ գոյզն սիրոյ եւ խնամոց : Քանի՛
կիներ ծոյլ , մեկուսացեալ եւ ապարդիւն կեանք մը
կ'անցընեն , մինչ աշխարհի մէջ կը գտնուին օգնու-
թեան կարօտ այնքան մանուկներ : Ստուգիւ , ա-
նոնք այս եղանակաւ կը վարեն կեանք մը յաճախ
անօգուտ , կեանք մը որ յետոյ իրենց շատ սուզի
կը նստի , որովհետեւ իրենց մանկութենէն ի վեր չեն
ըմբռնած այս խնդրոյն կարեւորութիւնը . զգացած
չեն թէ ասիկայ այնպիսի աշխատութիւն մըն է որ
ճշմարտապէս արդիւնաբեր է եւ աղբիւր անթառամ
երջանկութեան :

Ասոր համար է որ խօսքս կ'ուղղեմ ձեզի . դուք
որ կենաց մէջ նոր կը մտնէք , դուք որ չունիք յաղ-

թահարելիք հին սովորութիւններ , որոց բնական է որ մատնուիք ապագային մէջ , եւ որոցմէ դեռ կարելիութիւն կայ դերծ մնալու :

Որչափ կը խորհիմ այս խնդրոյն վրայ , այնչափ լաւ կը տեսնամ թէ միակ միջոց մը կայ գործը լաւ կատարելու , այն է անձին դաստիարակութիւնը . ուստի անձին դաստիարակութիւնը ձեր մատաղ հասակէն կը սկսի : Այս օրուան երիտասարդութիւնն է միայն որ կարող պիտի ըլլայ կրթել , բարձրացնել վաղուան մանուկները : Հարկ է ուրեմն պատրաստուիլ առ այս , եւ այս մասին ձեղ օգնելու համար է որ կ'ուզեմ հաղորդել ձեզ զոր ինչ կրցած եմ անձամբ դիտել եւ քաղել զանազան նշանաւոր հեղինակութիւններէ :

Զարմանալի բան մը կայ ըսելիք — բան մը որոյ նկատմամբ մարդիկ վերջին աստիճան տգէտ են , եւ որ սակայն ամենէն աւելի կարեւոր եւ անհրաժեշտն է : Ո՞չ ապաքէն այս օրուան մանուկն է որ պիտի ըլլայ կա՛մ բարերարը կա՛մ ընկերական պատուհասը ապագային մէջ բազմաց , կա՛մ ուրախութեանց եւ կամ տրտմութեանց աղբիւրը , տակաւին չի ծնած շատ մը սերունդներու ճակատագրին պատճառը , սերունդներ որք կախում ունին իւր ֆիզիքական եւ բարոյական առողջութենին : Աւասիկ այս կրկնակի առողջութիւնն է որ պարտի առարկայն ըլլալ մեր բոլոր խնամոց , մեր բոլոր ջանից . եւ , որովհետեւ իւրաքանչիւր փրկուած մանուկ ճշմարտապէս անհաշուելի ստացուածք մ'է , այս աշխատաթիւն կորսուած չէ , որչափ ալ վհատեցուցիչ թուի երբեմն : Լաւ հասկցէք որ առողջութիւն բար-

ոռվ կ'ուզեմ ակնարկել բարոյական եւ ֆիզիքական կրթութիւնը : Հին ժամանակաց մէջ կ'ըսուէր թէ առողջ միտքը առողջ մարմնոյ մէջ է : Շատ ճշմարիտ է այս , եւ այս մասին իմ համոզումն, հիմնուած մանրակրկիտ հետազօտութեանց եւ բազմազիմի փորձառութեանց վրայ , այնքան զօրաւոր է , որ կ'ուզեմ՝ ամէն բանէ առաջ՝ հաղորդակից ընել զձեզ այս համոզման :

Երբ այս ճշմարտութիւն մի անգամ ընդ միշտ իրեւ հիմ ընգունուի , պէտք է զիտնալ այնունետեւ թէ ի՞նչ է այն որ մարդկային գոյացութեան մէջ այս առողջութիւնը կը կազմէ , եւ թէ մանուկներն այս առողջութեան հասցնելու համար ի՞նչ միջոցներ պէտք է ի գործ գնել : Բանտերը լի են անհասներով որք ամենքն ալ մանուկներ եղած են , եւ որոնց մեծագոյն մասն իրենց այս տիսուր ճակատագիրը կը պարտին ժառանգութեան , լքման կամ հիւանդութեան : Այս թշուառներէ քանիներ արդեօք փրկուած պիտի լինէին , եթէ անոնց մանկութիւնը տարբեր եղած ըլլար : Ահա ասոր համար է որ շեշտելով կ'ըսեմ ձեզի թէ մանուկին երես մի՛ դարձնէի երթեֆ : Ի բաց առեալ հիւանդութեանց կարի հազուաղէսպ պարագաներն (այսպէս կը կոչեմ նաեւ ժառանգական մոլութիւններն) , որք այնպիսի կերպով ամրապնդուած են կազմութեան մէջ ու զոհը դատապարտուած է կորսուիլ այս պատճառաւ , բացարձակապէս կորսուած մանուկ չի կայ : Զափահաս վիճակին մէջ մարդը վերածնել (régénérer l'homme fait) կարի գժուարին ջանք մ'է , սովորական ուժերու գործը չէ : Սակայն մանուկը կրթել , ա-

մէն մարդու ընելիք բանն է : Ընկերական բոլոր
բարեկարգութեանց առաջինն է այս , որուն բա-
բերար արդիւնքը աներկբայ է : Ո՞չ օրէնք , ո՞չ ու-
սում , ո՞չ մշակութիւն բան մը կարող են ընել
բազգատմամբ նախնական գաստիարակութեան ,
բազգատմամբ մարդկային էութեան առողջութեան
օրօրոցէն ի վեր տրուած այս ինսամոց :

Տեսէք թէ որչափ բարձր , որչափ վսեմ է այս
նպատակ : Ամէնքնիդ ալ կ'ուղէք բարիք ընել
այս աշխարհիս մէջ , այնպէս չէ՝ , պատրաստ էք
ձեր ջանքերը նուիրել առ այս , մանաւանդ երբ
արդիւնքը ակներեւ է : Լաւ ուրեմն , փնտուելիք
բան մը չունիք . ընելիք բարիքը ձեր առջեւը , ձեր
քովին ունիք ամէն վայրկեան , ինչ որ ըլլայ ձեր
ընկերական կացութիւն , կրնաք կատարել եւ պար-
տիք կատարել այս պարտականութիւնը : Խնամեցէք
մանուկը , սրտանց խնամեցէք զայն , ձեր հան-
ճար , ձեր ամբողջ ուշն ու ուժը նուիրեցէք անոր ,
եւ պիտի տեսնէք յայնժամ թէ այս աշխարհիս մէջ
հանդիսացած չէք անօգուտ մէկը , այս բառին
ընդարձակագոյն առմամբ : Կենդանի շահերով լի
սիրտ մը պիտի ունենաք միշտ , երբէք առանց ըն-
տանեաց չի պիտի ըլլաք , երբէք սիրոյ առարկայէ
մը զուրկ չի պիտի մնաք : Երբ մէկը խեղդել կ'ուզէ
շուն մը , բաւական կը սեպէք ազատել եւ մնուցա-
նել զայն՝ անոր համար գութ ու գորով ցոյց
տուած լինելու համար : Պէտք չէ ուրեմն իւրա-
քանչիւր մարդկային արարած ազատել հիւան-
գութենէ , անկրթութենէ եւ յուսահատութենէ
մտքով , սրտով եւ մարմնով ընկերութեան առողջ

մէկ անդամն ընելու համար զնաւ Եթէ այս կարգի զո-
հողութիւնը առաւել կարեւոր, առաւել հարկեցուցիչ
ընող բան մը կայ, այն ալ սա է թէ միակ ան-
հատը չէ որ կ'ազատէք՝ այս զեռահաս արարածները
խնամելով. այլ անվախճան բարերարութիւն մէ
սա որ կը տեւէ դարուց ի զարս, եւ համոզուած եմ
թէ բան մը չի գոհայներ մեզի նման մարդկային
արարածներու բարձրագոյն բաղձանքները, բայց
միայն ըստ կարելոյն օգնել այս ապագայ յառաջ-
զիմութեան զոր մենք չի պիտի տեսնենք:

Քանզի ակներեւ իրողութիւն մը կայ, որուն
նկատմամբ բաւական խորհողներ չիկան, այն է թէ
համայն մարդկային արարածք իրարմէ կախում
ունին, իրարու երաշխաւոր են. անոնցմէ մէկուն
իւրաքանչիւր արարք, իւրաքանչիւր խօսք ունի
իր հականարուածն ներկային մէջ եւ յաճախ ա-
պագային մէջ, եւ այս երաշխաւորութիւնը ծագում
կ'առնէ զրական կապէն որ զմեզ իրարու հետ կը
կապէ անլուծելի շղթայով մը: Այս երաշխաւորու-
թիւն իւրաքանչիւր անհասականութեան կարեւու-
թիւնը կ'ապացուցանէ, ոչ թէ ըստ ինքեան, այլ
այլոց հետ ունեցած իր յարարերութեանց մէջ:

Երբ Քրիստոս կ'ըսէ թէ Դուք ամէնքնիդ եղ-
բայրներ էք, վերացական գաղափար մը չէ, բարո-
յականի բարձր օրէնք մըն ալ չէ զոր կը յայտնէ Քրիս-
տոս, այլ Փիզիգական անժխտելի պարզ իրողութիւն
մը: Առ այս ահաւասիկ ապացոյց մը որոյ մասին սա-
կաւ անձինք կը խորհին. բայց այս «սակաւ»ը անհուն
թիւ մը կը կազմէ անհատներու որոց արիւնը կը
հոսի մեր երակաց մէջ: Տեսէք թէ ինչպէս: Զեսէ

ամէն մէկը զիտէ թէ երկու պապ եւ երկու մամ
ունի . բայց կա՞ն միթէ շատեր որ կը միշեն իրենց
ութը պապու հայրերն եւ տասնեւլեց պապու պա-
պերը :

Առէք պարզապէս ամենէն մօտ ազգականնե-
րը , եղբայրները եւ քոյրերն այդ սերնդոց , իրենց
թոռներով հանդերձ , եւ տեսէք թէ անհատներու
ո՞րպիսի մի շարք կը գտնուի զրական ազգականու-
թեան մէջ մեղի հետ : Կը տեսնէք ուրեմն թէ աշ-
խարհիս մէջ մարդիկ ի բնէ միմեանց ազգական կը
գտնուին , եւ թէ վայրագ անձնասիրութեան հետ
ընկերացած տպառութիւնն է որ կուտայ մեզ այն
գաղափարը թէ մեր մէջ օտարներ կը գտնուին :
Զեր այսօրուան զրացւոյն տղայք անխուսափելի
կերպով ճակատագրեալ են օր մը ամուսնանալ ձերին-
ներուն հետ , կամ խառնուիլ հասարակային կենաց
մէջ . ուստի մի կարծէք թէ՝ ընդհանուր մանկու-
թեամբ նախազբազելով ապագայ սերնդոց մատու-
ցած կ'ըլլաք այնպիսի մի ծառայութիւն որուն մէջ
բնաւ շան մը չունիք : Պիտի սիրէք ձեր թոռները ,
ինչպէս բովանդակ բնութեան համար օրէնք է այս .
եւ բարիք պիտի կամենաք անոնց համար . անոնց
բարելաւութիւնը զիրենք շրջապատողներէն կախ-
եալ է : Եթէ հիւանդներու կամ ոճրագործներու
ընկերութեան մը մէջ ձգուին անոնք , իրենց բոլոր
անձնական առաքինութիւններն զիրենք չի պիտի
արգիլեն կորառելէ . քանզի չեզոքութիւնը , մինչեւ
իսկ առաքինութեան մէջ , օգուտ մը չունի : Մենք
ամէքս ալ անժխաելի կերպով իրարմէ կախում ու-
նինք : Ամէն մէկ վեասակար գործ զրեթէ ստէպ կը

պատժուի յանձին անմեղի մը . իւրաքանչիւր մարդկային արարած որուն օգնութեան ձեռք չի կարկառուիր բռւն ժամանակին, անծայր անսպառ թշուառութեանց ուղղակի պատճառը կը լինի , մեղի համար եւ մանաւանդ անոնց համար որք մենէ ետքը կուգան :

Եթէ զրայնուդ տունը կ'այրի , ձեր տունն եւս հրոյ ճարակ ըլլալ կը սպառնայ անտարակոյս : Այս աշխարհիս մէջ այնուէս մը ստեղծուած ենք , որ իրարմէ չէզոք ապրիլ անկարելի է : Երբ մեր բոլորափը գտնուողներ երջանիկ չեն , մենք եւս երջանիկ չենք ըլլար . քանզի ամենքնիս ալ այնպէս իրարմէ կախեալ ենք , որ չենք կարող , ինչ որ ընենք , ապրիլ առանց իրարու : Այս պայմաններ պիտի տեւեն ցորչափ մարդկութիւնը կայ եւ կը մնայ . ուստի որչափ բարիք ընել յաջողինք անոնց որք պարտին մի օր մարդկութիւնը կազմել , այնչափ ծառայութիւն մատուցած պիտի լինինք մեր մերձաւորագոյն աղքականաց , եւ չի պիտի վարանիմ ըսելու թէ մեր մանկանց համար ընկերական անքիծ ու երջանիկ միջավայր մը պատրաստելով , անոնց առաւել օդտակար հանդիսացած պիտի լինինք քան մեծ հարստութիւն մը թողուլ աշխատելով : Այս վերջինը , հարստութիւնը , շատ տարակուսելի եւ ամէն մասամբ շատ զիւրաբեկ երջանկութիւն մ'է , իսկ առաջինը՝ տեւական եւ ապահով :

Սակայն նպատակի մը համնելու համար բաւական չէ բարի կամք ունենալ , ոչ իսկ վեհանձն եւ բարձր զգացում մը կրել . հարկ անհրաժեշտ է նաև խորապէս ուսումնասիրել այն բանը զոր ձեռք բե-

բել կ'ուզուի , ջանադիր ըլլալ վնասուել դտնելու ամր
ամէն բան որ կարող է զմնզ առաջնորդել դէպ ի
նպատակակէտ . լաւ խորհելու է ընելիքին վրայ
տգիտութեան տիսուր հետեւանքներէն զերծ մը-
նալու համար . պէտք է այս մասին ստանալ ա-
մէնամնձ հմտութիւն : Ուստի չի պիտի շատա-
նամ ձեզ յայտնել թէ ինչ ունիք ընելիք . պիտի
ըսեմ ձեզ թէ ինչո՞ւ համար եւ ի՞նչպէս պէտք է
զայն ընել , եւ կարելի եղածին չափ ամէն մէկ
խրատ կամ յորդորի ճշմարտութիւնը անձնական դի-
տողութեամբ կամ կենդանի օրինակներով պիտի ա-
պացուցանեմ :

Եթէ յաջողիմ այս գրքոյկին մէջ ի քննին ա-
ռած խնդրոյս կարեւորութիւնը ձեզի հասկցնելու ,
խրատներուս արդեանցը վրայ չեմ տարակուսիր :
Քնկերական այս մեծ խնդրոյն լուծումը սա բա-
ռերուն իմաստին գործադրութենէն կախեալ է .
« Կրթեցէք մանուկը իր ծննդենէն սկսեալ : » Աշ-
խարհիս մէջ չիկայ գիտութիւն մը որուն նախնական
սկզբունքները ուսումնասիրել եւ կատարեալ կերպով
հասկնալ պէտք չըլլայ դժուարագոյն խնդրոց հաս-
նելու համար . չիկայ չէնք մը որ կարենայ դիմանալ
ժամանակաց եւ պատահարաց , եթէ իր առաջին հիմը
ամուր կերպով հաստատուած եւ մնացեալ մասէն
աւելի խնամով կառուցուած չէ : Այսպէս է նաև
մարդկային կեանքը . մանուկը մարդկութեան չէն-
քին հիմն է . այս հիման ամուր հաստատման համար
մեծ փոյթ ու խնամք տանիլ պէտք է : Գիտեմ թէ
պարզ գաղափար մը անդամ տարածելու համար ժամա-
նակ պէտք է , եւ սակայն այս բան զիս չի վհատեցներ :

Եթէ ձենէ ումանք խօսքով եւ դատողութեամբ
միայն կ'ընդունին զայն , անոնց կ'ըսեմ . Քաջալերու-
թիւն , համբերութիւն պէտք է , որչափ եւ դժուա-
րին թուի այն : Ձենէ իւրաքանչիւր ոք երբ այս
առողջ պայմաններով երեք կամ չորս տղայ կրթելու
յաջողի , ապագային հազարաւոր էակները փրկած
կ'ըլլայ : Աշխարհի վերածնութեան դործին մէջ ի
սկզբան թերեւս չէզոքացեալ զգաք ինքինքնիդ .
բայց եթէ այս գործը վարող գաղափարը ճշմարիտ է ,
վերջ ի վերջոյ պիտի տարածուի , պիտի յաղթա-
նակէ այս գաղափար , քանզի այն բանը որ ճշմա-
րիտ է , յաւիտենապէս պիտի ապրի : Ամենապարզ
ճշմարտութիւններն իսկ ընդհանրացնելու համար
շատ ժամանակ պէտք է , եւ այս մասին վստահու-
թիւնս միայն ի ձեզ է . այս գաղափարներով երկու
կամ երեք սերունդ կրթելու ըլլաք , տիեզերա-
կան ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք , եւ ,
այս նպատակին համանելու համար , մեզ պէտք չեն
գիտուններ եւ փիլիսոփաններ , այլ մեր օրուան ի-
գական սերունդը պէտք է , առանց բացառութեան ,
առանց խարութեան : Այս ըսելիքներս ամէն ոք կա-
րող է գործադրել , եւ այս պարզ ուսումնասիրու-
թենէն մեծամեծ յառաջդիմութիւններ կրնան յառաջ
գալ , բաւական է որ ԿԱՐՔ ունենաք :



ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ՕՐՈՐՈՑԵՆ ՊԱՐՏԻ ՍԿՍԻԼ

Ա.

Թէ ի՞նչ է մանուկը . — Փառանգականութիւն .
— Նախնական խնամոց կարեւորութիւնը .
— Զերմուրիւն . — Օդ :

Նախս սկսինք մանկութեան վրայ խօսիլ , այս-
ինքն բովանդակ մարդկութեան վրայ , թէ ո'րպիսի
բարւոքման կարօտ է մանկութիւնը :

Ի սկզբան տեսնենք թէ ի՞նչ է մանուկը : Մա-
նուկը հետեւանքն , արգասիքն է նախընթաց սերըն-
դոց . մանուկը նշմարելի չղթայ մ'է որ կը կապէ
անցեալը ապագային հետ : Մանուկը իր մէջ կը կրէ
հետքելին այն ամէն անհատներուն որք ծնած են իրմէ
առաջ . այս հետքերուն մէջ կայ բարի եւ չար սերմ :
Դաստիարակութեան միակ նպատակն է զարգացնել
ինչ որ բարի է , եւ ջնջել որոմը : Այս մանուկն է որ
պիտի հաղորդէ իրմէ ետքը եկողներուն այն բանը որ

իր անձնաւորութեան մէջ զօրաւորագոյն է , եւ
մեր պաշտօնն է զիւրացնել ի նմա , որչափ որ կա-
րելի է , բարերար զօրութեան մը աճեցումը : Ճիշդ
ինչպէս Բժշկութիւնը պարտի օգնել Բնութեան ջա-
նից՝ հիւանդութեան դէմ մղած իր ճակատամար-
տին մէջ , հիւանդութիւն զոր Բժշկութիւնը ան-
կարող է արմատախիլ ընել , այսպէս նաև դաս-
տիարակութիւնը պարտի իր բոլոր ջանքերով սա-
տարել բարի կոչման մարդկային բնութեան որ
ձգտեալ է շարունակ մարտնչիլ չարեաց դէմ : Դաս-
տիարակութիւնը մասնաւոր սահմանաց մէջ սահ-
մանափակելի չէ . օրօրոցէն կը սկսի այն եղանա-
կաւ որով մարմինը կը պատրաստուի այն պայքարին
զոր իւրաքանչիւր անհատ պարտի մղել իր ծննդե-
նէն սկսեալ : Դաստիարակութիւնը , հիմնական եւ
բնական ըլլալու համար , նոյն իսկ բնութեան մէջ
գտնուած միջոցներուն խոհական գործածութեան մէջ
պարտի կայանալ , եւ մասնաւանդ չըլլալ գործիք
մը գաստիարակին կամաց եւ քմահաճոյից : Եթէ մէկը
յաջողիլ կ'ուզէ այս մասին , պէտք է որ մէկ կողմ դնէ
ամէն տեսակ քմահաճոյքներ կամ զուտ անձնական
տրամադրութիւններ , եւ նկատել խնդիրը տղուն բաց-
արձակ օգտին տեսակէտէն : Բաղձակ տղու մը իր
անձին գաղափարաց , զգացմանց եւ ճաշակաց յանձ-
նապաստան ըլլալ սովորեցնել . զայն եսասէր եւ անձ-
նասէր ընելու աշխատիլ , քիչ ատենէն զանիկայ
խիստ վտանգաւոր պայքարներու մատնել կը նշա-
նակէ : Առաջին անհրաժեշտ պայմանն է ուրեմն մոռ-
ցընել եսը իր բոլոր սխալներով , նախապաշտ-
րութեաներով կամ յաճախ խիստ քիչ բանաւոր փափաք-

ներով , եւ մի միայն տղուն անժխտելի բարիքը ի նկատի առնուլ : Ու սկզբէն պիտի տեսնենք ո՞ր մենք եւս պարտինք աշալուրջ հոկել՝ այս նպատակին հասնելու համար : Այս միակ բարիքն է , ինչպէս ըսինք , առողջ վիճակ մը : Ուստի սկսինք զբաղիլ այն բանով որ կրնայ հայթայթել այս բարիքը , եւ քիչ ետքը պիտի տեսնենք զրական արդիւնքը այս ինամոց որուն առերեւոյթ փոքրկութիւնը քիչ չի նպատեր ապագայ բարեկիրթ զարգացման :

Խօսեցայ արդէն սերունդներու բարոյական եւ ֆիզիքական առողջութեան իրարմէ անրաժանելիութեան վրայ : Կ'աղաչեմ որ խորին ուշադրութիւնը ընծայէք այս խնդրոյն , քանզի գաստիարակութեան մէջ տեղի ունեցած սխալանաց մեծ մասը այս երկու վիճակին բաժանելիութեան գաղափարէն կը ծագի : Ուստի , թէ՛ մին ու թէ՛ միւսը պարտին հաւասարապէս խընամուկի ի ծննդենէ սկսեալ , բայց առաջին տարիներուն մէջ մարմինը խնամնելով է որ կը պատրաստուի առողջ հոգին : Առողջութեան չարիք հասցնող բան մը նկարագրին վրայ ալ ի գործ կը զնէ իր վնասակար աղքեցութիւնը , որով բարոյականը կ'ապականի :

Այսպէս , ակներեւ է որ եթէ փոքրիկ տղումը (չորս կամ վեց ամսական) բան մը կու տաք վասն զի կու լայ ու կ'աղաղակէ զայն ունենալու համար , այս միջոցը պիտի գործածէ ամէն անզամ որ բանի մը բաղձայ . եւ եթէ օր մը զրապէս չի կրնաք տալ ինչ որ կ'ուզէ , պիտի աղաղակէ մինչեւ հիւանդանալու , մինչեւ ձայնը մարելու , մինչեւ քունը եւ ախորժակը փախչելու աստիճան . իր փոքրիկ գէմքը բարկութենէն եւ զայրոյթէն անձանաչելի պիտի դառնայ , եւ իր

ջղային դրութիւնը զրգուելով՝ իր բարոյական բնութեան չար կողմը պիտի զարգանայ : Եթէ, ընդհակառակը, տղումը ոչ ըսելէ ետքը, տեղի չէք տար երբէք իր կամաց, զարմանալի կերպով շատ շուտ պիտի հասկնայ իր աղաղակին մասօգուտ ըլլալը, վասն զի ձեր անոր համար ցոյց տուած անյօղգողոց հաստատամտութիւնը պիտի արգելու զնա իր կամքը քալեցնելէ : Բաց աստի, մանկան կամքը շատ թոյլ ըլլալուն պատճառաւ, շատ զիւրին է զարձնել իր ուշազրութիւնը ուզած առարկայէն, բայց միշտ այն պայմանաւոր երբէք տեղի չի տրուի իր քմահաճոյից . առանց ասոր, անկարելոյն հասնելու իր հաստատամտութիւն ճշմարտապէս նշանաւոր է եւ կարի կանխահաս : Եթէ տեղի տրուի իր բաղձանաց եւ քմահաճոյից, ասով իր բարոյականի առաջին գաղափարը կը սղանորի, եւ չի զգար իր հանգստեան համար հարկաւոր բանը : Այս օրինակը ի մէջ բերի ապացուցանելու համար, ձեզ թէ դատախարակութիւնը ստուգիւ կը սկսի օրօրոցէն :

Սրարչագործութեան ամէն արարածներէն, մարդն իր ծննդեան ատեն ամենէն անկարողն է : Միւս բոլոր արարածք գէթ զիտեն ճարել իսկոյն իրենց մնունղը : Անոր համար, կենաց սկզբնաւորութենէր ի վեր, ամէն ինչ ուրիշն ճեռամբ հայթայթելի է : Նորածինը պիտի թողուէր իր մօր քով, որ եթէ մայրը չի ներկայէր անոր իր ստինքը, չի պիտի կրնար իսկ սողալ անկողնոյն մէկ անկիւնը՝ ցուրտէն պատսպարուելու համար, եւ այսպէս պիտի կորառուէր իր առաջին օրէն : Կը թուի թէ բնութիւնը այսպէս ուզած է, վասն զի, մարդկային արարածին

միւս բոլոր արարածոց վրայ իմացական գերազանցութիւնը ի հաշիւ առնելով, նա բաւական նախաձեռնութիւն ունի իր մէջ՝ բոլորովին իր զաւակներով զբաղելու համար : Մանկան առաջին պէտքը զուտ կենդանային է, բայց մեծ կարեւորութիւն ունի այս իրողութիւն թէ բանաւոր էակ մը զայնս կը մատակարարէ իրեն, եւ թէ բոլոր սրտով եւ խելքով ու խնամով պէտք է զայնս տալ իրեն :

Ահաւասիկ մերկ, դողդոջուն, տկար եւ սովազուկ մանուկը թշուառութեան այս աշխարհին մէջ, թշուառութիւն որ ստուգիւ պիտի երեւնայ նմա այն օր երբ նա աշխարհ կուգայ : Իր գոյութիւնը, այս վայրկենին մէջ, յոյժ անհաստատ է եւ հոգածու խնամոց կը կարօտի : Մարդկային սերնդեան կէսը կը մեռնի առաջին տարւոյն մէջ՝ տղիտութեան եւ խնամոց պակասութեան պատճառաւ : Երկիր մը որչափ աղքատ եւ նուազ քաղաքակիրթ է, հոն այնչափ բազմաթիւ է մահը : Եւրոպայի մէջ, ամենէն բազմաթիւ ծնունդ ունեցող երկիրը Ռուսիա է, եւ աղքատ դասուց մէջ յորս քսան զաւկի տէր մայրեր բացառութիւններ չեն, հազուադէպ է որ երեքէն կամ չորսէն աւելին հասնին առնական հասակի . յաճախ կը մեռնին ծաղիկ հասակնուն մէջ : Բարեկեցութեան աճմամբ եւ զարգացմամբ այս կոտորած կը նուազի, եւ եւս առաւել պիտի նուազէր : Եթէ նորածին մանկունք խնամուէին աւելի բանաւոր եղանակաւ : Բայց ամենէն քաղաքակիրթ երկրաց մէջ, ինչպէս Ֆրանսա, այս մասին զարմանալի անփութութիւն մը կը տիրէ : Մինչեւ իսկ լսած եմ այս մեծ կոտորածին պետութեան համար իբրեւ

մի առաւելութիւն հոչակուիլը : «Զօրաւորները միշայն առաւել երկարակեաց կը լինին , կ'ըսեն , եւ լաւագոյն է տկարներուն անհետացումը տեսնել :» Այս տեսակէտը կը նկատեմ իրբեւ բացարձակ յիմարական եւ հիմնեալ ոչ թէ զաղափարի մը վրայ , այլ այն խարէական երեւոյթներէն միոյն վրայ որք օրէնք դարձած են յաճախ մարդկային սկզբանց մէջ : Նախ , վասն զի երբ տղայ մը տկար կը թուի իր կենաց սկզբնաւորութեան մէջ , ասիկայ պատճառ մը չէ ըստ ամենայնի որովէս զի նա հիւանդու եւ վատառողջ ըլլայ իր կենաց մնացեալ աւուրց մէջ . երկրորդ , անոնք որ իրենց մանկութեան դժնդակ պայմանաց կը դիմանան , միշտ հեռի են առողջակազմ եւ զօրեղ էակներ ըլլալէ :

Յաճախ թշուառ կեանք մը կ'անցընեն մինչեւ որոշեալ քանի մը տարի , եւ իրենց ետեւէն վատառողջ զաւակներ կը թողուն : Թշուառութեան այս ընձիւզներ կարելցութեան արժանի երեւոյթ մը կ'ընծայեն . ուժոյ ընդհանուր նուազում մը կը նըշմարուի անոնց վրայ որք դիմացած են եւ որք պարտէին լինել հակայներ , սահմանուած՝ արտազրելու զօրեղ եւ բարեկազմ մանուկներ : Տարափոխիկ հիւանդութիւնք միայն հիւանդու մանկանց վրայ յարձակելէ հեռի են . յաճախ զօրեզները զո՞ն կ'ըլլան այսպիսի հիւանդութեանց , մինչդեռ ուրիշներ կը մնան եւ վատապարտուած են ցաւալի կացութեան մը : Ի չնորհս իննամուտ հոգածութեանց , մանուկներ փրկուած են մահուընէ որ կը թուէր սպառնալ օրօրոցէն ի վեր եւ որք եղած են էակներ այնքան յաղթակազմ որքան նշանաւոր . առ այս ապացոյցք կը վխտան :

Գաղղիացի մեծ բանաստեղծը , Վիքթօր Իւկօ , որ
մեռաւ 83 տարեկան , յետ այնպիսի ծերութենէ մը
որ բացարձակապէս չենթարկեց զնա չարաշուք
հիւանդութեան մը եւ որ մեր երիտասարդութեան
յաճախ չի կրցած վայելած գեղածիծաղ երեւոյթը
ունէր , իր ծննդեան ժամանակ մեռած յայտարա-
րուած էր , եւ իր առաջին ամիսները իր մայրը կը
մաքառէր ժամ առ ժամ անխուսափելի թուող վախ-
ճանի մը դէմ : Պատմութիւնը այս կարգի անթիւ օ-
րինակներով լի է : Պարտինք ուրեմն մեծ խնամք
տանիլ իւրաքանչիւր նորածին մանկան , քանզի նո-
րա առջեւ ճշմարտապէս զմեզ կը գտնենք հանդէպ
մեծ խորհուրդի մը , ամենէն ուշագրաւ անհունի
մը : Ի՞նչ պիտի ըլլայ այս ապագայ էակը : Զենք
գիտեր զայս : Զի խնայենք , չի զլանանք ուրեմն
բան մը զայն պահպանելու համար , քանզի թերեւս
սա է մին անոնցմէ որոց յիշատակը պիտի օրհնէ ա-
պագան :

Այն միակ պայմանը որով գրեթէ բաղձալի պի-
տի ըլլար որ մանկունք չապրին , թոքախտաւոր
կամ դինեմոլ ծնողքներէ ծնանելնին է : Զեմ մաղ-
թեր որ այսպիսի զաւակներ ունենաք խնամե-
միք . արդէն չի պիտի կրնայիք ընել զայս : Այս մա-
սին պէտք է քաջ եւ ճարտար բժիշկներու հակողու-
թիւնը , եւ մինչեւ ցարդ այս ժառանգական ձըգտ-
մունք հզօրագոյն եղած են բոլոր այն միջոցներէ
զոր Բժշկութիւնը գծած է անոր դէմ մարտնչելու
համար : Թոքախտը այն հիւանդութիւնն է որ մե-
ծամեծ նախաճիրներ կը գործէ աշխարհիս մէջ . քանզի
այս ախտ բովանդակ սերունդը կը լափէ : Դինեմո-

լաց գալով , վիճակագրութիւնք կը հաստատեն թէ
նոցա սերունդք կը կազմեն մեծագոյն մասը ոճրա-
գործներու , լուսնոտաներու և խելագարներու : Այս
ամէն աղէտից տակաւ նուազումը կը տեսնուի ա'յն
ատեն , երբ մարդիկ կը կրթուին այնպիսի եղանակաւ
որ այլեւս արգեցութեան մէջ չեն փնտռեր այն հա-
ճոյքը որ մարդս անդաններու կը հաւասարեցնէ եւ
զոր կը սիրեն անոր մէջ գանել :

Թոքախտաւորութեան եւ ալքոհոլականութեան
այս խնդիրը ի մէջ բերի , որպէս զի զօրաւոր փաս-
տերով ապացուցած ըլլամ այն գերը զոր կը կատարէ
ժառանգութիւնը մանկան բնութեան մէջ : Ժառան-
գութիւնը կայ եւ կը տիրէ բովանդակ արարչագոր-
ծութեան մէջ , եւ այս է այն միակ օրէնքը որով
կարելի է բացատրել այն խորհուրդը թէ խնձորենին
միշտ խնձորներ կ'արտադրէ , մատակ ձի մը՝ քու-
ռակներ , կով մը՝ հորթեր , եւայն , եւ թէ խրա-
քանչիւր սեռի զանազանութիւն վերատին կ'արտադ-
րուի իր սերնդոց մէջ : Մարդկային էակին մէջ ա-
ռաւել զժուար է զիանալ այս օրինաց անփոփոխու-
թիւնը , քանզի առաւել կնճռոտ է քան ամէն ինչ որ
գոյութիւն ունի անկէ զուրս աշխարհիս վրայ , քանզի
ժառանգական ազդեցութեանց թիւը կարի մեծ է ի
նմա : Մարդը , զոր օրինակ , ունի , ինչ որ կենզանիք
ամբողջապէս չունին , աւանդութիւնը , այսինքն յի-
շատակութիւնը որ կը հաղորդուի խօսքով , իրմէ ա-
ռաջ ապրած անձանց գէպքերուն եւ գործերուն ,
եւ , հետեւաբար , իր անձնաւորութիւնը կազմող
պատճառներուն քանակութիւնը անթուելի է : Շատ
զիւրին է մեզ հասկնալ թէ թէունէօվի շունը ի՞նչ-

պէս այնպիսի՝ կերպով կը նմանի իր ծնողաց, որ հազիւ իր դարձացման վիճակին կը համնի, անոնց նման կ'ըլլայ բոլոր գլխաւոր բաներու մէջ, — ճաշակի, սովորութեանց, երեւոյթից մէջ, եւայլն ասոր պատճառն այն է որ եթէ իր ծնողքը կրցած են անոր սովորեցնել իր թէու-նէօվի կացութեան համար հարկաւոր բաները, ասկէ տարբեր բան մը չեն կրցած բնաւ հաղորդել անոր, եւ կը լքեն զայն իրենցմէ անկախ ապրելու տրամադրութիւնը ստացածին պէս, գրեթէ միայն անոնք խակ չի յիշելով թէ ունեցած են ծնողներ : Անոնց իշողութեան, տպաւորութեանց, յիշատակութեանց շրջանակը կարի սահմանափակ է, եւ այն միակ բանը որ կ'ապացուցանէ մարդոց (քանզի կենդանիք այս մասին անհոգ են) թէ ձի մը կամ շուն մը կը սերի այս կամ այն հոչակաւոր նախնիքէն, բիծ մը, ձեւ մը, վազուածքի կամ որսալու բնազդ մ'է որ կուգայ հաստատել մեզ գոյութիւնը, կենդանեաց մէջ, ժառանգական մասնաւորութեանց եւ հանգամանաց : Բայց մարդուն համար իրաց վիճակը կը տարբերի : Իւրաքանչիւր ոք ունի հայր մը եւ մայր մը նկարագրով, առողջութեամբ եւ երեւոյթով խիստ տարբեր . միոյն եւ միւսին բնութենէն ձեր վրայ հետքեր կը նշմարուին : Եւ ձեր ծնողաց վրայ եւս կը գտնուին իրենց ծնողաց այս կրկին ազգեցութիւնը, եւ այս պէս յաջորդաբար եւ շարունակաբար : Տեսէք ո՛ք քան ուղղակի եւ յաճախ հակառակ ազգեցութեանց արդիւնքն էք դուք : Ուստի բացարձակապէս անկարելի է տղու մը բոլոր մասնաւորութեանց ծագումը գտնել, քանզի այսպիսի աշխատութիւն մը միւ-

ակ մարդու մը կարողութենէն վեր պիտի ըլլար բայց
ինչ որ ըլլան այն պակասութիւնները , մասնաւու-
թութիւններն ու յատկութիւնները զորս դուք կը
գտնէք , համոզուեցէք որ այս ամէնը ժառանգական
է եւ իր գոյութեան պատճառը կը գտնուի այն նախ-
նաց մէջ որոցմէ սերած է : Այս սկզբունքը հա-
սուն կերպով եւ կատարեալ լրջամտութեամբ ուսում-
նասիրուելով եւ քննուելով ձեզի զիսաւոր օգնու-
թիւն մը պիտի ըլլայ ամէն տեսակ պակասութիւն-
ներէ խոյս տալու եւ նկարագիրներու մէջ երեւցած
այս բոլոր տարբերութիւնները իրրեւ անձնական
կամ ժառանգական անկանոնութիւններ չի նկատե-
լու համար :

Ծնողաց եւ մինչեւ խոկ մերձաւոր նախանարց
նկարագրին եւ առողջութեան նկատմամբ քանի մը
տեղեկութիւն ստանալ շատ զիւրին է եւ մեծապէս օգ-
տակար : Եթէ զաւակ ունիք , ձեզի կը յանձնարա-
րեմ որ լաւ ճանչնաք ինքզինքնիդ զիսնալու հա-
մար թէ հաւանօրէն ի՞նչ ունիք ձեր մէջ զսպելիք
կամ քաջալերելիք : Անկեղծօրէն ուսումնասիրելով
ձեր բուն բնութիւնը , պիտի տեսնէք թէ որչափ
կնճռոտ է այն , եւ իրաքանչիւր անհասի համար ալ
այս այսպէս է . զանազան տրամադրութեանց զան-
գուածներ իրարու կը բաղսին , եւ եթէ ոչ ոք կա-
րող է ըսել թէ բոլորովին բարի է , ապա ուրեմն ոչ
ոք կարող է ինքզինքը կատարելապէս չար յայ-
տարարել : Եւ , ըստ ինքեան , իրարու համանը-
ման տրամադրութեան այս զանգուածը բարեպա-
տեհ պարագայ մը կ'ընծայէ . կը թոյլատրէ յուսալ
թէ , խոհեմութեամբ վարուելով , ասոնց մէջ մշա-

կելի բարի տրամադրութիւններ պիտի գտնուին
միշտ : Այսպէս պիտի յաջողինք շատ չերկնչիլ այն
բանին զոր պիտի տեսնենք մեզնէ փոքրիկ այս էա-
կաց մէջ , եւ պիտի յուսանք թէ բարի ինչ որ կայ ,
պիտի զարգանայ իսկ :

Սկսինք ուրեմն , ամէն բանէ առաջ , նորածին
մանկան խում տանիլ ամենապարզ բայց խիստ ման-
րախոյզ կերպով , որ հարկաւոր ըլլայ իր պահպա-
նութեան : Ի սկզբան նա միշտ կը մսի , քանզի նա
ջերմութեան վառարանէ մը դուրս կ'ելլէ եւ մին-
չեւ իսկ ջերմ սենեակի մը բազդատական ցուրտին
տակաւ առ տակաւ կը վարժուի : Ամէն ինչ փափուկ
եւ տկար է ի նմա - անդամները , գործարանները եւ
մորթը : Աշխարհ եկած պահուն արձակած ճիշերը
ուժոյ նշան մը եւ ընտիր կրթութիւն մըն են թոքերը
վարժեցնելու համար իրենց նոր պաշտօնավարու-
թեան , օդ ներշնչելու համար առանց անկէ տառա-
պելու : Եթէ կը ծնի կարի փափուկ , պէտք չէ վա-
րանիլ արուեստական ջերմութեան դիմելէ , քանզի
իր կեանքը ջերմութենէ կախեալ է : Ես իսկ տե-
սած եմ , իմ ընտանեաց մէջ , երկու երկուորեակ-
ներ չափազանց փափկակազմ , որք քիչ ատենէն
յոյժ զօրել եղած են . ոոքա եթէ այս ուղղութեամբ
զարգացան զօրացան , ճարտար բժիշկի մը շնորհիւ
էր որ Ռէօմիւրի երեսուն աստիճան ջրով լի շիշերով
շրջապատեց զանոնք , մինչդեռ սենեկին ջերմութեան
աստիճանն էր 16 . զէմքերնին բաց թողուեցաւ ,
որպէս զի վարժուին չուտով բնական օդ չնչելու :
Այս զրութիւնը վեց շաբաթ շարունակուեցաւ , յե-
տոյ ջրոյն ջերմութեան աստիճանը նուազեցնել

սկսուեցաւ . բայց մինչեւ գրեթէ երկու տարի մի-
այն տաք ջրով լոգացուեցան , բան մը որ չարգիլեց
զանոնք երբէք , քիչ յետոյ , վարժուելու պաղ
ջրոյ եւ միշտ զայն գործածելու :

Ուրեմն անիրաւութիւն է աճապարել դժուարին
բաներու վարժեցնել նորածին մանուկը . ի սկզբան
ուժ տանք նմա , եւ նա պիտի կրնայ ամէն բանի դի-
մանալ : Ոչինչ այնքան դիւրին եւ այնքան անհրա-
ժեշտ է որքան ջերմութիւն մատակարարել նմա :

Դժբաղգաբար գոյութեան միւս պայմանը , որ
ոչ նուազ անհրաժեշտ է , առաւել դժուար է ի գործ
դնել . մաքուր եւ թարմ օդը մի քանի հազուագիւտ
առանձնաշնորհեալներու յատուկ է : Դրեթէ բովան-
դակ մարդկային սեռը առողջութեան ամենէն աւելի
հակառակ պատճառներով ապականեալ օդի մը մէջ
ապրելու ենթարկեալ է : Դրամի չգոյութիւնը զգա-
լի է մանաւանդ այն պարագային մէջ որ կը զրկէ
օդէ , միջավայրէ եւ լոյսէ , բայց անհօգութիւնը
թշուառութեան չափ պատճառ է այս չարեաց : Ա-
մենէն կենսական պիտոյից նկատմամբ տիրած տղի-
տութեան միայն կարելի է վերագրել աղքատ դա-
սուց իրենց միջավայրին մէջ գայթակղեցուցիչ թու-
նաւորումը , միջավայր մը որ ապականութեան ճշշ-
մարիտ վառարան մըն է ուր հիւանդութեան սկզբնա-
ւորութիւնք կը զարգանան իրենց համար մասնա-
ւորապէս նպաստաւոր պայմանաց մէջ : Բայց՝ ք
ուրեմն պատուհանները : Մաքուր օդը , թող ըլլայ
մինչեւ իսկ ցուրտ , չի պատճառեր բնաւ չարիք ,
բաւական է որ մարմինը ըստ բաւականին ծածկուած
ըլլայ : Մաքուր բայց ցրտին օդը , ընդհակառակը ,

մեծ բարերարը եւ մինչեւ իսկ առողջութիւնն է մարդուն : Վարագոյցները , գորգերը որ լաւագոյն կերպով լուացուած եւ փոշիներէն մաքրուած չեն , հեւանդութեանց ազրիւր կ'ըլլան — ուրեմն անհետացընենք զանոնք — լաւագոյն է , բազում պարագայից մէջ , անհետացնել քան մաքրել զայնս :

Դիւզօրէից մէջ մանկանց կոտորածը այնքան մեծ է որքան քաղաքաց մէջ , ակնկալելի էր որ նուազը ըլլար , սակայն ափսո՞ս . միեւնոյն թշնամիք , ցուրտը մէկ կողմէն , ապականեալ օղը միւս կողմէն , կը հալածեն զանոնք : Երբ վեց կամ եօթը անձերէ բազկացեալ ընտանիք մը ցուրտ կլիմաներու տակ կ'ապրի միեւնոյն յարկին ներքեւ ուր օղը ընաւ նորոգուած չէ ամբոջ ամիսներ , զարմանալի չէ ուրեմն որ ժանտախտք յարձակին այս նախապատրաստական որսերու վրայ , եւ նախեւառաջ կրտսերագոյնը , այսինքն տկարագոյնը , մատնուի անոր ճիրաններուն : Բայց հոն իսկ ուր դիւրակեցութիւնը ուրիշ զրութեան մը հետեւելու պիտի թոյլատրէր , մարդիկ հեռի են ըստ բաւականին հակելէ տղայոց սենեակին մէջ գտնուած օղին վիճակին , եւ սակայն չի պիտի վարանիմ վերջացնել այս զլուխը ըսելով թէ մարմնոյն ջերմութիւնը եւ օղին մաքրութիւնը պիտի փրկէին բազում մանուկներ զորս բժիշկներ չեն կարող փրկել հիւանդութեան պարագային մէջ :

Եթէ կարելի ըլլար համոզել մարդիկ թէ հիւանդութեանց առաջքն առնուլ առաւել դիւրին է քան զայնս բժշկել , չի պիտի զլացուէր ուսուցանել ամենուն առողջաբանութեան այս պարզ օրէնքները : Այս առաջին խնամոց մասին տիրած ազիտութիւնը

կրնայ պատճառել մահուընէ աւելի մնծ չարիք մը ,
այն է մանուկն ախտաժէտ ընել իր բովանդակ երիտա-
սարդութեան մէջ , թերեւս իր բոլոր կենաց մէջ ,
եւ ստուգիւ ապրիլը չէ որ բարերազդութիւն մ'է ,
այլ՝ առողջ ըլլալը : Այս բարիքը տալ մանկան , ճշմա-
րիտ բարիք մը ընել է անորու Ասոր համար իր ծննդե-
նէն ի վեր աշխատելու է . լաւագոյն է այս բարե-
րարութիւնը ընել անոր քան կտակել դրամ որ վա-
տառողջութիւնը բնաւ չէ կարող դարմանել : Եւ մի
կարծէք թէ շատ դրամ պէտք պիտի ըլլայ ձեզ այն
խնամոց համար զորս կը յանձնարարեմ ձեզ : Ծնդ-
հանրապէս , դրամը կարծուածին չափ ամենակա-
րող չէ . հարկաւոր եղող կենսական պայմանաց ծա-
նօթութիւն , սէր եւ խնամք . ահա ասո՞նք են անհրա-
ժեշտը : Օդը վերանորոգել , սենեակը մաքրել , ա-
ղէտալի ժանտահոտութիւններ արձակող առարկա-
ները անկէ անհետացնելը , ծանր ծախուց չի կարօ-
տիր , այլ ծախքերու , մինչեւ իսկ մեծամեծ ծախ-
քերու , դուռը կը փակէ :



Բ.

ՍՅՈՒՆԻ. — ՔՌԱՆ. — Առաջին տարուան
հանդերձեղէն :

Զերմութիւն եւ օգ . առաջին տարիներուն մէջ
մանկան այս երկու լաւագոյն պահապան եւ պաշտ-
պաններ երբ կը հայթայթուին անոր , պէտք է ան-
միջապէս յետոյ խորհիլ իր սնունդին վրայ :

Այն միակ ուստեսան որ կատարելապէս կը յար-
մարի անոր՝ մայրական կաթն է : Ամէն կին որ , ա-
ռանց բացարձակ հարկադրանաց , այս բնական ծա-
ռայութենէն խոյս կու տայ , մեծ վնաս կը պատճառէ
իր զաւկին : Ամէն պարագայի մէջ կնոջ կաթը միշտ
նախընտրելի է ամէն պիպլուններու եւ իրբեւ
սնունդ ծառայող ուրիշ բոլոր արուեստական միջոց-
ներու , եւ այս միջոցներ կը պահանջեն մանրա-
մասն ինսամք որ շատ դժուար է ի գործ դնել ,
մինչդեռ մօր կաթը ջերմութեան բնական պայմա-
նաց մէջ կը գտնուի , եւ , բաց աստի , յատկու-
թիւն մը ունի որ համաձայն է պիտոյից այն էակին
որ ծնած է : Յայսնի է որ եթէ մայրը կարի հի-
ւանդոտ է կամ բաւական քանակութեամբ կաթ
չունի , պէտք չէ թոյլ տալ անոր որ մանուկը սը-
նուցանել շարունակէ , բայց գրեթէ կրնայ ընել
զայս գէթ առաջին ժամանակաց մէջ , եւ եթէ բը-

Ժիշկ մը խնզիրը անկարելի յայտարարէ , առողջաւկաղմ ստնտու մը փնտռելու է : Մանաւանդ , պէտք չէ մանուկը հեռի պահել ստնտուէն . այս պատճառաւ է որ ի Գաղղիա հազարաւոր տղայք կը կորսուին ամէն տարի : Տանը մէջ բնակելու պայմանաւ լաւ ստնտու մը գանելու բացարձակ անկարելիութեան պարագային մէջ , հարկ է դիմել արուեստական դիեցման , որ միշտ գովելի միջոց մը չէ նկատուած գիտականապէս : Առաջին աստիճանի մաքրութիւն , ժամերու խիստ ճշգութիւն , միշտ հաւասար բարեխասոնութիւն , են այնպիսի պարագաներ որոց հսկողութիւնը պէտք է գիշեր եւ ցերեկ , եւ գիտելի է որ յաճախ շատ դժուար է կատարելու յաջողիլ այս ամէն պայմանները , քանզի այս մասին բարեկեցութիւնը միայն կրնայ հայթայթել անհրաժեշտ խնամքը : Թող ամէն մայր ջանայ ուրեմն իր գաւկին ստնտուն ինք ըլլալու : Եթէ կաթնտուութիւնը մեր օրերը տաժանելի բան մը դարձած է , պատճառն այն է որ մանուկը սնուցանելու գործին մէջ բանաւոր եւ պատշաճ եղանակ մը ընդունուած չէ : Բաց ի առաջին տարիներէն երբ մանկան տկարութիւնը կ'արգիլէ զինքը երբեմն ըստ բաւականին կաթ ծծել կարենալէ , պէտք չէ կաթ տալ ամէն երկու ժամէն աւելի յաճախակի , ոչ խոկ երբէք արթնցնել զնա գիշերանց կաթ տալու համար : «Այն որ կը քնանայ , կը ճաշէ ,» սկզբունքը կը յարմարի այս տարիիքին : Շուտ շուտ պէտք չէ անոր կաթ տալ (բաց ի հիւանդութեան պարագայէն) գիշերուան մէջ — կէս գիշերէն մինչեւ ժամը եօթը (Բ.Ե.) : Մայր մը կամ ստնտու մը պարտի ինքն ալ քնանալ . զայս կը

պահանջեն իր շահը, ինչպէս նաեւ մանկան շահը։ Միշտ յոդնած եւ բատ բաւականին քնանալէ զրկուած մօր մը կաթը առողջութեան վնասակար եւ անմարսելի կը դառնայ։ Բնութիւնը երբէք չէ ուղած կաթնառութիւնը մօր համար ուժաթափութեան աղբիւր ընել։ Ընդհակառակը, կանոնաւոր կաթնառութիւնը նպաստաւոր է առողջութեան, քանի որ բոլորովին բնական բան մըն է սա։ Խնդիրը նորածին մանուկը միայն սնուցանելուն եւ խնամելուն մէջ չի կայանար։ Մանուկը քիչ ատենէն ուրիշ կերպով պիտի կարօտի իր մօր, եւ բաց աստի ինք մէկ հատիկ չէ։ հաւանական է որ ուրիշ եղբայներ աղ պիտի ունենայ։ ամէնքն ալ կը կարօտին իրենց մօր Ռւստի մօր մը համար գերագոյն պարտաւորութիւն մըն է հոգ տանիլ իր առողջութեան, եւ անձնութիւնութեան սխալ գաղափարներով վտանգի չենթարկել իր առողջութիւնը։ Ահաւասիկ ճշմարիտ բանականութիւնը ձեւական զիւրագորովութեան տեղ դնելու եւ մանկան լացի ճիշերը հանգարտեցընելու համար ամէն բոպէ անոր ծիծ տալու տենջանաց դիմագրաւելու առիթը։

Մանկան ջերմութիւն, օդ եւ մնունդ հայթայթելով հանդերձ պէտք է նաեւ հոգ տանիլ անոր մաքրութեան։ Պէտք չէ երբէք զայն թողուլ աղտոտ կամ խոնաւ հանդերձներու մէջ, եւ երբ առաջին տարիներէ ի վեր զանոնք անմիջապէս փոխելու մասին բնաւ անհոգութիւն տեղի ունեցած չէ, ոչ թէ միայն տղան իսկ աղաղակ պիտի բառնայ այս խնամքը պահանջելու համար, այլ իր այս նկատմամբ դաստիարակութիւնը զիւրացած պիտի

ըլլայ , մինչդեռ այս տեսակէտով անխնամ թողուած մանուկը չար սովորութիւններէ ուղղել յոյժ գժուարին է յաճախի : Անոր գէմ յայնժամ ամէն ոք կը գանգատի , եւ մաքրութեան հետեւելու համար խրատներ եւ յորդորներ կարդալ հարկ կ'ըլլայ . սակայն այս պակասութեանց պատճառը նոյն իսկ իրենք են Հանապազօրեայ լոգանքը օգտակար է , բայց այս մասին խորին ուշադրութիւն պէտք է ընծայել՝ պաղառութենէ զերծ մնալու համար , եւ ասոր համար պիտի յանձնարարեմ՝ լոգացումէն անմիջապէս ետքը՝ ասուեակով մը ամբողջ մարմինը շփել մեղմիկ կերպով , մինչեւ որ բոլոր մարմինը կարմրի : Ընդհանրապէս խօսելով , պիտի ըսեմ որ շփումը ամէն հասակի եւ տարիքի համար զեղօրէից լաւագոյնն է , մանաւանդ մանկութեան համար : Հարբուխ , խոցտուկ , մանկանց համար հասարակ եղող այս բոլոր թեթեւ հիւանդութիւնք կրնան դարմանուիլ չոր ասուեակով շփուելով մանկանց մարմինը : Ամէն հիւանդութիւնք կը սկսին ներքին ջերմութեան աստիճանին նուազմամբ . շփմամբ՝ արեան շրջանը իր արագութիւնը կը վերստանայ . արդ , զիտէք արդէն որ ջերմութիւն եւ շարժում միեւնոյն բաներն են . կը հասկընաք ուրինմն թէ այս միջոցը , դարմանողական ըլլայ կամ նախազգուշական , որքան օգտակար է եւ միանդամայն պարզ : Պազ ջրով լուացումը սկսուելուն պէս , որ տեղի պէտք չէ ունենայ ուրիշ անգամ բայց միայն տղուն առաջին անգամ ակռայ հանելէն ետքը եւ եթէ մանուկը բոլորովին զօրեղ է , անհրաժեշտ է ամբողջ մարմինը շփել խոզանակով մը եւ կամ հասակեկ կերպասով մը :

Ինչ որ ալ ըլլան նորածին մանկան հազցուած հանդերձք , պէտք է մանաւանդ որ ըլլան լայն, թե՛թեւ , գիւրատար , եւ տղուն շարժումները գժուարութեան չի մատնեն : Մանուկը պէտք է որ կարենայ շարժել բազուկները եւ անդամները որչափ որ կ'ուղէ . իր մկանունք եւ անդամք այսպէս կը գօրանան բնական կերպով , եւ զանոնք կապոցներու մէջ պարփակելու դաղափարը սխալ է եւ վանդաւոր , վասն զի այս կերպով արեան շրջանի կանոնաւորութիւնը կը խանգարի , եւ այսպէս տղան զօրանալու միակ բնական միջոցէն կը զբկուի : Մանուկը խանձարուրներով սեղմելու դրութիւնն եւս , որ ստորին դասուց մէջ հասարակ է , եւ որ ամէն ուրեք տարածուած է վերջին տարիներս , ինչպէս վերջին դարուց պատկերները կը ներկայեն մեզ , վեսակար է , վասն զի անդամները անով կը տկարանան եւ կը տձեւնան : Մանկանց արգուզարդը եւս պարտի պարզ ըլլալ . աւելորդ եւ անպէտ է անոնց նորելուկ հանդերձներ հագցնել : Այսպիսի հանդերձներ՝ հնարուած են մեր սնամիառութիւնը յագեցնելու համար : Հին ճերմակեղէնէ փոքրիկ շապիկ մը , կողերուն վրայ մէկ կամ երկու ժապաւէններով կցուած ասուեակէ լայն եւ երկայն վերաբկու մը որ կընայ գիւրաւ հանուիլ եւ հագցուիլ , սրունքներուն ազատ շարժումը չի խափանող լայն վարտիք մը . ասոնք են մանկան համար ամենէն հաճելի եւ օգտակար արգուզարդը : Օրօրոցին մէջ յառւչուէ մեծկակ ասուի մը որ խոնաւութեան մինչեւ անկողնոյն մէջ թափանցելը կ'արգիլէ , մանկան անդորրութեան ձմարտապէս հարկաւոր միջոցներէն պիտանեգոյնն է :

Եթէ սենեակը չափէն աւելի խոնաւ չէ , տղուն գը-
լուխը բաց պահելու շուտ վարժեցնել կարելի է . ա-
մէն պարագայի մէջ , տղուն գլուխը մարմնոյն
միւս մասերէն նուազ ծածկուած ըլլալու է միշտ,
քանզի արիւնը դիւրաւ հոն կը բարձրանայ երբ մա-
նուկը ճչել կը սկսի : Սակայն նախընտրելի է՝ առա-
ջին ամիսներուն մէջ՝ հին կտաւէ թեթեւ գտակ մը
որ արգիլէ ականջները իրենց վրայ ծալլուելէ երբ
պառկած է անոնցմէ միոյն վրայ եւ այս կերպով չըղ-
ջիկի (հինչ բուշ) թեւերու նմանելէ . պարագայ
մը որ յոյժ անհաճոյ է եւ որ թերեւս լսելեաց եւ մին-
չեւ իսկ ըղեղին զարգացման վրայ աննպաստ աղեց-
ցութիւն մը ունի : Լսելեաց եւ տեսանելնաց գործա-
րանք ծննդեան ատեն յոյժ փափուկ են . ուստի պէտք
է տակաւ առ տակաւ պատրաստել զանոնք իրենց
պաշտօնավարութեան : Լոռութիւն պարտի տիրել
նորածին մանկան շուրջը մանաւանդ քնոյ ժամա-
նակ , ինչպէս նաեւ կատարեալ մթութիւն : Պէտք
է զգոյշ կենալ անոր հետ խօսելէ , մինչեւ իսկ մեղ-
միկ , եւ շնորհ մը չի յարուցանել իր ներկայու-
թեան՝ երբ կը քնանայ : Առ նուազն մէկ ամիս իր
զգայարանք ոչ աղմուկի կը դիմանան եւ ոչ լուսոյ:
Եթէ տանը մէջ իրմէ զատ ուրիշ մանուկներ կան ,
պէտք չէ անոնց մէջ թողուլ , վասն զի անոնք ան-
պատճառ կը խափանեն մանկան հանգիստը : Լաւա-
գոյն է թողուլ իր մօր հետ որ նա եւս , այս մի-
ջոցներուն մէջ , պէտք ունի լոռութեան , մթու-
թեան եւ մանաւանդ բացարձակ հանգստութեան :
Խելացի կինը այսպէս ինքզինք կը խնամէ առ նուազն
երբ շաբաթ , եւ այս ժամանակէն յետոյ է որ կա-

րելի է նորածին մանուկը աստիճան առ աստիճան վարժեցնել կենաց սովորական պայմանաց, բայց աղմուկ յարուցանելի միշտ զգուշանալու է :

Իր բնազդական առաջին շարժումն է որոնել լոյսը, որ պէտք չէ երբեք գտնուի անոր ետին, կամ կողմնակի դիրքի մը մէջ, որպէս զի շիւ չըլւայ: Քնացած պահուն, զլուխը միշտ լուսոյ կողմը դարձնելու է, սակայն վարագուրով եւ կամ ասոր նման արգելիչ միջոցով մը լուսոյ սաստկութիւնը մեղմելու հոգ տանելու է: Եթէ չափէն տւելի պայծառ լոյս մը կը ճառայթէ անոր զիմաց, այս պատճառաւ կրնայ քիչ տաենէն կորուսանել իր տեսողութիւնը, թէպէտեւ այս դժբաղդութիւնը, որ խիստ շատ յաճախաղէպ է առաջին տարիներուն մէջ, յառաջ կու գայ ստէպ պաղառութենէ կամ անմաքրութենէ: Եթէ մանկան աչքերը լաւ չի լուացուին, մարմնոյ ապականեալ հիւթք հոն կը ժողվուին, եւ գոյզն պաղէ մը բորբոքում, ապա աչքի ցաւ մը, երեւան կ'ելլէ, եւ ահա այսպէս կուրութիւնը կը յաջորդէ, պարագայ մը որ աղքատ դասուց մէջ յաճախաղէպ է:

Անկողինը կամ օրօրոցը պարտի գետնէն բաւական բարձր ըլլալ պաղ օղի հոսանքներէն զերծ մընալու համար. վասն զի օգի պաղ հոսանքը միշտ աւելի սաստիկ է սենեակին ցած մասին վրայ, որովհետեւ տաք օղը ձգտում մը ունի բարձրանալու, այնպէս որ ամենէն պաղ մասն այն է որ տախտակամածին անմիջապէս մօտ է: Այս մասին համոզուելու համար պառկեցէք գետնին վրայ եւ ապա միեւնոյն սենեակին մէջ բարձր դիրքի մը վրայ: Ոչ

թէ վարագոյրներ այլ տաք ծածկոյթներ զայն շրջապատելու են ամէն կողմէ : Բացարձակապէս կը հակառակիմ օրորոցներուն եւ ամէն տեսակ չարժման՝ քնացնելու համար մանուկը : Դիտեմ որ ստնտումը եւ , հազուազիւա բացառութեամբ , աղախին մը կամ մայր մը չի կայ որ այս մասին ինծի հետ համակարծիք ըլլայ : Սակայն ասիկայ չարգիլեր իրաւունք ունենալ պահանջելէ , եւ զայս եւս կարող եմ ապացուցանել , քանզի համոզուած եմ որ օրորելու այս բանաստեղծական բառը իրականապէս վայրի գործողութիւն մը կը նշանակէ՝ մանկական առողջապահութեան մեծապէս աղէտարեր :

Գործարանական բոլոր մասերէն աւելի զիւրագրգիռ է ըղեղը , վասն զի այս տարիքին մէջ տկարագոյնն է . տարապայման կերպով փափուկ է : Մի մոռնաք նաեւ թէ առաջին տարիներուն մէջ գանկը իսկ հաստատուն կերպով փակցուած չէ , եւ թէ միայն կոճիկներն են որ անոր երկու մասերը միացուցած են : Այս շրջանին մէջ ըղեղը տակաւին կոչուած չէ իր պաշտօնը վարել այլապէս , բայց միայն քնազգօրէն : Միւս կողմէ , այս գործարանը ապագային մէջ բոլոր գործարաններէն աւելի կարեւորը պիտի ըլլայ , վասն զի , գաղափարաց , զգացմանց եւ կրից ծագման մթին խնդիրներուն վրայ վիճարանութեանց մէջ առանց մտնելու , գիտենք զայն դրականապէս . ըղեղին հիւանդութեան պատճառաւ է որ կը կորուսանէ մարդ իր բոլոր էութիւնը , գոյսութիւնը կազմող բանը — զգալու , դատելու , յիշելու , երեւակայելու կարողութիւնը , մինչեւ իսկ հանձարը : Այս գործիքը անգամ մը խանգարուածին

պէս , այս ամէն կարողութիւն կը մեռնի , եւ մեր միայն կենդանային կեանքը կը շարունակէ , առանց հաճոյից , առանց ո եւէ նպատակի , վերջապէս ահարկու վիճակի մը մէջ . այսինքն զիակ մը որ կ'ուտէ , կը քնանայ եւ կը շարժի : Ուստի մեր բոլոր կազմութեան մէջ ոչինչ այնքան խնամոց կարօտ է որքան ջղային կեղրոնք . անհատին մէջ ըղեղին ունեցած զերը լաւ ըմբռնելով , ակներեւ է որ պարտիք զիանալ ամէն բան որ ըղեղը խանգարելու , վրդովելու բնութիւն մը ունի : Ուրեմն մանուկը իր բազկաց վրայ կամ իր օրօրոցին մէջ օրօրելու նպատակաւ ժամերով տեղի ունեցած անդադար ցնցմունք կը ներգործեն ուղղակի ըղեղին վրայ եւ մինչեւ թըմբութեան աստիճան զայն կը յոզնեցնեն : Սակայն յայտնի է որ այս թմրութիւնը թմրեցուցիչ զեղերու պէս հաճելի զգացում մը յառաջ կը բերէ , զեղեր որք ուրիշ բան չեն բայց միայն տեսակ մը թոյներ , եւ մանուկը անզամ մը այս հաճոյքին համը առածին պէս , նորէն կ'ուղէ՝ մեծ վլվլուկ յարուցանելով : Ուստի , տկարամտութեամբ կամ կարծեցեալ գթասրտութեամբ , մի՛ գործածէք այս կեղծ հանդարաեցուցիչը , բայց երբ մանկիկը կ'աղաղակէ փոխանակ ննջելու , ապահով եղիք որ ո եւէ անհանդստութիւն մը ունեցած ըլլալու է , եւ խնամով քննեցէք զայն :

Նորածին տղուն բնական վիճակն է քնանալ իր ժամանակին մեծագոյն մասին մէջ : Կ'արթննայ զրեթէ միայն ուտելու , երեժտկալու եւ թեւերուն ու սրունքներուն հետ քիչ մը խաղալու համար : Կ'աղաղակէ , վան զի անօթի է կամ ո եւէ ցաւ մը ունի . եթէ հիւանդութիւն մը չունի , «վրան

փոխել» եւ իր ուտելիքը տալ՝ կը բաւեն զինքը հանգարտեցնելու համար . եւ ահա իսկոյն կը քնանայ դարձեալ : Երբ կ'աղաղակէ իր թոքերը վարժեցը-նելու համար եւ դէմքը չայլազունիր , ահա յայն-ժամ թողելու է որ աղաղակէ : Բայց , հակառակ առողջութեան երեւոյթի մը , երբ կը շարունակէ ժա-մերով աղաղակել , վստահ եղիք որ ո եւէ անհան-գըստութիւն մը ունի : Ունեցած ցաւը յայտնելու համար իր միակ միջոցն է աղաղակը . նաբնազդօրէն պէտք կը զգայ օգնութեան : Բան մը չի կայ այն-քան սրտաշարժ եւ այնքան տիրառիթ որքան տես-նել խեղճ մանկիկ մը որ օգնութիւն հայցելով կը հալի կը մաշի , եւ այսու հանդերձ կատարելապէս ան-կարող՝ իր միտքը բացատրելու . իր դէմքը կը կա-պուտնայ , բերանը եւ կոկորզը կը չորնան , արցուն-քի խոշոր կաթիլներ կը յորդեն իր դէմքը : Արդ , այս մատաղ հասակին մէջ գտնուող մանուկ մը չի լար բնաւ ըստ հաճոյս : Յիմար մըն է այն մայրը կամ ստնտուն որ կը պնդէ թէ տղան ըստ հաճոյս կու լայ : Ուրեմն պարտինք մեր բոլոր աչալրջութեամբ աշխատի գտնելու համար իր լացին պատճառը : Քիչ մը համ-բերութիւն ընելով պիտի յաջողինք գտնել :

Նախ եւ առաջ տեսնենք թէ կը մսի՞ , թէ բան մը ունի՞ որ զինքը կը նեղէ , կամ իր հանդերձներուն եւ օրօրոցին մէջ բան մը կա՞յ որ իրեն անհանգըս-տութիւն կը պատճառէ . վերջապէս ընդհանուր կա-ցութիւնը քննելու է : Եթէ այսպիսի արտաքին պատճառ մը չի կայ , կրնայ ըլլալ որ դոնէ հիւան-դութիւն մը ունեցած ըլլայ . թերեւս պաղ առած է , եւ կամ — ինչպէս յաճախ պատահական է — իր

ստամոքսը զինքը կը տառապեցնէ : Թերեւս
սնուցանելու եղանակին մէջ սխալմունք կը գոր-
ծուի . թերեւս պնդութիւն ունի — բան մը որուն
պէտք է խնամով հսկել եւ չի թողուլ 24 ժամ այս
վիճակին մէջ : Միայն թէ լուծիչ տալու չէ , այլ
գաղջ ջուրով թեթեւ լոգանք մը բաւական է : Բայց
երբ կը շարունակէ աղաղակելլ , երբ ամէն ինչ ի
նկատի առնուած է , ի՞նչ պէտք է ընել յայնժամ ,
պիտի ըսէք : Շատ լաւ , այս պարագային մէջ ,
դարձեալ պիտի կրկնեմ այն խրատը զոր արդէն
տուած եմ — շփում : Շփեցէք մանաւանդ որովայ-
նը , քանզի այս է որ պարտի ըլլալ չարեաց կեզրո-
նը . շփեցէք մեղմիւ բայց յարատեւ . շփեցէք կըռ-
նակը , սրունքները եւ կուրծքը : Պիտի տեսնէք որ ,
եթէ վաղանցուկ հիւանդութիւն մ'ունի , այս շրփ-
մամբ պիտի հանդարափի : Սակայն մանաւանդ մի՛ օրօ-
րէք եւ մի՛ սնուցանէք ի գէպս կամ յանդէպս . ստա-
մոքսը կը ցաւի , ու կը խճողէք զայն , ճիշտ այն-
պէս ինչպէս երբ անմարսողութեան վիճակի մէջ
գտնուողի մը շաքարեղէն կերցուէր , յոգնեցնելով
այսպէս շարունակ այն գործարանը որ արդարեւ
անհրաժեշտ կերպով կը կարօտի ատեն մը հանդիստ
վայելելու :

Օդը վնասակար չեղած ժամանակ պէտք է տղուն
օդ առնել տալ : Շատ տաք խանձարուրներով պա-
տելու է զանի , թաշկինակով մը կամ ո եւէ ուրիշ
ծածկոյթով մը դէմքը ծածկելու է , եւ , ցնցումնե-
րէ կամ ո եւէ վտանգներէ գերծ մնալու համար ,
կրելու է բարձի մը վրայ որ իր մարմնոյն վրա-
յէն ժապաւէններով կապուած ըլլայ : Եթէ արեգակ

կայ, գլխուն վերեւ հովանոց մը պէտք է բանալ, եւ արևւամուտի պահուն երբէք դուրսը թողելու չէ զայն : Եթէ օղը գեղեցիկ է, ամառուան եղանակին մէջ, օրօրոցը կրնայ զրուիլ բացօթեայ տեղ մը, եւ թոյլ տալ որ քնանայ : Օրօրոցը որչափ կենայ բացօթեայ վիճակի մէջ, այնչափ օգտակար պիտի ըլլայ մանկան համար :

Մանուկը իր գլուխը կարենալ շիտակ բռնելէ առաջ, խոհեմութիւն է միշտ հորիզոնական դիրքի մէջ պահել զայն, եւ գլուխը շիտակ բռնել կարենալու աստիճան ողնայարը ըստ բաւականին ամրացած ըլլայ իսկ, կոնսակէն բռնելու պայմանաւ միայն կրնայ նստեցնել ծնդաց վրայ : Եթէ առանց նեցուկի մարմինը թողուի որ տատանի, դիւրին է որ ողնայարը իր տեղէն ելնէ կամ ծոփ : Այս մասին բնութիւնը մնի լաւագոյն առաջնորդն է : Մանուկը նստած մընալու աստիճան զօրութիւն ստացածին պէս, ինքնիրեն կը նստի, առանց գժուարութեան, եւ այս պարագային մէջ կրնաք զինքը թողու այսպէս : Եթէ, ընդհակառակը, առանձին թողուելով, միշտ պառկած կը մնայ, ասկէ հասկընալու է որ միանանց վիճակը տակաւին պառկիլ կը պահանջէ : Այս կեցուածքին մէջ ամէն տեսակ շարժումներ ընելու պիտի սկսի . պիտի գառնայ մէկ կողմը, ապա միւս կողմը, որովայնին վրայ կամ կոնսակին վրայ : Իր անդամոց կարի դիւրաթեքութեան շնորհիւ ամէն կերպով կրնայ զանոնք շարժել . զրօննլու համար, զոր օրինակ, ոտքերը բերանը պիտի տանի — այս ամէն ինչ անոր բնական է, ուստի օգտակար եւ նպաստաւոր :

Բայց եթէ այս անդամները դիւրաթեք են ,
պէտք չէ բնաւ մոռնալ թէ որքան ալ դիւրաբեկ
են : Յաճախ կը պատահի որ , կամ թեւէն բան մը
հազցուած ատեն կամ հանուած ատեն , չի խորհուիր
թէ թեւը տեղէն կ'ելլէ կամ կը կոտրի . բան մը
որուն հետեւանքը խիստ ծանր է : Անդամի մը
տկարութիւնը կամ խեղութիւնը կրնայ ասկէ ծա-
գում առնուլ , եւ ցկեանս այնպէս մնալ : Շատ
զգուշութիւն պէտք է ուրեմն այսպիսի պարագա-
ներու մէջ : Հանդարտութիւն եւ խաղաղութիւն իր
շուրջը՝ լաւագոյն դայեակն են : Աղաղակ , ծիծաղ ,
ամէն տեսակ սաստիկ աղմուկներ իր ջղային զրու-
թեան վրայ մեծ աղդեցութիւն կը ներգործեն : Այս
զրգութենէն յառաջ կու գան վրդովմունք որ կը
խանդարեն հաւասարակշռութիւնը եւ , տկարացնելով
մանուկը , ամէն տեսակ հիւանդութեանց եւ վտան-
գաց կը մատնեն զայն , հիւանդութիւնք որ վտանգ
կը սպառնան իր ճղճիմ գոյութեան : Բնազզը կ'ըսէ
իրեն շուտով թէ իրեն հարկաւոր նեցուկը կրնան
ըլլալ անոնք որ զինքը կը շրջապատեն , նեցուկ՝
որուն ինքզինքը յանձնելէ զատ ուրիշ բան չի խնդ-
րէ : Իր կենաց առաջին բարոյական հարկն է սա ,
եւ այս տարիքէն ի վեր իր գոհունակութիւնը կրնայ
նշմարուիլ իր գէմքին վրայ : Տեսէք սա քաջառողջ
մանկան դիմաց սիրուն եւ զուարթունակ արտա-
յայտութիւնը . կը ժապի , կը դայլայլէ եւ կը քնա-
նայ այնպիսի քաղցրութեամք որ կամայ եւ ակամայ
հաւատալ կու տայ այն հին առասպելին որուն համե-
մատ կը պահանջուի հաւատալ թէ մանուկը , քնոյ
մէջ , հրեշտակներուն հետ կը խօսի : Այս արտայայտու-

թիւնը ընդ երկար պահողին համար զրեթէ միշտ կրնաք երջանիկ ապագայ մը գուշակել . այս արտայայտութիւն հետեւանքն է այն ներդաշնակութեան եւ հաւասարակշռութեան զոր կը պարզեւէ անոր խաղաղ եւ սուրբ կեանքը : Ի՞նչ հակապատկեր մելամաղձիկ , տագնապալից եւ յարափոփոխ դէմքին . ա'յն մանկան որուն առաջին օրերը յանձնուած են տգէտներու կամ անհոգներու որք կը համարին թէ այս տարիքին մէջ ամէն ինչ կարեւութութենէ զուրկ է : Սակայն, ընդհակառակը, մանկան այս պահուս մէջ գտնուած վիճակը ամբողջ իբ ապագայն կը ներկայացնէ :

Եթէ այս առաջին խնամոց աւագ կարեւորութիւնը ըմբռնէք , այս մանրակրկիտ մանրամանութիւնները սուտ ու փուտ բաներ չի պիտի համարիք : Այս մանրամասն պարագայք ձանձրացուցիչ պիտի ըլլային , եթէ անոնց առերեւոյթ նուազ շահնեկանութեան մէջն չի նշմարուէր այն մեծ նպատակը որուն պարտին ծառայել : Հաստատապէս կը հաւատամ թէ ամէն անոնք որ ամէն ժամ անձնուիրութեան այս պիտի փոքրիկ գործեր կը գործեն , առատօրէն պիտի վարձատրուին անմանելով որ յոյժ աննշան միջոցներով ի՞նչ հրաշքներ կը գործուին եւ ո՞րպիսի դիւրութեամբ կը լուծուի գաստիարակութեան կարծեցեալ դժուարակնական խնդիրը :



Գ.

Կարէ կտել . — Մանուկները բազկաց վրայ կրելու կամ առանձին բողելու վտանգները . — Հնագանդուրին . — Օօրոցին նկանալ վարժեցուելիք սովորութիւններ . — Սովորութեանց զօրութիւննը :

Երբ մանուկը տակաւին ակռայ հանած չէ , անոր միակ յարմար ուտեսան է իր մօր կաթը . բայց ակռաները բուսածին պէս , պէտք է վարժեցնել ուրիշ ուտեսատի , վասն զի ակռաներուն բուսնիլը նշան մըն է թէ անոնք պարտին գործածուիլ : Ի սկզբան ապուր կամ խոչոր աղացուած ալիւրէ աթերայ պէտք է տալ անոր , տակաւ առ տակաւ վարժեցընելու համար զայն ուտելու՝ մեծերու պէս : Կաթէ կտրուած ժամանակ կրնայ զիմանալ ուտեսատի դրութեան փոփոխութեան՝ առանց անհանգստութիւն մը զգալու :

Բշկել (սողալ) սկսածին պէս , պէտք է ձգել զայն գետինը՝ գորզի մը վրայ՝ հեռացնելով ամէն ինչ որ կրնայ զինքը վիրաւորել , եւ կարելի եղածին չափ քիչ անգամ ձեռաց վրայ կրելու է : Միջին դասակարգէ շատ տուներու մէջ կը տեմուուի յաճախ որ անդրանիկ քոյրերը սովոր են իրենց բազկաց վրայ կրել երկու կամ երեք տարեկան խոշոր տղայ մը : Բան մը այնքան վասակար չէ մեծնալու ըն-

թացքին մէջ գտնուող երիտասարդ աղջկան մը համար քան կրել այնպէս ծանր բեռ մը որ կրնայ աղէտալի անկարգութիւններ պատճառել իր կազմութեան մէջ, եւ որ ոչ նուազ կը վնասէ նաեւ մանկան : Այս սովորութիւն հաղարաւոր վտանգներ ունի, որոց մին եւ ամենէն վտանգաւորն է իյնալը . կորաքամակներուն մեծ մասը այս կարգի գէպքի մը կը պարախին իրենց տխուր տձեւութիւնը : Բաց աստի, ողնայարը չի կրնար մնալ շփշփտակ դիրքի մը մէջ երբ մանուկը ժամերով բազկաց վրայ կը պահուի : Թէ այս մասին ի՞նչ պէտք է ընել, բնութիւնը կ'ուսուցանէ մեզ զրեթէ միշտ : Քանի որ մանուկը սողալու կարողութիւն ունի, թող տուէք որ այս կրթութեան տայ ինքզինք : Երբ անիկայ գետնին վրայ է, անդամներէն եւ ոչ մին կոտրելու կամ տձեւնալու վտանգին մէջ կը գտնուի . երբ կ'ուղէ պառկիլ, կը պառկի . եթէ կ'ուղէ իրարանցում յարուցանել, միջոցներ չեն պակոիր իրեն : Այսպէս է նաեւ քալելու համար : Վստահ եղիք որ այն օր երբ ողնայարը, մէջքը եւ սրունքները զինքը վերցընելու կարող են, իր մեծագոյն հաճոյքը պիտի ըլլայ ցուցնել ձեզ թէ կրնայ գործածել իր ոտքերը : Մանուկը երբ քալելու կարողութիւն ունի ու չի քալեր, անտարակոյս պատճառ մը ըլլալու է, եւ այս պատճառն ալ հաւանական է որ առողջութեան վերաբերի . ուստի փոխանակ ստիպելու որ քալէ, զինքը քալելէ արգիլող պատճառը դարմանելու է :

Այն պահուն երբ մանուկը կը սկսի քալել չորս թաթերուն վրայ — վեց եւ ինն ամսոց միջեւ — այլ եւս երկայն հագուստ պէտք չէ հագցնել . այլ եւս

առաւել հոգ տանելու է տաք պահող հանդերձներ
հազցնելու , վասն զի գետնին վրայ օղը աւելի ցուրտ
է քան ծնդաց վրայ կամ օրօրոցին մէջ : Բազուկ-
ները եւ սրունքները ծածկելու յիմար սովորութիւնը
հաղար տեսակ մանկական հիւանդութեանց աղբիւրն
է եւ մանաւանդ ստամոքսի խանդարմանց՝ որ յաճախ
կը պատահին ակռայ հանած եւ կաթէ կտրուած ժա-
մանակ : Երբ ունի խոշոր ասուեակէ կարճ հագուստ
մը որ լաւ կը ծածկէ ուսերը եւ բազուկները , երբ
ունի տաք պահող երկայն գուլպաներ եւ դիւրաստար
ունամաններ , կատարելապէս կրնայ իր վիճակին
յատուկ եղող բոլոր շարժմանց մէջ գտնուիլ :

Սյս տարիքին մէջ գտնուող մանուկը առան-
ձին կամ ուրիշ մանկանց քով թողելու իրական
վտանգը մի՛ մոռնաք երբէք : Ստէպ կը կարդաք
լրազրաց այլեւայլ լուրերուն կարգը այսպէս ան-
խնամ վիճակի մէջ թողուելէ յառաջ եկած բազմա-
թիւ աղէտալի դէպքերու դժբաղդաբար ճշմարիտ
պատմութիւնները , դէպքեր՝ որոց մասին ծնողք
բոլորովին պատասխանատու չեն , քանի որ ստիպ-
եալ են յաճախ մէկզի ձգել իրենց մանուկը , պա-
րապելու համար ուրիշ աշխատութեանց՝ որ կ'ապ-
րեցնէ զիրենք : Սյսպիսի պարագայից մէջ պէտք է
որ տանը մէջ գտնուող անձինք կարդաւ հսկեն
մանկանց վրայ :

Սյս առաջին տարւոյն մէջ զարգացումը տեղի
կ'ունենայ ամէն մասամբ անլուր արագութեամբ :
Տարուան մը մանուկը փորձառութեան ճոխ պաշար
ունի արդէն : Կրնայ զանազանել զինքը շրջապատող
առարկայից մեծ մասը , եւ մինչեւ իսկ անոնց գոր-

ծածութեան եղանակին վրայ եւս որոշ գաղափար մը ունի : Եթէ խնամով զաստիարակուած է , գիտէ նաեւ թէ չի կրնար անհնազանդութիւն մը ընել առանց պատժուելու :

Ցուցուցի ձեզ արդէն թէ դիւրին է այնպէս մը վարուիլ որ մանուկը չաղաղակէ երբէք բան մը ունենալու համար , բաւական է որ զինքը խնամողները անոր աղաղակներուն տեղի չի տալու սկզբան դէմ երբէք չի գործեն : Հաղար անգամ լաւագոյն է իր ուզած բանը չի տալ անմիջապէս քան երբէք զիջում ընել իր աղաղակաց : Նոյնպէս դիւրին է վարժեցնել զայն անմիջապէս հնազանդելու , ինչ որ այնքան անհրաժեշտ է , քանի որ մանուկը , այն տարիքին մէջ , երբէք չունի ո եւ է գաղափար զինքը շրջապատող վտանգաց վրայ . ուստի այս մասին իրեն առջեւ պատճառներ ի մէջ բերել հինգ կամ վեց տարեկան ըլլալէ առաջ՝ կատարելապէս անօգուտ է . այս հնազանդութիւնը պարտի բացարձակապէս կրաւորական ըլլալ իր կողմէն մինչեւ որ միտքը բաւական զարգանայ՝ հնազանդութեան պատճառը ինքնին կարենալ հասկնալու աստիճան : Ընդհանրապէս անհնազանդութիւնը կը զարգանայ զինքը վարողներուն գործած սխալներուն պատճառաւ . կամ ամէն վայրկեան յիրաւի կամ յանիրաւի բան մը ըրած ժամանակ զինքը կը կեցնեն , կամ թէ կը խնդան եւ կամ չի տեսնելու կը զարնեն անոր գործած անհընազանդութիւնը : Այսպէս , տղուն գաղափարը կը պղտորի : Անգամ մը որ բան մը կը պահանջէք , մինչեւ վերջը շարունակեցէք , բայց , պահանջելէ առաջ , լաւ զիտցէք թէ անհրաժեշտ է ինչ որ կը

պահանջէք իրմէ : Եթէ օր մը թոյլ տաք ու հետեւ եալ օրը արգիլէք , այս կերպով մանուկը հաստատ վստահութիւն մը չի կրնար ունենալ ձեր վրայ : Եթէ քաղցր հաստատամտութեամբ մը կ'ուզէք ձեր կամաց հնագանդեցնել , եթէ գաղափար փոխելու — բարկացողութենէ մեղմութեան , խատութենէ քաղցրութեան անցնելու — թեթեւամտութիւնը չունիք , մանկան ձեր վրայ ունեցած վստահութիւնը միշտ չի պիտի պակսի : Իրենց առողջութեան եւ անդորրութեան համար պատշաճ ազատութեան մեծագոյն մասը իրենց թողլով , մանուկներուն հետ թեթեւամտօրէն վարուիլ եւ , այնպիսի ժամանակի մը մէջ յորում խարազանն է անոնց միակ փրկութեան միջոցը , թոյլատրել որ իրենց հակամիտութեանց հետեւին , ոճիր մը գործել կը նշանակի : Այլոց կամքը յարգելու սովորութիւնը մանկան մտաց մէջ այսքան կանուխէն տպաւորել անկարելի է . այլ պէտք է պատրաստել որ հասկնայ թէ զինքը շրջապատողներուն հետ համերաշխութեամբ պարտի ընթանալ . Ամէն մանուկ ինքզինքը աշխարհի չափ մեծ ըլլալ կը կարծէ , եւ այն գաղափարը թէ ուրիշներն ալ իրեն չափ կարեւոր զիրք մը գրաւած են , իր մէջ չի զարգանար այսպիսի մատաղ հասակի մը մէջ : Վայրի բնազգն է այս ամէն կենգանեաց . կը տեսնենք նաեւ թէ նախնական ժողովուրդք հնագանդած են այս բնազգին , զոր օր մը թողլու ստիպուած են անհատից պէս , քանզի փորձառութիւնը մեր ամէնուս սորվեցուցած է թէ ասլրելու համար պէտք է թողլու որ ուրիշներ ալ ապրին : Կենաց առաջին դասն է ուրեմն այն դասը որ կ'ուստուցանէ չի փորձուիլ միայն ընելու

այն բանը որ մեր մտքէն կ'անցնի , առանց ի նկատի առնելու թէ սա ո՛ր աստիճան հաճելի կամ անհաճոյ կրնայ ըլլալ այլոց , եւ ասիկայ բաւական դժուար է զգացնել իրեն , եթէ տղուն նեղութիւն պատճառելէ վախնալու տկարութիւնը չունիք : Դժբաղդութիւն չէ բնաւ չի կրնալ ընել անոր ամէն ուղածը , եւ քանի շուտով սորպի այս դասը որ կրնայ քաղցրութեամբ ուսուցուիլ իրեն այս հասակին մէջ , այնքան զերծ պիտի մնայ հարուածներէ : Իր երջանկութիւնը չապահովուիր զայն իրեն հետ ապրողներուն վեսակին մէջ փնտուելով :

Կոտրել , ջարդել ամէն ինչ որ իրեն կը վերաբերի , ոչ իր առողջութեան անհրաժեշտ է եւ ոչ իր անդորրութեան . ուստի այս բանը արգիլելու համար պէտք է հեռացնել ամէն ինչ որ կրնայ զինքը փորձութեան ենթարկել . եթէ այդ անկարելի է , յարմար է յայնժամ անոր մերձենսալէ արգիլել եւ ուրիշ բանով զբաղեցնել զինքը : Կարելի է զիւրաւ արթընցունել իր բարի զգացումները՝ այլոց ծառայութիւն մատուցանելու համար իր քմահաճոյից յաղթելու հաճոյքը զգացնելով իրեն : Եթէ իր մայրը կամ սանտուն հիւանդ է , պէտք է վարժեցնել զայն անոնց գտնուած սենեակին մէջ աղմուկ չի յարուցանելու : Ես ինքս տեսած եմ հպարտ եւ երջանիկ զէմքը մանկան մը , որուն իր մայրը կ'ըսէր . «Աղէկ քնացայ , եւ զլխուս ցաւն ալ անհետացաւ , վասն զի աղմուկ չի յարուցանելով ինծի մեծ գոհունակութիւն պատճառեցիր :» Այս պարագան երբէք չի պիտի մոռնայ , եւ իր գոհունակութիւնը , մինչեւ իսկ այս տարիքին մէջ , առաւել մեծ պիտի

ըլլայ քան զոր կը զգայ իր հիւանդ մօր անկողնոյն
վերեւ նստած փող հնչեցնող մանկիկ մը :

Մէկ հատիկ մանկան համար է մանաւանդ որ
պէտք է զգուշանալ կուռքի պէս պաշտելէ զայն :
Երբ տղու մը հետ այնպէս կը վարուսուի որպէս կա-
րեւոր անձնաւորութեան մը հետ , նա անտանելի
կը դառնայ իր բոլոր կենաց մէջ իբրեւ որդի , իբրեւ
այր , իբրեւ հայր , իբրեւ քաղաքացի , եւայն :
Այս աննպաստ պարագային մէջ , հարկ է կրկնել ա-
չալրջութիւնը՝ բնաջինջ ընելու համար անոր եսա-
կան զգացումը :

Երբ քանի մը տղայք կան , գործը աւելի զըժ-
ուար է , զի անդրանիկները տեղի կուտան կրտսեր-
ներուն կամաց :

Կը յուսամ թէ , եթէ կրթելիք քանի մը զաւ-
կի տէր էք , երբէք չի պիտի ցուցնէք չափէն ա-
ւելի սէր որ վնասակար է , քանզի չափազանց սէրը
մանուկը եսութեան հրէշ մը կը դարձնէ , եւ միւս-
ները որք կը զիաեն այս խտրութիւնը , նախանձոտ
եւ երբեմն եւս ոխակալ կ'ըլլան : Սակայն չեմ վա-
րանիր ըսելու թէ հալածեալ մանուկը զրեթէ միշտ
աւելի բաղդ ունի ըլլալու նախընտրեալէն աւելի
ազնուաբարոյ էակ մը : Այս վերջինը ապագային մէջ
իր վրայ անէծք միայն կը հրաւիրէ . անիկայ պիտի
ըլլայ ապահովապէս ամէնէն անձնասէրը , ամէնէն
բիրտն ու լիրը , եւ իրեններուն աւելի նեղութիւն
պիտի պատճառէ : Անկարելի բան է երբեմն աղոցմէն
մէկուն նկատմամբ ուրիշներէն աւելի համակրու-
թիւն չզգալ . սակայն ամէնքն ալ միեւնոյն խնա-
մոց եւ համակրութեան իրաւունք ունին եւ կըրտ-

սերանները , ամէնէն աւելի տկար ըլլալով , պարտին սլաշտպանութիւն մանկական հանրապետութեան մէջ , յորում « իրաւունքը զօրաւորագունին է » ընդհանրապէս խօսելով :

Այսպէս , առաջին դաստիարակութիւնը կը կայանայ սովորութիւններու վարժեցնելու մէջ . սովորութիւն մաքրութեան , սովորութիւն հնագանդութեան , սովորութիւն մանաւանդ բարի ունակութեանց : Հազար անդամ ճշմարիտ է այս խօսքը թէ սովորութիւնը երկրորդ բնութիւն է :


Դուք ամէնքդ ալ լսած էք թէ այս ինչ կամ այն ինչ մարդը ազնուատո՞մ , պատուաւոր ընտանիքէ մը սերած անհատի մը վարքն ու երեւոյթն ունի : Ի՞նչ կը նշանակէ այս խօսքը : Պարզապէս , թէ անոր կիրթ եւ սիրելի բնաւորութիւնը կ'ապացուցանէ թէ իր ծննդենէն ի վեր այսպիսի սովորութիւն մը ստացած է , եւ թէ այս սովորութիւնը տեսած է զինքը շրջապատողներուն վրայ : Այս բնաւորութիւնը ժառանգականորէն այնպէս իւրացուցած է որ անոր համար անկարելի եղած է ուրիշ կերպ ըլլալ , քանզի իրեն համար վիշտ մը պիտի ըլլար ուրիշ կերպ ըլլալը : Օրինակի աղագաւ , եթէ անմաքուր կերպով ուտել խմել վարժուած վայրենի մը ընկերութեան մը մէջ պատառաքաղով եւ դանակով ճաշելու հրաւիրուէր , հայհոյելով , տրտնջալով , վերջապէս մեծ դժուարութեամբ աեղի պիտի տար այսպիսի հրաւէրի մը . եթէ դաս արուէր անոր այսպէս ճաշել , այս դաս խիստ տաժանելի պիտի ըլլար անոր համար . բայց երբ վերադառնար իր ըընազաւառը , ուր ճնշում մը չի զգար իր վրայ , իր

ճշմարիտ հաճոյքը պիտի ըլլար ձգել պատառաքաղն ու դանակը եւ ուտել իր տասը մատներով . քանզի վարժուած է , սովորած է այսպէս իր ծննդենէն ի վեր , քանզի այսպէս տեսած է իր ծնողներէն :

Կը տեսնէք ուրեմն որ , եթէ սովորութիւնը այսպիսի զօրութիւն մըն է , մանկան առաջին տարիները ո՞րքան թանկապին ժամանակ մըն է ապագայ մարդը իր հանգիստը , իր հաճոյքն ու բարեկեցութիւնը վարժեցնելու համար որ գտնէ այն բանին մէջ որ բարի է , որ ֆիզիքապէս ու բարոյապէս օգտակար եւ հաճելի է : Բրէ՛ք ուրեմն որ իր հաճոյքը դինքը շրջապատողներուն հաճոյից մէջը ըլլայ , քանզի մեզի հաճելի երեւցածը միայն լաւ կ'ընենք : Հազուաղէպ է որ բոնազմօսիկ դեր մը կարենայ երկար ատեն շարունակել , մինչդեռ մանկութենէ սովորած ըլլալն է միակ դարման լաւ բնաւորութեան տեսողութեան :

Սովորութիւնը կը տրուի անձին օրինակով : Մի՛ ըլլաք ուրեմն բիրու եւ անքաղաքավար անոր առջեւ , եւ պիտի տեսնէք որ մանուկ մը՝ որ քաղաքավարութիւն տեսած եւ բնականաբար քաղաքավարութեան վարժուած է՝ հակառակը տեսնելով ո՞րքան դէշ կերպով պիտի ազդուի :

Վերացական եղանակներով ուսուցուած բոլոր սկզբունք , ինչպէս քարոզ կամ դաս որ չէ ընկերացած անձին օրինակով , աւելի չարիք կը պատճառեն քան բարիք : Մանուկը սկեպտական պիտի ըլլայ նկատմամբ այն մարդուն որ հակառակը կը գործէ իր քարոզածին :



Դ.

Պատիմները. — Վախցնելու վասնգները. —
Մանկանց դայեակները :

Մանկութեան տարիքին մէջ ստացուած հնազանդութիւնը մանուկները պատժելու ձանձրութենէն զերծ կը պահէ ծնողքները . արդէն պատիժը քիչ արժէք ունի իրբեւ միջոց կրթութեան : Տղայ մը պատժելու հարկը կը հաստատէ թէ կրթութեան գործը շատ ուշ մնացած է եւ թէ սկիզբէն անտես առնուած է՝ այն պատրուակաւ թէ մանուկը զեռ շատ փոքր է : Եթէ ընդունինք թէ ուրիշ հրաման չէք տար բայց միայն այնպիսի հրամաններ որք մանկան հարկաւոր են իր բարեաց համար , ան ատեն իր պատժուելուն համար ինք պատասխանատու կ'ըլլայ . սակայն յայտնի է որ այս տարիքին մէջ այսպիսի խնդիր մը կարեւորութիւն չունի , այլ արդիլելու է զայն չարիք ընելէ : Մասնաւոր պարագայից մէջ , պէտք է վարուիլ խիստ շատ ազգեցիկ կերպով : Ենթազրենք թէ մանուկը ըստ հաճոյս կ'աղաղակէ՝ իր ջղաձգումներով վախցնելու կամ դէմքը կարմրցնելու աստիճան . այսպիսի պարագայի մը մէջ պարզագոյն պատիժն է դարձնել եւ երկու հարուած իջեցնել մարմնոյն այն մասին վրայ որ քաղղատարար աւելի քիչ ոսկոր կը պարունակէ :

Պէտք չէ նաեւ բարկանալ , այլ պատժել հանդար-
տութեամբ՝ այն պահուն երբ մանկան գրգռումը
վտանգաւոր հանգամանք մը կ'առնու :

Դալով մթին սենեակներու մէջ զանոնք փա-
կելու , անունդէ զրկելու , եւ այն , անոնք չափէն
աւելի վտանգաւոր են : Մունղը , այս տարիքին
մէջ , խիստ անհրաժեշտ բանն է եւ իբրեւ պատիժ
կամ իբրեւ վարձատրութիւն չի կրնար ծառայել :
Առաջին պարագային մէջ , անզթութիւն եւ առող-
ջապահիկ օրինաց տգիտութիւն է . երկրորդին մէջ ,
որկրամոլութիւնը քաջալերել : Մութ սենեակը իբ-
րեւ պատիժ հնարուած է մթութեան երկիւղը տա-
յու համար : Աւանդութիւն մըն է սա զոր կը պարտինք
հրէներու վախով կրթող դայեակներու խելա-
պատակին , հրէներ որք իբրեւ թէ փոքրիկ մա-
նուկներով կը մնանին եղեր : Դիւրին է վարժեցնել
մանուկը միշտ քնանալու առանց լոյսի , եւ եթէ
անգամ մը այնպէս վարժուի , այլ եւս ճրագէ մը
կամ դայգականթեղէ մը չի պիտի ախորժի : Կը
ճանչնամ մեծ անձինք որք մինչեւ իրենց ծերու-
թեան տարիքը չեն կրնար քնանալ մթութեան մէջ .
եւ զայն կը պարախն իրենց մանկութեան սովորու-
թեանց . առանց հաշուելու հրդեհի այն իրական
վտանգը՝ երբ լոյս մը կը վառի սենեկի մը մէջ ուր
քնացող մէկը կը գանուի , իրաց այս վիճակը կ'ա-
պացուցանէ անխորհուրդ երկիւղ մը . եւ ինչէ՞ն :
Հասարակ , սովորական բանէ մը . գիշերէն , որմէ
չեն երկնչիր կենդանիք անգամ :

Դաստիարակութեան մէջ նկատողութեան ար-
ժանի կարեւորագոյն կանոնն է չի վախցնել երբէք :

Մարդկային բոլոր զգացմանց յոռեգոյնն է այս : Ստութեան , վատասարտութեան , ոճրագործութեան , ամէն ժամանակի մեծամեծ չարեաց , վերջապէս անհանդուրթելի բարոյական տաղնապանաց ծագումն է այն : Վախէ կազմուած բնաւորութեան տէր մարդ մը բարի , բարձր կամ անկեղծ գործ մը չի կրնար կատարել : Եւ սակայն շատ սակաւ անձինք կը խոստովանին այն չարիքը զոր կը պատճառեն մանկանց զանոնք վախցնելով : Անոնք չեն տարակուսիր թէ լաւագոյն դրութիւնն է այն որ կը կայանայ հաստատապէս բանէ մը չի վախնալ ուսուցանելու մէջ : Քանզի այն որ իր մէջ գտնուող այս յոռի զգացումը բնաջինջ ընելու կը յաջողի , ձմարտապէս տէր է իր անձին . անիկայ չի պիտի ըլլայ երբէք ստախօս , խստաբարոյ , եւայլն . իր մէջ պիտի ունենայ հարկաւոր ուժ իր կենաց համար , եւ մահը բնաւ չի պիտի ներշնչէ իրեն այն անն ու սարսափը որ կը թունաւորէ այնքան կեանքեր :

Ահաւասիկ գլխաւոր կէտ մը բովանդակ ապագային համար որոյ վրայ քիչ մը մանրամանորէն պիտի խօսիմ . քանզի ամէն բնաւորութեան , ամբողջ կենաց հիմնաքարն է ասիկայ : Արգարեւ անկարելի է դաղափար մը ունենալ տեսնելէ առաջ , թէ անմիտ սպառնալիք կամ ստութիւնք որք կը գործածուին մանուկները վախցնելու համար՝ զանոնք իմաստուն ընելու կարծեցեալ նպատակաւ , որքան աղէտալի հետեւանքներ կը ծնին : Երկիւղի մը յաղթել՝ անձնական մեծ քաջասրտութիւն մը կը պահանջէ , ինչպէս նաեւ խաղաղ գատողութիւն մը եւ զօրաւոր ջիղեր . վախը զրեթէ անծանօթ բան

մը ընել մանկան համար դիւրին է այն պարագային մէջ եթէ կենաց սկզբնաւորութենէն ի վեր երկիւղ հրաւիրելու բնութիւն ունեցող բաներէ խոյս տալու ջանադիր կ'ըլլաք : Արդ՝ ճիշդ հակառակն է որ կը գործուի : Օգուտ կը քաղուի մանկան մտաց տկարութենէն՝ առանձնութիւնը , գերեզմանը , մը-թութիւնը կամ ո եւ է մարդու մը սպառնալիքը զարհուրեցուցիչ բան մը ներկայացնելով անոր : Ման-կութեան շրջանին մէջ երեւակայութիւնը գօրաւոր է , իսկ դատողութիւնը՝ ոչինչ , այնպէս որ գժուա-րին է զիտնալ թէ ո՛ր աստիճանն տագնապ կը պատ-ճառեն մանկան այս սնուտի սարսափիք : Կրնան ու-ղեղը խանգարել , մզնատապ կամ ջղային հիւան-դութիւններ պատճառել . կը թունաւորեն քունը , ֆիզիքական եւ մտաւորական անդորրութեան այս առաջին պայմանը . բովանդակ իր բնութեան մէջ յառաջ կը բերեն յեղաշրջում մը որ կը ներգործէ իր նկարագրին վրայ :

Բայց առանց իսկ բանդագուշանքներով վախցը-նելու ոճիրը գործելու , պատիմէններու զրութեան մեծ ուժ տրուած է , յուսալով որ մանուկը իրեն ներշնչուած երկիւղէն շարժեալ պիտի հպատակի : կը թուի թէ բացարձակապէս վեասակար է ինչ որ ստացուի պատժոյ սպառնալիքով : Ամէն օր կրնաք տեսնել որ այն տան մէջ ուր երկիւղը իբրեւ սանձ կը գործածուի զսպելու համար , մանուկը կը վար-ժուի ստախօսութեան , խարզախութեան եւ օգուտ կը քաղէ առաջին պարագային մէջ եւ չի կրնար ա-ռանց պատժուելու հպատակիլ՝ այդ հաճոյքը վայելե-լու համար : Եթէ այս եպերելի դրութեան դիմելու

պարտաւոր են զինքը ինսամողները , միշտ սխալ է այս . չէ զիտցուած հաստատամտութեամբ եւ քաղցրութեամբ բաւական վստահութիւն ներշնչել անոր որպէս զի ակնարկ մը կամ խօսք մը բաւեն : Սէրը երկիւղէն շատ տարբեր ուժ մըն է , եւ ստուգիւ եթէ տղուն վրայ խորին սէր ունիք , անիկայ ալ չի պիտի թերանայ զձեզ սիրելէ նոյն չափով : Վախով ձեռք բերուած ամէն բան գոհացուցիչ արդիւնք չարտադրէր . ասոր համար է որ օրէնք եւ ոստիկանք չեն կրցած երբէք արդիւել ոճիրները եւ չարագործութիւնները , մինչդեռ կանուխէն ստացուած եւ ապա համոզմամբ ու սիրով հաստատուած սովորութեանց միջոցով ձեռք կը բերուի ինչ որ ոստիկանութեան ուժը անկարող պիտի ըլլայ ընել :

Յայտնի է որ ամէն մարդ , զրեթէ առանց բացառութեան , սկզբամբ իր զաւակաց բարիք կը կամենայ : Ուստի մանկան վախ պատճառելով , անոր բնութիւնը կ'եղծանի . քանի որ խարդախ կ'ըլլայ , թերեւս կեղծաւոր , վերացական կերպով մը այնպէս զիտցուած է թէ անկեղծ չըլլալն թշուառութեանց յոռեգոյնն է որ կրնայ պատահիլ անոր , եւ սակայն ճիշդ կեղծաւոր ընել զանի՝ ամէն կարելի չարեաց մատնել կը նշանակէ : Այս խօսքիս համար բողոք մի՛ բառնաք ինծի դէմ : Կեցէք . հիմա պիտի հաստատեմ ձեզ թէ քանի քանի անձինք ստախօս եղած են իրենց մանկութեան ատեն ստացած յոռի զաստիարակութեան պատճառաւ : Փոքրիկ մանուկը չի հազարնդիր . ուստի կը պատժուի , եւ ալ աւելի պատժել կը սպառնացուի եթէ շարունակէ անհնազանդութեան մէջ : Ուստի այն ատեն կը փոր-

ձուի արգիլուած բանը ընել գաղտագողի , եւ ապա
երբ երեւան ելլէ , զայն կ'ուրանայ : Ընդհանրա-
պէս , այս առաջին ստախօսութիւնը այնքան նուազ
ճարտար կերպով կը յերիւրուի , որ անմիջապէս կը
յայտնուի եւ աւելի ծանր պատիժ մը կը տնօրինուի :
Յաջորդ անգամուն , աւելի ճարտար խորամանկու-
թեամբ կը ստէ , եւ երբ զինքը հարցաքննողները
խաբելու կը յաջոզի , այլ եւս նետուած է այն ճամ-
բուն մէջ ուրկէ դուրս պիտի ելլէ թերեւս կատա-
րելապէս վատթարացեալ ընաւորութեամբ : Ստե-
լով , իր միակ նաղատակն է խոյս տալ պատիժէն :
Տակաւին կարի գեռահաս է որ կարենայ զգալ ստա-
խօսութեան բարոյական վնասակարութիւնը : Թեր-
եւս իրեն հետ խօսողներն ալ ստուգիւ ճշմարտա-
խօս չըլլան , եւ ասիկայ բաւական է առաջին ան-
գամ թելադրելու անոր որ մեծ կարեւորութիւն չի
տայ ստախօսութեան վրայ իրեն խօսուածներուն :

Բոլորովին անօգուտ է ճանձրացուցիչ խօսքե-
րով քարողել մանկան : Շատ տարիներ բացարձա-
կապէս ժամանակ կորուսանել է այս . վասն զի մը-
տիկ անգամ չըներ ձեզի . վասն զի չի կրնար մտիկ
ընել : Իր ուշադրութիւնը կը հետեւի ճանճի մը ,
լուսոյ ճառագայթի մը , ոչինչ բանի մը որ իրեն հա-
մար վայրկենական այժմէութիւն մը ունի , եւ ուս-
տի ինչ որ կ'ըսէք , իրեն չի թուիր ուրիշ բան բայց
միայն պարապ ձայն մը : Սակայն կրնաք կատարե-
պէս վարժեցնել զանի անկեղծ ըլլալու , եթէ երբէք
չէք պատժեր զինքը այն բանին համար զոր կու գայ
անկեղծօրէն խոստովանիլ ձեզ , կամ եթէ երբէք
չէք արգիլեր իրեն՝ ինչ որ կը խորհի ձեզի պատ-

մելու ճշգրիտ կերպով : Մարդոց մեծագոյն մասը անխորհրդաբար կը պատժեն իրենց զաւակները ոչ թէ անհնազանդութեան համար , այլ անհնազանդութեան հետեւանաց համար : Հակառակ ձեր արգելքին , երբ տղայ մը կը մօտենայ պատէն կախուած ժամացոյցին , բաւական կը սեպէք ժամացոյցին քովէն հեռացնել եւ անոր չի դպչիլ պատուիրել . անզգուշութեամբ (քանզի երբէք դիտմամբ չըներ) պիտի կոտրէ զայն . դուք եւս լաւ մը պիտի ծեծէք զինքը , քանզի ժամացոյցը անոր դաստիարակութենէն աւելի կարեւորութիւն ունի ձեզի համար :

Փոխանակ պատիժ սպառնալու իրեն , պէտք է գովել զինքը ամէն անգամ որ կու դայ ըսել ձեզի ինչ որ ըրած է . եթէ ըրածը գէշ բան մըն է , մեծ ցաւ զգալնիդ յայտնեցէք , եւ որովհետեւ մարդոց զօրաւորագոյն ընազդն է ուրիշին առջեւ հաճելի երեւնալու փափաքը , մանուկը շատ պիտի զգածուի ասկէ , մանաւանդ երբ պատիժներով կամ բարկութեամբ խստասիրտ չէ եղած :

Քանի որ տակաւին փոքրիկ է , հաստամտութեամբ եւ ի պահանջել հարկին բոնութեամբ արգիլեցէք չարութիւն ընելէ , եւ երբ արգիլեալ բան մը ուզելու մասին շատ յամառութիւն կ'ընէ , ձգեցէք որ ինք տեսնայ թէ վտանգ կայ ձեզի չի հնազանդելուն մէջ : Երբ կ'ուզէ լուցկիներու հետ խաղալ , ձգեցէք որ քիչ մը մատը այրէ , եւ այսպէս , կրակին մօտենալու փափաքը պիտի ելլէ սրտէն :

Մանկանց սովորութիւններէն մին է ամէն բանի մօտենալ ուզել : Ուստի պէտք է հեռացնել իրմէ

ամէն բան որ կրնայ վեասել իրեն կամ ինք պիտի
վեասէր անոնց . այլ մանաւանդ պէտք է տալ ա-
նոր պարզ եւ անվեաս առարկաներ : Երէքէն չորս
տարիքներուն մէջ , փայտի ամէն մէկ կտոր խա-
ղալիք մըն է մանկան համար : Երբ սեղաններուն
վրայ կեցող առարկայից համնելու աստիճան չափահաս
կըլլայ , կրթութեան հիմունքը նիմա պէտք է զրուի .
այս միջոցին բաւական է պարզ արգելք մը չի հնա-
զանդելու գաղափարը այլ եւս մտաբերել չի տալու
համար , քանզի եթէ այս հիմունք հաստատուած են
բանականութեամբ , եւ որտով ու կամքով , կրնաք
իրեն յարգանք ու պատկառանք ներշնչել : Երբ կը
յարգենք ո եւէ մէկը , այս զգացման հետ եր-
կիւղ մը խառնուած է , ոչ թէ պատժուելու եր-
կիւղ , այլ երկիւղ անոր տհաճութիւն պատճառելու,
երկիւղ որ մեզի վնտուել կու տայ իր հաճութիւնը
եւ հաւանութիւնը իրբեւ հաստատութիւն մը մեր
խղճին վճռոյն :

Քանինե՞ր արգեօք , խօսելով մինչեւ իսկ Աս-
տուծոյ վրայ , զայն իբրեւ խրտուիլակ մը կը ներկա-
յացնեն : Այս մեծ եւ անհուն կակըներկայացնել մեր
նմաններէն իրբեւ մին եւ մեզմէ աւելի անգութ եւ
աւելի խստաբարոյ ու դաժան , շատ տգեղ գործ մըն է ,
վասնզի , մէկզի թողունք այն պարագան թէ բացար-
ձակապէս տգէտ ենք այս մասին , պէտք չէ որ այս
փոքրիկ էակաց վստահութիւնը չարաչար գործա-
ծենք՝ ներշնչելու համար անոնց երկիւղ այն բանի
մասին զոր պէտք էր որ սիրէին ու պաշտէին կամ
որուն նկատմամբ զմայլում ու հիացում զգային :

Բարոյական վախը աւելի վեասարեր է քան ֆի-

զիքական վախը . հարկ ամսնրաժեշտ է ուրեմն ցոյց
տալ երկու կամ երեք տարու տղու մը՝ կրակին
վտանգը , պատուհանէն վար կախուելու եւ ջուրը
իյնալու վտանգը , ոչ թէ միայն իրեն համար , այլ
իր փոքրիկ եղբարց եւ քերց համար : Եւ այսպէս ,
անիկա երբեք վախկոտ չի պիտի ըլլայ : Այդ զգա-
ցումը երեւակայական վախերէ եւ մէկէ մը երկիւդ
կրելէ յառաջ կու գայ :

Այս վտանգը ցրելու համար կարեւորագոյն բա-
ներէն մին է մանկան բոլորտիքը գտնուող անձանց
ընտրութիւնը : Մինչգեռ ամենէն հասարակ անձն
իսկ չի պիտի վտանէր իր ձին արհեստով ձիապան
չեղող մէկու մը , ինչո՞ւ ուրեմն մանկանց դաս-
տիարակութեան հողը ստանձնող անձերէն այս մաս-
նաւոր պատրաստականութիւնը չի պահանջուի : Հար-
ցուցէք որսորդի մը թէ ո եւէ անձանօթի մը պիտի
թոյլ տա՞յ կրթել իր չները : Ստուգիւ Ո՛չ պիտի
պատասխանէ , եւ ձեզի պիտի բացատրէ թէ անոնց
ծննդենէն սկսեալ կ'արդիլուի իրենց որսը ուտել
կամ զայն փարասել՝ երբ կ'երթան վերցնել զայն
թռչունին զարնուած տեղէն : Այս անձինք , դաս-
տիարակութեան համար , կանուխէն իւրացուցուած
սովորութեանց զօրութիւնը ըմբռնելով հանդերձ ,
կոյր կ'ըլլան այս կէտին վրայ երբ կարգը իրենց
զաւակաց կու գայ : Երբ կին մը խոհարարութիւն-
կամ գերձակութիւն չի գիտեր , տղու զայեակ կ'ըլ-
լայ : Այսպէս , կը գտնուին այսպիտի ծնողք , որք
զենք պիտի ծաղրէին եթէ ըսէիք իրենց թէ պարուէցը
կառապանի ձեռամբ կը մշակուի , եւ որք , սակայն ,
չեն վարանիր յանձնել իրենց սիրասուն զաւակները

այնպիսի անձանց որք առողջապահութեան կամբարոյականի վրայ բնաւ ծանօթութիւն չունին , դաստիարակութեան երես տեսած չեն իրենց կենաց մէջ եւ հետեւաբար անկարող՝ դաստիարակելու : Երբ նուազ իմացական դաստիարակութիւն պահանջող արհեստներու մասին աշկերտութիւնը ի նկատի առնուլ չի մոռցուիր , ընդհակառակը բարոյական դաստիարակութեան խնդրոյն մէջ այս պատրաստականութիւնը երբէք մտքէ անդամ չանցուիր : Բաց աստի, զարմանալի չէ՝ միթէ տեսնել դայեակներ որք առփիոն կու տան՝ տղաքը քնացնելու համար , կամ կը ծեծեն զանոնք ի բացակայութեան իրենց ծնողաց՝ զանոնք լուցնելու համար , կամ վերջապէս անոնց կը պատմեն այնպիսի բաներ որք մանկանց արհաւիրք կը ներշնչեն եւ որք իրենց կենաց մնացեալ օրերուն մէջ իրենց վրայ երկշոտութիւն մը կը բերեն : Դաստիարակութեան մակարդակը այն աստիճան խոնարհ է ընդհանրապէս , որ հարկ անհրաժեշտ է խիստ հսկողութիւն ընել տղուն շուրջը գտնուող անձանց վրայ :


Սպասուհիք տղայոց համար վեասակար ընկերութիւն մըն են այս տեսակէտով : Անոնք կը վարժեցընեն մանուկը ստախօսութեան , խորամանկ խորհրդապահութեան եւ անվայել բառերու : Միակ օգտակար դայեակներն անոնք են որք իրենց կեանքը այս արհեստով անցուցած ըլլալով , բան մը հասկընալու յաջողած են այս մասին եւ գոնէ առողջապահութեան վրայով բաւական փորձառութիւն ստացած են . բայց այսպիսիք շատ հազուազիւտ են , եւ գժուարին է գտնել այնպիսի դայեակ մը որ կատա-

բելապէս վստահելի ըլլայ : Այս պէտքը հետզնետէ զգալի ըլլալով , կը տեսնէք թէ որչափ կարեւոր է որ իւրաքանչիւր կին ուսանի այս դասերը . վասն զի եթէ իւրաքանչիւր կին զիտնար դաստիարակութեան եղանակը , այն ատեն լաւ մայրեր եւ լաւ դայեակներ պիտի ունենայինք : Ինչ որ ըլլան այլ պարտականութիւնք , մայրութիւնն ամէնէն բնականն է , եւ պարզապէս ամօթալի բան է դայեակ մը կառավարելու կամ ի հարկին անոր տեղը բռնելու համար հարկաւոր ծանօթութիւնը չունենալ : Ցաւալի է որ դայեակութիւնը ստնառուութիւն համարուած է . ամէն ուրեք ուսուցչուհիներ կարող են գտնուիլ չափէն աւելի , սակայն դայեակներու եւ դաստիարակուհիներու թիւը չափէն աւելի սահմանափակ է . ինչո՞ւ . վասն զի ընդհանուր տղիտութիւն մը կայ սա խնդրոյ մասին թէ փոքրիկ մանուկները դաստիարակելով զբաղիլը արժանապատուութեան հակառակ է , եւ թէ այսպիսի պաշտօն մը նուաստացուցիչ է : Ի՞նչ մեծ սխալ : Տղայ մը կրթել դաստիարակել օրօրոցէն սկսեալ՝ բոլոր արհեստներուն ամէնէն կարեւորն եւ ամէնէն բարձրն է , եւ բաց աստի , զիտելիք որ նուազ ապերախտ է քան ուսուցչութիւնը : Ուսուցչուհին կ'առնու տղայ մը որ արդէն անուղղայ է եւ որուն բովանդակ նկարագիրը կազմուած է այսուհետեւ անեղծանելի աղղեցութեանց տակ . մինչեւ նորածինը , մինչեւ իր դպրոցական տարիները , բոլորովին ձեր ձեռաց մէջ է , անոր համար ամէն աշխատութիւն հետաքրքրական եւ վարձատրիչ է : Կին մը որչափ կիրթ եւ փորձառու ըլլայ . այնքան լաւ կը յարմարի այս պաշտօնին : Այս փոքրիկ

էակաց տրուած մայրական խնամք չեն կրնար թուիլ
ծառայութիւն կամ ստորնութիւն . ընդհակառակը ,
բարձր կրթութեամբ օժտեալ անձի մը համար կարի
շահեկան եւ կարեւոր է :

Մայր մը զրեթէ միայն նորածինը կրնայ խնա-
մել . երբ մէկէ աւելի զաւակաց տէր կ'ըլլայ , եւ
ամէնուն ալ հաւասարապէս խնամ տանիլ կ'ուզէ ,
օգնականի մը կը կարօտի , եւ ասոր համար է որ դայ-
եակ կը փնտուի , ոչ թէ մօրմէն ստորադաս մէկը ,
ոչ թէ տեսակ մը սպասուհի , այլ մօր փոխանորդը
կամ օգնականը ամէն մասամբ , եւ ի հարկին մին-
չեւ իսկ անոր առաջնորդը : Որպէս զի մանկութեան
դաստիարակութիւնը այսօր ի գործ դրուի , անտա-
րակոյս մայրեր եւ դայեակներ պիտի մարտնչին մե-
ծամեծ դժուարութեանց հետ , որք դժուարութիւն
չի պիտի համարուէին , եթէ նկատէին իրերը ի-
րենց ճշմարիտ հանգամանքներով : Շատ անձինք
նկատողութեան անդամ չեն առնուր մանկանց բնու-
թիւնը եւ վիճակը . մանաւանդ հոն ուր նիւթական
պայմանք կը պահանջեն որ տղայք եւ մեծ անձինք
շարունակային կենակցութեան մէջ ապրին , կը
տեսնեմ որ յանդիմանութեանց մեծագոյն մասը շատ
անմեղ պատճառներէ յառաջ կուդան : Փոքրիկները
աղմուկ կը յարուցանեն , չարանձի եւ ստահակ են ,
ձեզի կը յոդնեցնեն . ուստի անոնցմէ կը պահանջէք
հանգարատութիւն , անշարժութիւն , վերջապէս ի-
րենց տարիքին եւ կազմութեան բացարձակապէս
պահանջածին բոլորովին հակառակը : Հեռացէք այս
աղմուկէն , եթէ ձեզ կը ձանձրացնէ . բայց մի՛ բար-
կանաք , մի՛ զայրանաք : «Տիպար տղայք» որք բաւ-

անառակութիւն չեն ըներ , որ բան մը չեն կոտրեր
կամ աղմկալից խաղեր չեն սիրեր , կամ հիւանդեն
կամ ապուշ : Այս խօսքս , զիտեմ , շատ ծանր պիտի
գտնէք , բայց կ'ապահովցնեմ զձեզ որ տարիք մը կայ
ուր այս անկարոդ շարժումներ , այս ազաղակներ եւ
աղմուկներ անհրաժեշտ են : Ասոր համար է որ ման-
կանց քով մանկամարդ դայեակներ պէտք են , վասն
զի այսպիսիք չեն ձանձրանար մանկական խաղերէ
եւ մինչեւ իսկ հաճութեամբ կը մասնակցին անոնց :
Այսպիսիք աւելի մօտ են մանկան քան տարիքոտ
կին մը . քանզի տարիքոտ կանայք արդէն կեանքէն
ձանձրացած կ'ըլլան ընդհանրապէս : Անոնք լաւ գի-
տեն որ բաւական է արգիլել միայն այն բանը ուր-
կէ իրական վեաս մը կարող է յառաջ գալ , եւ պի-
տի ծիծաղին այն շատ մը բաներուն որոց ակամայ
պիտի համբերէին տարիքոտ կանայք :



Ե.

Անհատականութիւնը յարգելու պէտքը . — Պակասութիւնն եւ յանցանք պարտին նկատուիլ իրեւ հիւանդութիւնն . — Բանութիւն . — Խաժոռութիւն . — Պահանջմունք . — Օգտակար խուսափում :

Հիմա ձեր բոլոր ուշադրութիւնը կը հրաւիրեմ անհատականութեան վրայ . մարդկային էակաց մէջտեղ գտնուած այս զարմանալի զանազանութիւնը շատ անգամ ինքնաբերաբար կը խեղդուի կամ անտես կ'առնուի : Ասոր համար է որ մանկավարժական ծանօթութիւնք օգուտ մը չեն արտադրեր : Բան մը այնքան լաւագոյն կերպով չափացուցաներ մեր տպիտութիւնը քան բնութենէն աւելի լաւ զիտնալ պահանջել ինչ որ հարկաւոր է մանկան , եւ ամէնէն խորհրդաւոր բանը , այսինքն անհատականութիւնը , փոխել բաղձալով՝ ընել մարդկային արարածը այնպէս ինչպէս որ հածոյ է ձեզ : Տեղեակ չէք մանկան կազմութեան , հակամիտութեանց եւ ըղեղային վիճակին , եւ կ'ուզէք ձեր ուղածին պէս կրթել : Շատ անօգուտ է ձեր այս աշխատանքը . կրնաք իշխել , կրնաք պատիմներով վախցնել զանոնք մինչեւ մէկ աստիճան , բայց չի պիտի կրնաք տալ անոր ինչ որ բնութիւնը զլացած է իրեն : Այլ մանաւանդ դժբաղդութիւն մը պատճառած պիտի ըլլաք

անոր՝ արգիլելով աստիճանական եւ բնական զարդացումը այն բանին որ չէք գիտեր թէ ունի՞ թէ չէ, եւ կը մաքառիք ամէն կերպերով որք բոլորովին հակառակ են այն միակ նպատակին որ պարտի առաջնորդել զձեղ . այն է պատրաստել զանի ըլլալու կարելի եղածին չափ երջանիկ : Պիտի ջանամ ապացուցանել ձեղ թէ անհաստականութիւն ըսուած բանը որքան նուիրական է, որքան պարտի յարդուիլ եւ աղատ թողուիլ : Այս պարագային մէջ է որ զմեզ պաշարեալ կը դժնենք սիսալներով եւ նախապաշարումներով այն ամէն բաներուն նկատմամբ զորս կը գործենք :

Պէտքեր կան որք ընդհանուր են ամէն մարդոց, բայց նախնական տարերք են միայն որ հապատակ են միեւնոյն օրինաց . հազար պարագայ կայ յորս, զուտ ֆիզիքական խնամոց մէջ, անձին բնութեան համեմատ զանազան դէպքերու կը հանդիպինք : Չիկայ հաստատուն օրէնք մը որ յարմարի ամէն անձի առանց բայցառութեան :

Այսպէս, իրական սիսալ մըն է տղայ մը ուտելու ստիպել : Եթէ մանուկը առողջ է, ուտելը տեսնելով պէտք չէ գժգոհիլ : Սնունդի կարօտութեանց տարբերութիւնը այնքան մեծ է որքան իր բնութեան այլ մասնաւորութեանց տարբերութիւնը : Եթէ հիւանդ կամ հիւծեալ է, եթէ բոլորովին ախորժակ չունի, ուտելու ստիպուելով չէ որ նա իր առողջութիւնը պիտի վերստանայ : Եթէ սաստիկ տագնապ մը չունի, — զոր օրինակ, ինչպէս կեղծմաշկի (Քուշ Քաւաշ, Դէֆէքտ) ատեն, — բանի տրուած մնունդը գարման մը չէ կարող ըլլալ հիւ-

ծութեան գաղտնածածուկ պատճառներէն միոյն ուրուն դէմ պէտք է գործել ընդհանուր եւ շարունակական դրութեամբ մը : Սովորական առողջութեան վիճակի վերաբերեալ իրաց նկատմամբ կրնամբ ըսել թէ ձենէ իւրաքանչիւրը կ'ուտէ աւելի քան զոր բնութիւնը կը պահանջէ . ուստի որկրամոլութիւն եւ անյազութիւն , տղու մը համար , մանաւանդ տկարութեան նշան մըն է քան թէ առողջութեան , ինչ որ չէ չափաւորութիւնը : Դարձեալ կը կրկնեմ որ աւելի մեծ կարեւորութիւն տրուելու է անհատին , քանզի իւրաքանչիւր էակի յատուկ բնական օրէնքը , այն որ մանկան մէջ աւելի զօրաւոր է — բոլոր իր արարք աւելի բնազդական ըլլալով քան չափանասին մէջ — իւրաքանչիւր անձին կազմութեան ամէնէն աւելի նպաստաւոր պայմանաց հետապնդութիւնն է : Կենդանիք այս բնազդն ունին բարձրագոյն աստիճանաւ . մարդուն մէջ խեղզուեցաւ գարերով այս բնազդ բժշկական սուտ զիտութեամբ : Հիմա է որ բժիշկք կը սկսին առաջնորդուիլ այս մասնաւորութեանց : Մինչեւ այսօր անոնք իրենց պարտականութիւնը կատարած կը կարծէին գեղագրելով ինչ որ կը յարմարէր անոնց կազմութեան : Սակայն , ցորչափ կը տեսնենք թէ որքան անհասկընալի բաներ կան մեր մէջ , պիտի վարանինք բոնադատել ուրիշի մը բնութիւնը : Զոր օրինակ , ոմանք խստիւ կը մարտնչին այն տրամադրութեան դէմ որ կը կոչուի «Ճախային» : Արդ համոզուած եմ որ բնութիւնն է որ կը ջանայ այսպէս ուղղել մկանանց ումանց մասնակի տկարութիւնը , եւ թէ չի կայ բնաւ անպատեհութիւն որ կարենայ ծագիլ այս սովորութե-

նէն։ Զարդացնել մէկ անդամը ի վեաս ուրիշի մը, ինչպէս յաճախ տեղի կ'ունենայ, վտանգ կ'ենթադրէ։ Ահաւասիկ ճշմարիտ չարիք մը, քանզի երկու թեւեր եւ երկու ձեռքեր սահմանուած են գործածուելու հաւասարապէս, ինչպէս երկու ոտքեր, եւ աւանդական յիմարութիւնք շատ արմատացած են մեր մէջ՝ անդամմը դրապէս տկարացնելու ջանազիր ըլլալու մասին։ Չախ ձեռքը պիտի կրնայ ընել այն ամէն բաները զորս կ'ընէ աջ ձեռքը։ Պէտք է միեւնոյն ատեն երկու ձեռքն ալ վարժեցնել, ժառանդականապէս տկարացած ձախ ձեռքը քիչ մը աւելի աշխատցնելով, դրելու, դժազրելու, ձեւելու, կարելու, վերջապէս ամէն տեսակ գործ ընելու։ Այսպէս ընելը աւելի օրինաւոր է քան պատճել տղայ մը վասն զի իր ձախ ձեռքը կը գործածէ, երբ բնութիւնը կը պահանջէ այսպէս։

Ճաշակաց, նկարագրի կազմութեամբ եւ զարգացմամբ զբաղած ատեննիս պիտի հանդիպինք անձնական հաղար տեսակ տարբեր միտումներու որոցմէ կրնանք օգուտ քաղել։ Բնութիւն մը հիմնական եւ արմատական փոփոխութիւններ չի պահանջեր, այլ միջավայրի յարմարութիւն կը պահանջէ կարելի եղածին չափ զայն իր նախաձեռնութեան թողլով։ Շարունակ կը տեսնենք մեր շուրջը որ կը խեղգուփ խնամով ամէն ինչ որ անձնական կամ սկզբնական է՝ անձնատուր ըլլալու համար այնպիսի կրթութեան մը որուն համեմատ անհատականութիւնը կարեւորութիւն մը չունի։ Պատճելէ առաջ հարկ էր, ինձ կը թուփ, դիտել (ըստ երեւոյթին նուազ ազդեցիկ է, սակայն յոյժ կարեւոր

է) զիտնալու համար թէ որո՛ւ հետ է գործը եւ ճշմարտապէս ինչ բանի պէտքը կը զգացնէ մեր միջամտութիւնը : Վհասակար չեղող ամէն բանի համար պատմել չարժեր : Մեր խղճին համար ճշմարիտ նկատողութիւն պէտք է ըլլայ սա կէտը թէ՝ այս ինչ կամ այն ինչ բանը վնասակա՞ր է առողջութեան կամ մանկան նկարագրոյն : Եթէ այո՛ , աղդուութեամբ հարկ է զապել զանի — եւ ճշմարիտ աղդուութիւնն է համբերութիւնը :

Պակասութիւն եւ յանցանք յառաջ կու զան կամ ժառանգական պատճառներէ , կամ առողջութենէ եւ կամ այն միջավայրէն որուն մէջ տղայք կ'ապրին : Այն աստիճաննը որուն բնաւորութիւնը կը համապատասխանէ ֆիզիքական վիճակին , ամէն տեղծանօթ է : Մեզ կը պատահի յաճախ , երբ կը խօսինք մեծ անձանց վրայ , ըսել թէ անոնք աղէկ կամ գէշ օրուան մը մէջ ծնած են , թէ պառկած տեղերնէն ձախ ուաքերնէն ելած են , բնաւորութեան մէջ տարբերութիւնը բացատրելու համար : Այս փոփոխութիւնք կը վերագրուին ուրեմն առողջութեան վիճակի մը , եւ պարտինք միեւնոյն բացատրութիւնը տալ այն բաներուն որք մեզ եղական կը թուին տղայոց մասին : Բազմանգամբնանիքի մը իւրաքանչիւր մայր ձեզ պիտի ըսէ թէ մասնաւոր տարիքի մը մէջ իր խստաբարոյ զաւակաց մին եղած էր զուարթ եւ փոխաղարձաբար . թէ ծոյլն ու անհոգը փոխուած էր գործօն աշխատողի . թէ յաճախ նա որուն բնաւորութիւնը ամէնէն անտանելի էր , ամէնէն աղնուաբարոյ զարձած էր . կամ թէ զարմանօք կը տեսնէ որ նկարագիրը կատարեալ եւ

բեւցողը զայրացկոտ , տխուր կամ վայրենի կ'ըլլար Այս փոփոխութիւնք կը վերագրուին առողջութեան վերաբերեալ պատճառներու : Բժշկական ծանօթութիւնք տակաւին այնքան սահմանափակ են որ զբժուարին է , եթէ ոչ անկարելի , ապացուցանել ճշշդիւթէ ո'րն է ֆիզիքական պատճառն ամէն մէկ բարոյական անկարգութեան եւ աւերման . բայց գիտալով իսկ որ այս բացատրութիւնը միակ կարելի բացատրութիւնն է , այլ եւս չի պիտի ջանանք բժշկել պատիժներով եւ սպառնալիքներով . պիտի ջանանք մեր ամէն ուժով հասկնալ այս չարեաց աղբիւրը եւ դարման տանիլ անոր՝ զայն խնամելով իրեւ հիւանդութիւն : Շատ համբերութեան պէտք պիտի ունենանք այս դանդաղ եւ տարտամղրութեամբ քան միւսով , բայց եւ այնովէս միակ բնական եւ օրինաւորը այս է :

Փոքրիկ աղուն մէջ չարութիւն կամ չար կամք չի կայ . ամէնէն ապականեալ բարուց տէր մարդուն մէջ իսկ տարակուսելի է որ գտնուի չար ըլլալու որոշում մը , կամք մը : Մարդկային էակը մանկութեան տարիքին մէջ բարոյական դատողութիւն չունի . իր բնազդներով կ'ընթանայ , եւ այս բնազդք զուտ ֆիզիքական են : Ժառանգական օրինօք , կայ անոր մէջ կարդ մը տիրող տրամադրութիւնք , եւ եթէ այս տրամադրութիւնք հիւանդ են , այսինքն կատարեալ հաւասարակշռութեան մէջ եղող կազմութեան մը օրէնքներէն դուրս են , կը ձգտին զարգանալ եւ խեղդել սուրբ սերմեր : Ընդհանրապէս միաեալ ենք մոռնալու հիւանդագին վիճակը ու բուն մէջ կը գտնուին մարդոց մեծ մասը . լաւ ա-

ոռղջութիւնք կը թուին նուազիլ եւ հիւանդ ծնողք են որ , աւա՛զ , բազմաթիւ են : Պէտք ունինք ուրբեմն մարտնչելու գրեթէ միշտ ժառանգական անկարգութեանց դէմ որք կը ծնին մանկան հետո Եթէ ձշմարիտ է որ ամէն մէկ գեղաբանական տունկ կը պարունակէ չարիք եւ բարիք ըստ չափու որով չափով կը մատակարարուի , կրնայ նաեւ գիտցուիլ թէ ամէն մէկ տրամադրութիւն կը պարունակէ իր բարի եւ չար կողմը , թէ ամէն մէկ պակասութիւն յատկութեան մը կը վերագրուի , եւ մեր բոլոր ուշադրութիւնը պէտք է ճգտի զարգացնել բարին՝ մարեցընելով չարը : Այսպէս . քաղցրութիւնը յաճախ երկչոտութեան հետ կցուած է , երկչոտութիւն որ սըտախօսութեան կը փոխուի առաջին խստութեան դէմ . վեհանձնութիւնը զուգընթաց կը քայէ բռնութեան հետ . անձնասիրութիւնը եւ քաղաքավարութիւնը , կասկածու բնաւորութիւնը եւ զգայունութիւնը քոյր են իրարու :

Այն ընդունուած իրողութիւնը թէ բնութեան մէջ չար կամք եւ որոշում չի կայ , ասոր անկարելիութիւնը ընդունելով հանգերձ , կ'ենթազրեմ թէ այլեւս հիւանդութեան մը դէմ պէտք չէ դանդատիլ : Զի պիտի պատժէք տղայ մը տկարակազմ կամ հիւանդու ըլլալուն համար , այլ պիտի պատժէք կամակոր , բարկացու եւ խստաբարոյ ըլլալուն համար , եւ սակայն աւելի յանցաւոր չէ այս տրամադրութեանց համար քան իր արեան յատկութեան համար : Եթէ տղան արեան նուազութիւն ունի , իր վիճակին յարմար գեղով մը պէտք է ջանաք դարմանել զանի , թերեւս օդափոխութեամբ . վերջա-

պէս յաճախս երկարատեւ իննամատարութեամբ, վասն զի մէկ անգամէն առնուած զօրաւոր դեղը չէ որ անոր արիւն եւ ուժ պիտի տայ : Նկարագրի տրամադրութիւնք եւս պարտին նոյն կերպով դարմանուիլ : Խստաբարոյութիւն , քմահաճոյք , մշտըն-ջենական դժգոհութիւն , ծուլութիւն չարիքներ են որոնց դէմ պէտք է մարտնչիլ քաղցր , յարատեւ եւ սովորական հիւանդագին վիճակի մը ենթակայ մէկու մը հոգ տարուածէն աւելի հաստատ եղանակաւ եւ դրութեամբ :

Երբ կը խօսիմ անհատականութիւնը յարգելու վրայ , այսու ըսել չեմ ուզեր երբէք թէ իր յանցանաց դէմ դնել պէտք չէ : Յիմարութիւն է ըսել, «Եթէ խողախտաւոր է տղայ մը , թողէք որ մեծնայ այսպէս եւ դիտեցէք վախճանը :» Կ'ըսեմ միայն թէ մի՛ փնտուէք խիստ եւ յեղակարծ ազդեցութիւն ունեցող դեղեր . հիմնական փոփոխութիւնք անկարելի են : Դարմանը քանի կանուխ ըլլայ , յաջողութիւնը այնքան ակներեւ եւ ապահովեալ կ'ըլլայ : Եթէ , արեան նուազութեան համար , անոնց առաջքը առնելու կարեւորութիւնը հասկցած էք , պէտք չի կայ բացատրել ձեզ թէ ի՞նչ կը չահիք հետեւելով միեւնոյն զրութեան : Ժամանակին խնամուած հիւանդութիւն մը դիւրաւ կը դարմանուի . պակասութիւն մը , յանցանք մը իր ընձիւղ վիճակին մէջ դիւրաւ կը խեղդուի . ուստի հարկ է օր մը անգամ չի կորսնցնել :

Խստաբարոյութիւնը , զոր օրինակ , մանկութեան առաջին տարիներէն սկսեալ , աւելի ընդհանուր կերպով զարգացած ընաւորութիւններէն մին

է : Ըղեղային եւ ջղային գրութեան համար ասկէ ծագող չարիքը շատ մեծ է : Թերեւս տեսած էք որ ամէնէն խստապահանջ մարդիկ են ամէնէն տկար կ'ըլլան , երբ անգամ մը կ'անցնի իրենց այս կիրքը : Ինչո՞ւ համար : Վասն զի ջիղերնին կատարելապէս կը տկարանան սաստիկ գրգռմամբ, եւ ուժաթափութիւնը կ'ըլլայ այնքան կատարեալ , որ ո եւէ ուժ չի մնար անոնց կամաց վրայ : Ուրեմն յաճախ խիստ թեթեւ հակառակութեամբ գրգռուած ջիղերու տագնապ մըն է այս : Առողջութեան ծանօթ անկարգութիւններով յառաջ եկած ջղային տագնապանաց մէջ — ինչպիսի ջղաձգում , լուսնոտութիւն , եւայն — բժիշկք այլեւայլ դարմաններ կը յանձնարարեն , ինչպէս բաղնիք , մեղմացուցիչ դեղեր եւ կատարեալ հանդարառութիւն :

Անգամ մը որ այս կատաղի տրամադրութեան գոյութիւնը ճանչցուի , պէտք է զայն գրգռելէ խոյտալ , եւ օգուտ քաղել այս տարիքին թեթեւամըստութենէն՝ զայն զբաղեցնելու համար ուրիշ բանով քան այնպէս բաններով որք կը գրգռեն զանի : Պէտք չէ երբէք գանակոծել մանուկը նկարագիրը ուղղելու պատրուակաւ . եթէ ցասկու է , այսու միայն իր բարկանալու տրամադրութիւնը կ'աւելնայ : Պատժոյ մը երկիւզը ժամանակի հոլովմամբ կեղծելու պիտի հարկադրէ այս բարկութեան նշմարելի յատկանիշները , բայց այս կեղծիքը՝ որ բազում տարիներու փորձառութիւն կը պահանջէ՝ հասկցուելու համար , վերջապէս երկրորդական բան մըն է , քանի որ ասոր տեղ ուրիշ չարիք մը կը ծնի : Անիկայ իր սրտին մէջ նուազ չի կատղիր , եւ յաճախ

կը զարգանայ անոր մէջ տրամադրութիւն մը որ
ստուգիւ երբէք խստաբարոյութեան հետ կապակ-
ցութիւն չունի . կ'ըլլայ ոխակալ եւ վրէֆխնզիր :
կեղծաւոր , խորամանկ , նեղսիրտ , դաժանաբարոյ եւ
լուսկեաց մանուկը ինձ կ'ազդէ աւելի երկիւղ քան
այն որ չի կեղծեր իր ճշմարիտ նկարագիրը : Եթէ
ճշմարտապէս բարի կը կամենաք իրեն , բարկանա-
լու տեղի չի տալու համար ամէն հնարիմացութիւն
ի գործ զրէք , վասն զի խստաբարոյութիւն եւ բար-
կութիւն կը զարգանան յաճախակի գրգռմամբ : Այս
արամադրութեան դէմ մաքառեցէք , որ միշտ ջղա-
յին մեծ զիւրագրգռութիւն մը յառաջ կը բերէ զօ-
րաւոր միջոցներով , որոց առաջին կարգին մէջ կը
գտնուի ցերեկուան քունը առ նուազն երկու կամ
երեք ժամ մինչեւ եօթը տարեկան . ապա բացօթ-
եայ կեանք եւ մինչեւ քնանալու պէտք զգալու
աստիճան մարմինը յոկնեցնող խաղեր : Եթէ , հա-
կառակ այս ամէնուն , բարկութեան տագնապ մը
վրայ կու գայ , մինակ թողուցէք , անոր հետ մի
վիճիք բարկութեան տեւողութեան պահուն . փա-
կեցէք հոն ուր չի կրնար չարիք մը ընել եւ ըսէք
իրեն թէ ազատ պիտի ըլլայ եթէ ձայնը կտրելու
ըլլայ : Զայնը կտրածին պէս , արձակեցէք զանի ,
եւ փոքրիկ խրատէ մը ետքը , թողէք որ վազէ եւ
նորէն խաղայ : Պատիմը մի՛ ուշացնէք . բարկութիւ-
նը տակաւին չի սաստկացած ի գործ զրէք : Հինգ
վայրկեան ետքը (միշտ առաջին տարւոյն համար կը
խօսիմ) , այլ եւս չի յիշեր թէ ինչու համար պատ-
ժոյ ենթարկեալ է , եւ ցասկոտութիւնը կրնայ գիւ-
բաւ ծնանիլ առանձնութեան տեղի տրուած ձանձ-

քոյթին պատճառաւ . յայնժամ նորէն կը բարկանայ նորէն կու լայ, նորէն տակնուվրայ կ'ըլլայ : Իսկ եթէ ընդհակառակը իր պատժոյ վայրէն առջի միջավայրին մէջ վերադարձուի՝ իր բնական վիճակը վերստանալէն անսմիջապէս ետքը, պիտի ջանայ խոյս տալ ձանձրոյթէն զոր գիտէ թէ պատճառած է իւր անմտութեամբ : Ամէն պարագայի մէջ, այս վայրկենական հեռացուցմամբ իր բարկութեան տեւողութիւնը ընդհատած պիտի ըլլանք, եւ զիսաւոր կէտն ալ այս է արդէն : Գալով իր կամքը քալեցնելու սովորութեան, ասոր տեղի տալը զայն քաջալերել է . բաց աստի ստէլ ասոր պատճառն է անգործութենէ յառաջ եկած ձանձրոյթը :

Սատանան կարող է միշտ չար զործ մը գտնել այն ձեռքերուն համար որ չեն զիսեր զործել, կ'ըսէ անզզիական առած մը : Իր առաջին օրէն սկսեալ, ու եւէ կերպիւ զայն զբաղեցնել պէտք է : Առաջին տարին ամբողջ մարմնոյն համար քնանալ, ուտել, եւ սրունքներուն ու թեւերուն համար քալել կը բաւեն : Բայց նստելու կարողութիւն ստացածին պէս, իր տարիքին յարմարցուած զանազան խաղերով զբաղեցնելու է զայն: Զեռքը տրուած առաջին առարկայք պարտին բացարձակապէս անշնաս ըլլալ, զասն զի բնազզմամբ միշտ զանոնք բերանը կը տանի : Երբ ակռաները բուանելու վրայ են, մանուկին լինաերը կը սկսին կեռալ . ուստի այս միջոցին պէտք է որ բան մը կրծէ որ ակռաներուն լինաերէն դուրս ելլելուն օգնէ : Ուստի տուէք անոր փայտի կամ ոսկրի ողորկ կտոր մը, կամ այնպիսի բան մը որ վիրաւորելու կամ թունաւորելու վտան-

գէն զերծ ըլլայ , սակայն երբեք մի՛ տաք այնպիսի առարկաներ զորս նորէն իրմէ ետ առնելու ստիպուած էք , քանզի ճիշդ անոր ձեռքէն առնել ուղած առարկանիդ է զոր պիտի չուզէ վերստին տալ ձեզ : Կրնաք ցոյց տալ անոր պատկերներ , խաղալ անոր հետ պահուըտուք եւ այլ խաղեր , եւ ուրիշ տղայոց ընկերութեան մէջ թողուզ զնա , պայմանաւոր ամէնքն ալ հսկողութեան տակ ըլլան : Եթէ այսպէս միշտ զբաղեալ ըլլայ քմահաճոյք չի պիտի ունենայ . չարութիւններ չի պիտի դործէ . անհանդստութիւն չի պիտի պատճառէ . տղու մը այսպէս ըլլալուն պատճառն է ուզածը չի կրնալ ստանալէն յառաջ և կած ձանձրոյթը եւ յոգնութիւնը : Փոքրիկ մանուկներու համար չափէն աւելի ծիծաղիլ , աղմըկալից խաղեր խաղալ՝ անոնց կարողութենէն վեր են եւ քմահաճ կ'ընեն զանոնք :

Եթէ նեղսիրտ է , պատճառն այն է որ ունայնամիտ անձնասիրութիւն մը իր անձին կարեւորութիւն տալ կու տայ , եւ ուրիշները պատժել կը խորհի , երեւակայելով թէ բարձրաստիճան անձ մըն է ինք , եւ թէ իր դիրքին վայել կերպով չի յարգուիր : Պէտք չէ կարեւորութիւն տալ ասոր : Եթէ կարեւորութիւն չի տրուի , կամ չի տեսնելու զարնուի , ինք ալ շուտով կը մոռնայ զայն . կը տեսնէ որ ուրիշներ կը զրօննուն եւ ինք ալ կը մասնակցի անոնց զբօսանաց , բայց այն ատեն քիչ մը առաջուան իր ըրած պակսութիւնը պէտք չէ երեսին զարնել , յիշեցնել իրեն : Այսպիսի յանցանքներ լաւագոյն կերպով կ'ուղղուին զանոնք չի տեսնելու զարնելով : Շուտ մը կը զգայ որ ա-

ռանձին մնացած է , եւ թէ երեսը նայող մը չի կայ . ուստի իր անձին կարեւորութիւն տալէ կը դադրի :

Խօսել սկսածին պէս , հարցումներ կ'ընէ . պէտք է միշտ պատասխանել , այն պայմանաւ որ ձեզի հարցում մը ըրած ատեն ուրիշ բանով զբաղած չըլլաք : Եթէ զբաղած ըլլաք , ըսէք իրեն որ քիչ մը ետքը պիտի պատասխանէք իրեն , եւ անմիջապէս գոհացում մի՛ տաք թերեւս իր վաղանցուկ բաղձանաց : Զգուշացէք նաև որու հետ որ կը գտնուի իրեւ տէր կամ իշխան հանզիսանսալուն թոյլատրելէ : Սնաանելի է ինձ տեսնել տղայ մը որ հազիւ քանի մը բառ թոթովելու կարող , հրամաններ կու տայ իրմէ մեծին : Իր զայեակը ազգեցիկ իշխանութիւն մը պարտի ըլլալ , եւ ոչ թէ իր հրամանները կատարող սպասուհի մը : Որչափ ընական է որ ուզէ եւ իրեն արուի ամէն բան որուն պէտք ունի՝ առանց դէմքը ծամածոելու , այնչափ այպահնելի են անոնք որ թոյլ կու տան անոր ըլլալ խստապահանջ , ամբարտաւան կամ հրամայող որու որ ըլլայ : Այս կարգի առաջին պահանջմանը դէմ պէտք է պատասխանել ցուրտ լրութեամբ մը եւ երբեք ուշաղրութիւն չի տալ : Իր հրամանը , մինչեւ իսկ եթէ բանաւոր բան մը ըլլայ , պէտք է որ աղաչանքի փոխուի , նկատողութեան առնուելու համար :

Ուրեմն ամէն ինչ մեր հասկնալու եղանակէն կախում ունի . յաճախ մեր զործած սխալին հետեւանքն են այն բաներ որոցմէ կը գանգատինք : Գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերելու համար , կարեւոր բանն է երբեք չի բարկանալ կամ անհամբեր

Հըլլալ . ուստի այն պարագային մէջ երբ վիշտ մը .
տիրութիւն մը կամ ուեւէ սրաննեղութիւն մը կ'ու-
նենանք . (եւ ամէնքնիս ալ արդէն այսպիսի պա-
րագայներ ունենալու հարկին մէջ ենք , քանի որ
ամէն փորձանաց դիմագրաւելու անկարող ենք եւ
հազար հոգերու տակ ընկճուելու կը գատապար-
տուինք) , այսպիսի պարագայից մէջ աւելի լաւ է
չի գործել երբեք . սպասել որ իրերը իրենց բնական
նախկին վիճակը վերստանան Գոնէ տղան չի յանդի-
մանուիր եւ այսպէս նորանոր դժուարութեանց ա-
ռաջքն առնուած կըլլայ :

Կը յուսամ թէ կրցայ զձեզ համոզել թէ , ընդ-
հանրապէս պատիժ եւ ուրիշ մասնաւոր միջոցներ
ճշմարփտ չարիքներ են , եւ թէ խուսափման դրու-
թիւնը խոհական է երբ մարդ վստահ չէ բոլորու-
վին թէ պիտի կրնա՛յ հանդարտութեամբ գործել
միացնելով քաղցրութիւնը հաստատամտութեամ հետ



9.

Մանկութեան արտաքին սպառութիւնն. — Գեղեցիկին նաօակը սալու համար՝ այս սպառութեանց զգայաւանաց վրայ ներզուծած զօրաւոր ազդեցութենին բաղուելիք օգուտը. — Այս նպատակին հասնելու համար պարզ միջոցներ :

Առաջին տարիներուն մէջ մանկան ընդունած սպառութիւնները միայն արտաքին առարկաներէն են. ուրիշ բանով զբաղած չէ բայց միայն անով զոր կը տեսնէ, կը լսէ, կը շօշափէ եւ կը ճաշակէ : Նմանողութեան շատ զօրաւոր բնազդ մը ունի, եւ ուստի ասով է միայն որ քալել, ինդալ եւ խօսիլ կը սորմի: Խուլ-համրերը բան մը արտասանելու կարողութենէ զուրկ չեն, այլ որովհետեւ անոնց ականջին թմբուկը զիստւածաւ վրանասուած է կամ ի ծնէ զուրկ են անկէ, չեն կարող խօսիլ, վասն զի խօսիլը նմանողութեամբ կը սորվուի: Մինչեւ իսկ խօսելէ առաջ, մանուկը կը լիշէ կենդանիները իրենց զանազան բարբառներով. ձեր ուշադրութենէն չէ վրիսած այս, վասն զի ամէն ինչ ասով կը սկսի. միշտ նմանողութիւնն է որով նա կը հնարէ այն կարդ մը տարօրինակ անունները զորս կու տայ առարկայից եւ անձանց: Մասնաւոր հանգամանքներ նորա ուշադրութիւնը կը զրաւեն, զոր օրինակ, մէկու մը դէմքը ծա-

մածոիլը տեսնելով է որ ինք ալ այսպէս ընել կը սկսի, կընայ նաեւ այսպէս գէմքը մնայուն կերպով այլափոխել ուստի այս յոտի սովորութեանց մեծ ուշաղրութիւն ընել պէտք է, քանզի բազմաթիւ մանուկներ կ'իւրացնեն այսպիսի սովորութիւններ պարզապէս զանոնք տեսած ըլլալնուն համար: Այն խաղերը զորս կը հնարեն, չեն ուրիշ բան այլ միայն այնպիսի խաղեր որք տեղի կ'ունենան իրենց ծանօթ միջավայրերու մէջ: Ատաղձագործի մը, դերձակի մը, նկարիչի մը տղայք խաղերնին կը նմանցնեն իրենց ծնողաց աշխատութեանց:

Մանկանց բնութեան վրայ լաւագոյն գաղափար մը ունենալու համար պէտք է ուշի ուշով դիտել անոնց հնարած խաղերը, յոյժ ուշագրաւ եւ հրահանգիչ է դիտել զայնս: Իրենց վառվուն երեւակայութեամբ սովորական առարկայները կը փոխարկին այնպիսի ձեւերու որք գրաւած են իրենց ուշ կամ որք իրենց աշքերուն հաճելի երեւած են:

Չոր օրինակ, գաւաղան մը կը փոխուի մանկան համար կրակոտ ձիու մը, որուն վրայ հեծնելով, ինքզինք իրեւ քաջարի ձիաւոր մը կը ձեւացնէ, իր աշաց իրական թուռղ այս ձիուն վրայ հեծած որպէս թէ անտառներու մէջէն կ'արշաւէ, գետերուն վրայէն կը ցատքէ կ'անցնի, վերջապէս հազար խոչընդունակուներու կը յաղթահարէ: Բայց այս բաները ընելու համար, մամաւոր փորձառութիւն մը հարկաւոր է իրեն. կամ տեսած ըլլալու է ձիաւոր մը որուն այս գէպքերէն մէկ քանին պատահած են եւ կամ պատմութիւն մը լսած ըլլալու է այս մասին եւ ինքզինք կը կարծէ այդ պատմութեան դիւցազնը: Միայն

արտաքին իրողութիւնք են որ անոր ուշը կը գրաւեն,
եւ ոչ անոնց ներքին իմաստը , որ գեռ ընդ երկար իր
ուշադրութենէն պիտի վրիպի : Տեսած եմ տղայ մը որ,
իր փոքրիկ եղբայրը մեռած ըլալով , ամիսներով իր
փոքրիկ պաճուճապատանքը ծաղիկներու տակ թա-
ղելով կը զրադէր , երգելով սգալի եղանակ մը , եւ
աղօթելով այս երեւակայական ննջեցելոյն շուրջը .
շատ հաւանական է որ եղրօրը ողջութեան յիշատակը
մոռցած էր , ինչպէս նաև անոր խորհրդաւոր բա-
ժանման պատճառած ցաւն ու կակիծը , սակայն եւ
այնպէս յուղարկաւորութեան մանրամասն պարա-
գայք իր երեւակայութեան վրայ այնպիսի տպաւո-
րութիւն մը գործած էին , որ անգաղար իր յի-
շողութեան կը զարնէր : Բայց որովհեաւեւ արտաքին
ապաւորութիւն մը անհրաժեշտ եղաւ այս խաղին
գաղափարը իրեն տալու համար , կրնայ ըսուիլ թէ
քան մը չի հնարեր ինքնին , թէ ինչ որ տեսնէ
կ'օրինակէ , եւ երեւակայութիւնը ո'ր աստիճան վառ-
վրռուն ըլլայ . այնչափ աւելի յաջողապէս պիտի
նմանցնէ : Եթէ կը տեսնէք որ փոքրիկ աղջիկ մը
իր պաճուճապատանքին հետ գէշ կը վարուի , վրա-
տան եղիք որ այդ՝ արդիւնքն է այն եղանակին որով
վարուած են իրեն հետ , եւ որովհեաւեւ կը կարծէ
թէ իր պաճուճապատանքը կենդանի է , շատ ցաւալի
է տեսնել անոր այս ընթացքը : Ասկէ մինչեւ կեն-
դանիները չարչարել մէ՛լ քայլ միայն կայ , եւ այն
որ կենդանւոյ մը տանջանքը տեսնելով չի զթար
անոր վրայ՝ զիւրաւ տրամադիր կ'ըլլայ չարիք հաս-
ցընել իր նմանկաց առանց ոեւէ յուղում կամ խղճի
խայթ զգալու :

Այս տարիքին մէջ վերացական գաղափարներ
գոյութիւն չունին , իմայցական գարգացմամբ միայն
կը ստացուին , բան մը սր տակաւին շատ ուշ է :
Ոչ թէ միայն տղան , այլ անհշակ մարդն իսկ
ամէն մէկ աննիւթական գաղափար իր զգայարանաց
ներկայացուած ձեւով կ'ըմբռնէ : Խորհեցէք թէ
քանի տարիներ անցուցինք եւ մեր իմացական
գաստիարակութիւնը ո՛ր աստիճան մշակել հարկ
եղաւ մեզ՝ զԱստուած տարրեր կերպով ըմբռնելու
համար սպիտակամօրուս ծերունիէ մը , ինչպէս
կը ներկայացնեն եկեղեցական սպատկերները . բաց
աստի , տակաւին տրամադրի չե՞նք Արարիչը այս-
պէս ըմբռնել : Մանկան համար Աստուծոյ մասին
ուրիշ գաղափար չի կայ , նոյնպէս հրեշտակաց ,
զիւաց եւ պարիկներու մասին . ռամիկները եւ
տղայք զանոնք պատկերներու ներկայացուցած
ստորոգելիքներով այնքան լաւ կ'ըմբռնեն որ յստակ
գաղափար մը ունին անոնց նկատմամբ . մեզմէ
աւելի ուշադիր աչօք կը զիտնն այս գերբնական
էակները : Ամէն ինչ որ խորհրդաւոր հանգա-
մանք մը ունի . արտասովոր կերպով հաճելի է
մանկական աչքին . անծանօթ միջավայրի մը մէջ
զինքը փոխադրող ամէն ինչ կը հրապուրէ զնա-
ամէն ինչ պատկերներու միջոցաւ միայն կ'ըմբռնէ :
Ուստի այս պահուն երեւակայութիւնը չէ բնաւ որ
պէտք է զարդացնել . կարեւոր է երեւակայութիւնը
եւ իր նմանողութեան բնազզը գործածել՝ մշտնջե-
նական յիշատակութեան արժանի իրաց վրայ գարձը-
նելու համար անոր ուշը :

Խորհելով , կրնանք գաղափար մը ունենալ թէ

դեղեցկին ճաշակը ի՞նչպէս զարդացած է ի մեզ : Այս
ճաշակը աւելի արագ յառաջ կու գայ հոն ուր գոյու-
թիւն ունի մեզ շրջապատողաց քով : Առաջին
տպաւորութիւնք այնքան զօրաւոր են որ անտարա-
կոյս մենէ իւրաքանչիւր ոք կրնայ նկարագրել
կատարեալ ճշդութեամբ այն սենեակը որուն մէջ
անցուցած է իր մանկութեան օրերը , եւ երբ
ժամանակը մեր յիշողութենէն ջնջէ բազում հե-
տաքրքրական իրեր այն թիկնաթոռէն որուն մէջ
ծերութիւնը զմեզ պիտի բեւեռէ օր մը , վերստին
պիտի տեսնենք մեզ աղօթել սորվեցնող դայեա-
կին գէմքը , կամ մեր որորանին առջեւ կախուած
այն պատկերը զոր կը տեսնէին մեր աչքեր երբ
կ'արթննայինք : Բաւական է լսել զանդակի ձայն
մը կամ զդալ ծաղկի մը քաղցր բուրմունքը , ինք-
զինքնիս վերստին դտնելու համար մեր գիւղին եկե-
ղեցւոյն մէջ , կամ այն մարդագետնին ծաղկանց
մէջ ուր կ'երթայինք փնտուել գարնանային գանձեր
եւ յիշելու թէ ինչպէս ապա կը յանդիմանէին զմեզ
մեր ծնողք , զգեստնիս աղտոտած ըլլալնուս համար :
Այս տպաւորութեանց մեր յիշողութեան վրայ անջինջ
մնալը կ'ապացուցանէ այն անհամեմատ զօրութիւնը
որով ներգործած են մեր մտաց վրայ , եւ անոնց
տեւողութիւնը կը բացատրէ այն ազգեցութիւնը զոր
թողուցած են մեր զգալու եւ խորհելու եղանակին
վրայ : Փութանք ուրեմն օգուտ քաղել մանկութեան
օրերէն , եւ ըղեղին համակ սպիտակ այս էջը
խնամով զարդարենք , տալով անոր գեղեցիկ , բարձր
եւ ցկեանս միսիթարիչ տպաւորութիւններ : Մեզ
օժանդակներ պիտի ըլլան այն բաներ որք կը շրջա-

պատեն մեր ըղեղը : Հայր Մօնթէներ , 16րդ դարուն
Գաղիացի վիլիսոփան , ուզեց որ իր որդին որորանէն
ակսեալ գեղեցիկ երաժշտութիւն միայն լսէ , աչ-
քին առջեւ ներդաշնակ առարկաներ միայն պար-
զուին . ուստի իր ժամանակին մեծ գիտութիւնը ,
շատիներէնը , սորվեցուց անոր նուազելով : Անշուք
եւ ամենէն խոնարհ համարուած խրճիթը կրնայ գե-
ղեցիկ եւ հրապուրիչ ընծայուիլ մանկան մատաղ
զգայաբանաց : Դաշտերու մի քանի ծաղիկներ , մի
քանի տերեւներ դիւրամատչելի են ամէն մարդու :
Գեղարուեստի այս օրուան յառաջդիմութիւնը կրնայ
մատուցանել դիւրութիւններ որք անծանօթ էին մեր
նախնեաց : Ատենօք շատ դրամ պէտք էր արուեստի
մերաբերեալ ամէն բանի ընտելանալու համար : Այսօր ,
ամէն ոք կրնայ լեցնել իր տունը , ոչ թէ անարուեստ
եւ տգեղ նկարներով , այլ փայլուն լուսանկարներով
որք մեծ ծախք մը չեն պահանջեր եւ որք նկար-
չութեան փառքը կը կազմեն : Պէտք է զգուշանալ
մանկանց ցոյց տալէ այլանդակ պատկերներ . վասն
դի այսօրինակ պատկերներ տգեղին ճաշակը կը
զարդացնեն , եւ գեղեցիկն ճաշակը կը մարեն :
Մանկանց համար հրատարակուած գրեանք այսօր
այնպիսի խնամով կը տպագրուին , այնպիսի կա-
տարեալ եւ շքեղ պատկերներով կը զարդարուին ,
որ մանուկը մեծ ախորժով կը կարդայ զանոնք :
Կարելի է , առանց մեծ ծախքի մը ենթարկուելու ,
ցոյց տալ անոնց բազմաթիւ առարկաներ , կենդանի-
ներ , տեսարաններ , հեռաւոր երկիրներու պատկեր-
ներ որք կ'արթնցնեն անոնց հետաքրքրութիւնը եւ
ուսանելու փափաքը :

Ինչ որ մանուկը կը լսէ , թէ խօսք ըլլայ , թէ
երաժշտութիւն , պարտի ներդաշնակ ըլլալ , եւ
որքան ալ պարզ ըլլան այն երգեր որք կը հնչեն իր
ականջաց , պէտք է կատարեալ ճշդութեամբ եր-
գուին , եւ երբեք չաղաղակել կամ ոռնալու նման
տգեղ ձայներ չի հանել զնա զուարձացնելու համար :
Մայր մը որ մեղմիկ կ'երգէ քաղցր երգ մը , կարող է
գեղեցիկ տպաւորութիւն մը ընել իր մանկան վրայ :
Այսպէս ներդաշնակութեամբ կազմուած բնութիւն
մը ո՛րքան տարբեր կը լինի բնութենէն այն ման-
կան որ յանկարծ կ'արթննայ զինեւմոլի յիշոցնե-
րու և հայնոյութիւններու ձայներէն , որոնցմով
շրջապատուած են դժբաղգարար բազմաթիւ որորոց-
ներ , կամ մանկանց համար անհանգուրժելի տան-
ջանք մըն է այս , եւ կամ , ինչպէս կը պատահի
յաճախ , պիտի վարժուին այսպիսի բիբր խօսքերու ,
եւ իրենք եւս ողբալի հաճոյք մը պիտի զգան այս-
օրինակ ձայներ հանելով եւ կամ յիշոցներ արձակե-
լով : Ինչպէս որ կարելի է վարժեցնել զնա մաք-
րութեան եւ կարգապահութեան , նոյնպէս ալ կա-
րելի է պաղեցնել եւ զզուեցնել զնա ամէն բանէ որ
տգեղ եւ աններդաշնակ է : Այլանդակ եղանակներ ,
աններդաշնակ ձայներ մանկան վրայ յոռի աղդեցու-
թիւն մը կը գործեն :

Ուստի ճշմարտապէս գեղեցիկ բաներու հետ
ընտանեցնելով զնա , տուած կ'ըլլանք անոր այն-
պիսի դաստիարակութիւն մը զոր թերեւս չի պիտի
կընանք տալ այնուհետեւ : Եթէ տաղանդի զոյզն
բողբոջ մը կը ցուցնէ , այս մշակութեամբ դիւրութիւն
բնծայած պիտի ըլլաք զարգացնելու զայն որ թերեւս

ըլլայ իր կենաց լաւագոյն տաղանդը : Այս մասին անսպառ աղքիւր ունիք բնութիւնը, որուն զանազանութիւնը, հրապուրանքը, առօրեայ զարմանալիքը չեն կարող տաղտկացնել զնա որ վարժուած է բնութեան վրայ սքանչանալ : Ամէն ուրեք գեղեցիկ է բնութիւնը, թէ չոր ու ցամաք դաշտերուն մէջ, եւ թէ ճոխապէս զարդարեալ հովտաց մէջ : Ամէն ուրեք մարդ կրնայ հրճուիլ դիտելով գեղեցկաթուրմ ամպերը, արեգական մնձաշուք ծագումը, խոտ մը կամ միջատ մը: Բնութեան տեսարամները, ձայները, փոփոխութիւնները, պիտի հետաքրքրեն զնայարաժամ, մանաւանդ եթէ այս առարկայից վրայ իր ուշադրութիւնը հրաւիրէք, ծանօթութեան ո՞րքան ճոխ գանձեր պիտի կարենայ համբարել՝ զպոց երթալէ առաջ, եւ ո՞րպիսի տարբերութիւն ճաշակաւ ստանալու եւ մեքենապէս, ձաննձրացուցիչ եղանակաւ մը ստանալու մէջ: Նա որ կը սիրէ բնութիւնը, չէ կարող երբեք անբան անսասուն ըլլալ . այս սէրը միայն բաւական է կոշտ կամ ստորին բանէ զղուեցնելու զնա :

Եթէ կարողութիւն ունինք մանկան ճաշակները ուղելու այն բաներուն որք կախում ունին արտաքին տապաւորութիւններէ, ո՞րչափ մնծ կրնայ ըլլալ մեր ազգեցութիւնը իր սրտին ու մտաց վերաբերեալ ամէն բանի վրայ: Խօսինք նախ խօսելու մեքենականութեան վրայ: Լաւ խօսելու կրնաք պատրաստել զնա անոր քով լաւ խօսելով, այսինքն ընտրելով միշտ յստակ, պարզ եւ մեկին եղանակ մը գաղափար արտայայտելու համար, եւ միեւնոյն ժամանակ խոյս տալով գուեհիկ կամ ուամկական զրուց-

ուածքներէ եւ բացատրութիւններէ : Աստի բնականաբար կը մակաբերուի թէ որքան հարկաւոր է որ մանուկը շրջապատող անձինք բարեկիրթ եւ աղնուաբարոյ ըլլան : Առաջին տարիններուն մէջ, եթէ պարագայք կը ներեն, կարելի է անոր ուսուցանել քանի մը լեզուներ մէկէն՝ խաղալով, առանց ոեւէ յոգնութիւն կամ ձանձրութիւն տալու, վասն զի թէ եւ զայնս կ'ուսանի թութակի պէս, բայց կ'ուսանի արտասանութեան դիւրութեամբ եւ արագութեամբ, զորս չէ կարող ձեռք բերել երբ աւելի մեծնայ : Ամէն աղայք, խօսք հասկնալ սկսելուն պէս, կ'ուզեն որ իրենց պատմութիւններ պատմուին . ուստի այնպիսի պատմութիւններ պատմուելու է որ արթնցնեն արդարութեան զգացումը, բարոյն սէրը, մարդկային գործոց մէջ բարոյական տեսակէտով ճշմարտապէս գեղեցիկ բանի մը համար սքանչացում: Յիսուս առակներով կը խօսէր ժողովրդին, այս մեծ տղուն հետ որ ինքն ալ կը սիրէ պատմութիւն եւ պատկեր: Օգտակարութիւնը կախում ունի պատմութիւն պատմելու եղանակէն: Շատ փոքրիկ մանկան համար, պատմութիւնը պէտք է որ կարճ բայց ազդու ըլլայ, որպէս զի տղուն մտաց վրայ տպաւորութիւն ներգործէ: Երկար բարոյախօսութիւններ պէտք չեն, այլ մի քանի բառերով հասկցնել թէ ինչ է մեր միտքը: Այսպէս անհնաղանգութեան հետեւանքները, վրէժի լուծելէ, անձնասէր չըլլալէ յառաջ եկած ճշմարդիտ հաճոյքը զիւրին է ցուցնել այս եղանակաւ: Աւետարանի առակները, սրբազան պատմութենէ քաղուած փոքրիկ դէպքեր, պատմութենէ քաղուած սրտա

շարժ զրուագներ ընդհանրապէս դիւրըմբոնելի են
մանկանց : Լուսանկարի կամ ոեւէ պատկերի մը
նիւթը կրնայ զործածուիլ իրրեւ պատմութիւն ,
եւ այս պատմութիւնները յայնժամ զօրաւոր կերպով
կը քանդակուին տղուն յիշողութեան վրայ : Ա-
ռանց բարոյական ոեւէ նպատակի , արկածնե-
րու , դժնզակ պարագաներու մէջ ի զործ զրուած
ճարտարութեան եւ մանկական կենաց յիշատակ-
ներու պատմութիւններ միշտ կը հետաքրքրեն մա-
նուկ ականջները : Միշտ յաջողութեամբ փորձած
եմ քանի մը յստակ եւ որոշ բառերով պատմել
հանրածանօթ առակներ , եւ աեսած եմ որ մեծ հա-
ճոյք կը պատճառեն անոնց : Իրենց առօրեայ կենաց
փոքրիկ դիպուածներուն մէջէն կրնաք իրենց հա-
մար բարոյական դասեր հանել , թէեւ կը խորհիմ
թէ այս տարիքին մէջ ընդհանրապէս միայն պատ-
մական մասէն կ'ախորժին : Ուստի պէտք չէ բնաւ-
պատմութիւնը երկարել ուշազրութիւնը յոզնեցնե-
լու աստիճան :

Վերջապէս , միշտ եւ ամեն պարագայի մէջ՝
ջանանք տեղաւորել իր մտաց մէջ ինչ որ կը հաւա-
տանք թէ աղքիւրն է ճշմարիտ երջանկութեան ,
այն երջանկութեան որ կախեալ չէ ուրիշներէ կամ
պարագաներէ , որ ուրիշ միջոցաւ ձեռք չբերուիր
բայց միայն ֆիզիքական եւ բարոյական զօրու-
թեանց հաւասարակշռութեամբ եւ ասկէ յառաջ
եկած գոհանակութեամբ եւ ներքին խաղաղու-
թեամբ : Ասոնք պարզ ճշմարտութիւններ են . սա-
կայն երկու կերպով միայն կրնան թելադրուիլ
մանկան . առաջին՝ դայնս սիրելի ընծայելով ա-

նոնց, այսինքն մատաղ երեւակայութեան ներկայելով այնպէս որպէս թէ աշխարհի մէջ ամէնէն բազծալի եւ ամէնէն զեղեցիկ բաներն ըլլային . երկրորդ՝ անձին օրինակով, հաւատալով անոնց եւ յարդելով ինչ որ կ'ուսուցուի : Ասկէ աւելի բարւոք եղանակ կը մնայ անձնական հանճարամտութիւն եւ նախաձեռնութիւն . ես միայն թելազրութիւններ կ'ընեմ : Այս գործին մէջ խմաստակութեան սառերն անդամ մուծանելու չէ, պայծառ եւ մաքուր մթնուրատով մանաւանդ պէտք է շրջապատել այս փոքրիկ էակներ : Վերացական, վարդապետական խնդիրներ մուտ գանելու չեն անոնց ուղղեալ զրուածոց եւ խօսակցութեանց մէջ, եւ ոչ իսկ բունութեամբ աշխատցնել զանոնք, այլ ինչ որ անոնց օգտակար է, պէտք է հաճելի եւ ուշազրաւ ընծայել անոնց : Անդադար բարիքի վրայ քարոզելն յաճախ ձանձրոյթ կը պատճառէ . ահա զիխաւոր կէտը որմէ պարտ է զգուշանալ : Ինչ որ ձեր անձին համար սիրելի եւ հաւատալի է, զայն միայն սորվեցնելու էք անոր : Գիտէք արդէն թէ ո'րքան ոգեւորութիւն եւ հետաքրքրութիւն կը պատճառէ պատմել այլոց այն բանը որ ձմարտապէս սիրելի է ամէնուն : Ինչպէս կ'ըսէ գերմանացի մեծանուն քերթողը, կէօթէ . « Զեր խօսքը չի պիտի կրնայ ցնցել այլոց սիրաը, եթէ ինչ որ կ'ըսէք չի բզիսիր ձեր սրտէն » :



ի.

Խաղալիկներ . — Մեծածախ խազուսներ . — Վճառակար զարդարաններ . — Սննդաս զարդարաններ . — Դրամներ ողբարմարիներ . — Հասարակաց խաղեր . — Ֆիզիքականի եւ մատուրականի վրայ ունեէ դիտողութիւն ընելէ զգուշանալ :

Խաղալիկներու խնդրոյն մէջ կատարեալ պարզութիւնն է անոնց ճշմարիտ արժանիքը : Մանկունք կը սիրեն ինչ որ աղմուկ կը հանէ , ինչ որ վիրենք կը ցնցէ : Պարզ կառք մը աւելի հաճոյք կ'ազդէ նոցա քան չքեղ կառք մը , այն պաճուճապատանիքը որ ոչ զլուխ ունի եւ ոչ անզամ , շարք մը մանկանց սիրեցեալ առարկան կը լինի : Յաճախ տղայք իրենց ուղածին պէս կը ձեւափոխեն այն խաղալիկը որ ուրիշ նպատակի մը համար շինուած էր : Տղայ մը որքան երես առած ըլլայ , իր առջեւ որքան մեծածախ խաղալիկներ լեցուի , զանոնք այնքան նուազ կը վայելէ : Այն փոքրիկ աղջիկը որուն համար իր հայրը հաղար դժուարութեամբ յաջողած է քանի մը փարայով պաճուճապատանիք մը գնել՝ տեւական հաճոյք մը պիսաի վայելէ անկէ եւ զայն խնամով պիտի պահէ . զայն ունենալու համար օրերով սպասելը՝ իր փոքրիկ երեւակայութեան բոլոր գեղեցկութիւններով զարդարած է իր սիրեցեալ գանձը : Հարուստին տղան կը գանզատի միշտ իր ունեցածէն .

վայելել չի գիտեր ինչ որ ունի իրրեւ խաղալիկ : Հալուստներուն համար իրենց զաւակները ընծաներով խեղդել ճշմարիտ գժբաղդութիւն մըն է . վասն զի տղայք շատ կը ճանձրանան անկէ : Այն տղայք որ բաւական զուարթաբարոյ են եւ ուստի չեն չփանար այս ծայրայեղութեամբք , — ծայրայեղութիւն որ այնքան վնասակար է իրենց ըղեղին համար որքան շաքարեզէնք որոցմով կը խճողեն իւրեանց ստամոքսը , — բոլոր այս գեղեցիկ առարկաներէն քիչ հաճոյք միայն կը քաղեն : Դալով աղքատ տղայոց , սոցա համար պարզ խաղալիկներն իսկ արաւասովոր հաճոյք կը պատճառեն :

Ասոնցմէ կը տեսնուի թէ այնքան պարսաւելի եւ մեղաղրելի են այն մեծամեծ ծախքեր որ կը լինին խաղալիկներու համար : Տղաքները զբօսցնելու համար այս շոայլութիւնք օգուտ մը չեն կարող ընծայել : Միւս կողմէ ախուր հետեւանքներ ալ ունին , բացի յափրացումէ , վերին աստիճան կ'աւելցընեն նոցա ինքնասիրութիւնը : Ուստի պէտք չէ զարմանալ որ նոքա կը լինին մնապարծ , ուրիշներու մասին անհոգ , միմիայն իրենց զբօսանաց ետեւէն եղող , անխորհրդաբար իրենց ժամանակը ըսպաննող : Այս հետեւանաց պատասխանառուն զո՞վ պէտք է ճանչենք : Ո՞րպիսի հիման վրայ կրթեցինք զանոնք , մենք որ ունէինք ալրիւր , ծանօթութիւն եւ միջոց՝ իրենց համար պատրաստելու երջանիկ եւ աղնիւ կեանք մը : Բնդհակառակը , կ'ուսուցանենք նոցա սկիզբէն ի վեր թէ զարդ է ինչ որ երջանկութիւնը կը կաղմէ : Նոցա կը թելաղբենք գրամին դերազանցութեան գաղափարը , եւ ոչ թէ աշխատու-

թեան գերազանցութեան գաղափարը , քանզի աշխատութենէն է որ դրամ կը ծնի : Գթութեան զգացումը կը թելադրենք այսպէս . նոցաձեռքը քանի մը փարա կուտանք մուրացիկներու տալու համար , եւ կամ իրենց կոտրած խաղալիկները կամ իրենց մաշած հագուստները աղքատաց բաշխել տալով , եւ այս առթիւ ընդունելով շողոքորթիչ շնորհակալութիւններն անոնց որոց ողորմութիւն մը կ'ընեն որ իրենց համար արժէք մը չունի : Ոչ , յանցանքը մերն է որ այս մատաղ սրտերը մեր անձնական սըխալներով ապականած եւ կուրցուցած ենք , վասն զի իրերը ցուցած չենք նոցա իրենց ճշմարիտ երեւոյթին տակ , կարելի չէ այսքան կանուխէն սորվեցնել նոցա ճշմարիտ արժէքը դրամին , այս աճարկու զօրութեան , որ կը ներկայացնէ աշխատութիւնը եւ զրկանքներն այն ամէն բանէ որ զմեզ կը շրջապատեն : Այս տեսակէտով պէտք է սորվեցունել նոցա յարգել զայն իրրեւ տուիչ զիւրակեցութեան եւ հանգստութեան . ցոյց տանք անձին օրինակաւթէ գերազոյն պարտականութիւն մըն է խնայել զայն անձնական քմահաճոյից դէմ : Տղայ մը , ո'ր զրից մէջ որ գանուի , զրամին արժէքը պէտք է որ գիտնայ : Ոչ ոք պարտի ողորմութիւն տալ առանց անձին զրկման եւ այս հաճոյքը վայելելու արժանիլինելու : Դիւրակեցութեան եւ հարստութեան ճշմարիտ առանձնաշնորհումը կրնայ ուսուցուիլ միայն այս կերպով . — շատ ուրիշներն երջանիկ ընելու միջոցն է այս : Բայց վարձատրութիւն մըն է այս , ոչ թէ արժանիք մը . ճշմարիտ հաճոյքը ասոր մէջ կը կայանայ , եւ աղքատք ինչպէս նաեւ հարուստք

կրնան վայելել . այն անհամեմատ գոհունակութիւնը զոր կը պարգեւէ ճշմարիտ զթութեան գործ մը : Դրամի չգոյութիւնը անկարելի չընծայեր իրարուծառայութիւն մատուցանելու գործը . աղքատը կը բնայ հարուսախն տալ իր ոյժը , իր բարեկամութիւնը , իր թեւն ու թիկունքը . ուստի ուսուցմանց ամէնէն սխալը , ամէնէն ողբալին պիտի լինէր այն — զոր կը թելաղրենք գրեթէ անզգալապէս — թէ հարստութիւնը կը կազմէ անձնական գերազանցութիւն : Ո՞հ , լաւ գիտեմ որ բանիւ եւ գործով կը քարոզենք հակառակը . բայց մեր արարք , մեր կեանք , մեր անզիտակցութիւնը որոցմով զոմանս զմարդիկ արհամարհելու համար իրենց հարստութեան համեմատ եւ զայլս այնպիսիներու վրայ նաև խանձելու համար կը պատրաստենք , լիուի կը հաստատեն ինչ որ կ'ըսեմ :

Մեծածախ խաղալիկներուն պէս , մեծազին հազուստներն եւս երջանիկ չեն ըներ մանուկները ։ Իրենց ճշմարիտ հաճոյքն է այն հազուստը որմէ գանգատելու պատճառ մը չունին . ուստի ամենապարզ , ամենազիւրասար եւ ամենաատոկուն հանգերձներն անոնք են զորս իրենց անձնական ընտրութեամբ կը նշանակեն : Մեր մնապարծութեամբ է որ ժանեակներով եւ զանազան զարդերով կը բեռնաւորենք զանոնք : Այս անտեղի պճնասիրութիւնը փոխակալ օրըստօրէ նուազելու , ընդհակառակը կ'աւելնայ բոլոր ընկերական շրջանակաց մէջ , եւ ցաւ ի սիրտ կ'ըսեմ թէ այն մայրերն որք , զաստիարակութեան բերմամբ , այս յիմարական սովորութեան դէմ կենալու պարտաւոր էին , ընդհակառակն անոր դրօ-

շակակիրն են։ Եւ սակայն այս հակամիտութիւնը կնոջ մէջ վերին աստիճան կ'աւելցնէ անձնասիրութիւնը եւ փափաքը, եւ կը կազմէ իր ճշմարիտ գերութիւնը։ Այսպէս, կրնաք գիտնալ ուրեմն թէ զայն քաջալերելով վախճանը ուր կը հասնի։ Ո՞րքան լացեր, ո՞րքան յանդիմանութիւններ, ո՞րքան ընտանեկան բանակորիւններ տեղի կ'ունենան այս պատճառաւ։

Խախալիկ, հագուստ, վերջապէս ինչ որ կը վերաբերի մանկան, պարախն ըլլալ պատշաճ, պարզ եւ վայելուչ։ Ճշմարիտ զարդը կը կայանայ օդին, մաքրութեան, սննդեան, միջոցի եւ ըստ բաւականի ջերմութեան մէջ։ Որքան առատօրէն շոայլուին այս զարդեր, այնքան նպաստաւոր եւ օգտակար կը լինին բարոյապէս եւ Գիղիգապէս։

Այս ծանր խնդրոյն մէջ չի սխալելու համար, հայր մը պէտք է գիտնալ թէ ինչ պարտի ընել իր զաւակաց համար։ Յաճախ տեսած եմ դառն պարանքը այն բարեմիտ կիներու որք կը խոստովանին միամտաբար թէ, հակառակ իրենց այնքան խնամոց, իրենց զաւակունք հակառակը կը լինին իրենց բաղձանաց։ Մինչեւ տասնեւհինգ կամ տասնեւվեց տարեկան եղած ատեններն իր սնապարծութենէն, իր անձնասիրութենէն, իր ունայնամտութենէն պէտք է երկնչիլ. ուստի խստ հսկողութեան տակ առնուելու են։ Յանդիմանութիւնք, պատիժք պէտք չէ խնայուին։ Յայց ո՞րն է այն սերմը ուստի պարտի յառաջ դալ վեհանձն, անձնասէր եւ սիրալիր նկարագիրը։

Ուստի սկիզբէն ի վեր բնաւ սխալ մը տեղի ունենալու չէ։ Ո՞րն է աւելի լաւը. անձնասիրու-

թիւնը , մնապարծութիւնը , որտի չորութիւնը ,
թէ վեհանձնութիւնը , անձնութրութիւնը եւ զթա-
սիրութիւնը : Այս երկու տարբեր ճանապարհաց մէջ
երջանկութեան ճանապարհն ո՞րն է : Ահաւասիկ
բան մը որուն վրայ անձնիւր ոք որ մանուկներով
կը զրադի պարտի լրջօրէն խորհիլ՝ գործի ձեռք
զարնելէ առաջ , եւ այս մասին պէտք է անփոփոխ
որոշում մը տայ , վասն զի սկիզբէն ի վեր մշակուա-
ծը յետ այնորիկ ջնջել զրեթէ անկարելի կը լինի :
Սերմը կանուխէն ցանուած լինելով , հունձքն ալ
պատրաստ կ'ըլլայ : Բայտ իս , որովհետեւ համոզուած
եմ որ մարդս որքան նուազ մնապարծ եւ անձնասէր
է , այնքան առաւել բաղդ կայ երջանկութեան ,
պարտականութիւնն է ձեր որոշման կարեւորութիւնը
խմացնել ձեզ : Բայց պարագայից բերմունքը պէտք
չէ որ առարկութեան շարժառիթ նկատուի . հա-
րուստ եւ աղքատ , ամէն ոք այս սխալանաց են-
թակայ կրնայ ըլլալ : Հարստութեան արտաքին նը-
շաններուն , յաչս մանկան , արժէք տալով՝ նորա
մնապարծութիւնը եւ ազանութիւնը քաջակերած
կ'ըլլաք : Կը սկսի այսու սխալ խորհիլ բոլոր այս
բաներուն վրայ , եւ սակայն կարեւորն է ուղիղ
խորհիլ : Իրերը իրենց ճշմարիտ արժէքովը գնահա-
տելով միայն , այսինքն այնքան արժէք տալով նո-
ցա որքան կը նպաստեն ներքին երջանկութեան ,
ինքզինքը պիտի գտնէ , ինչ որ ալ լինի իր կացու-
թիւնը , մասնակից՝ ճշմարտութեան ծառայողներու
յաւիտենական եւ փառապանծ գնդին , որ եղած է
եւ պիտի լինի միշտ աւելի հզօր քան զայլս :

Ուրեմն փոխանակ թոյլատրելու գնա կեղրոնա-

ցընել բոլոր իր գաղափարները իր անձին վրայ , իր քմահաճ տրամադրութեանց վրայ , ըստ կարելւոյն իր հետաքրքրութիւնը գրգռենք այն բանի մասին որ զինքը կը շրջապատէ եւ թէ առանց դիտելու եւ առանց ճանչնալու այնքան մարդիկ կ'անցընեն իրենց կեանքը : Դեղեցիկ եղանակին մէջ , պիտի պեղէ , պիտի մաքրէ , պիտի տնկէ հաճութեամբ . բայց առաջին տարիներուն մէջ , առանց շարունակային գործունէութեամբ , վասն զի կը մոռնայ իր գործին նպատակը եւ փոփոխութիւն կը պահանջէ : Զինքը ճանձրացընող բանը շարունակելու պէտք չէ ստիպել դնա . մարմնոյ եւ տպաւորութեանց շարժականութեամբ , նոր բաներ կը փնտոէ : Սակայն , զէպ ի հինգ տարեկան , կրնայ ըստ բաւականին հետաքրքրութիւ գաղափարով մը՝ խնամելու համար տունկ մը եւ նորա զարգացումը պաշտպանած լինելուն վրայով ուրախանալու համար : Բայց բոլոր զրօսանաց լաւագոյնը առհասարակ ընդունուած խաղերն են : Իրենց անձնական նախաձեռնութեան թողուած մանուկներու ամբոխ մը , ուշագրաւ ուսումնասիրութեան առիթ կ'ընծայէ . հոն երեւան կ'ելնեն իւրաքանչիւր մանկան ճաշակները , բնազդները , ձիրքերը եւ անոնց մէջ կը տեսնուի միշտ մէկը որ կը կառավարէ զայլս . ամենեքին կը հնազանդին նմա , եւ ամենէն հանճարեղն է նա որուն կ'իյնայ այս վիճակը : Այս ազգեցութիւնը երբէք իր Փիզիգական ուժով չի ստանար . մարդկային էակը յորրանէ անտի կը խոնարհի բնազդօրէն՝ իմացական գերազանցութեան առջեւ : Այս խաղեր կ'ապացուցանեն թէ մարդիկ բնութիամբ հրամայող եւ հնազանդող դա-

սերու բամնուած են : Հաւասարութիւն չի կայ մեր
մէջ ինչ որ ալ երազենք այս մասին , եւ մանկա-
կան հասարակապեսութիւնն է միակ որ կ'ընտրէ իր
պետք՝ միակ ճշմարիտ գերազունութեան — այն է
նկարագրին — համար : Քանզի հանճարեղներուն
մէջ , իր անձին վրայ ամենէն աւելի իշխանութիւն
ունեցողին է որ հնազանդութիւն ցոյց կը արուի :
Առովայուզութեան անտարբեր տղան , որ ճշմարիտը
կ'ըսէ աներկիւղ եւ անվեհեր , որ գիտէ զսպել
բարկութիւնը եւ զիւրաւ տեղի տալ վասն զի կա-
րեւորութիւն չընծայեր իր ընկերակցաց համար
սոսկում պատճառող իրաց , վերջապէս այն որ կըր-
նայ իւր անձը մոռնալ այլոց օգնելու համար , կը
յարգուի միշտ իր ընկերներէն : Այս յարգանքը կ'ա-
պացուցանէ մեր մէջ արդարութեան բնածին զգաց-
ման գոյութիւնը . զրից եւ ցեղի արուեստական տար-
բերութիւնք կրնան անհետանալ . — այդ գերազու-
նութիւնը միշտ ամէնուն կողմէն պիտի ճանչցուի :
Պէտք չէ վիշտ զգալ երբ ձեր մտադիւր հոգածու-
թեան առարկայ եղող մանուկը հնազանդողներուն
մէջ կը գանուի . աւելի լաւ է այս՝ քան տեսնել զանի
նախանձու եւ զժկամակութեամբ մեկուսացեալ՝
առաջին տեղը չունենալուն համար : Ողջմասութիւն
կը նշանակէ այս . ասոր անժխտելի ապացոյցն է թէ
իրմէ աւելի բարձր նկարագրի մը տէր էակի մը
հսկողութեան տակ կը մտնայ :

Եթէ մանուկ մը տկար արամազրութեամբ օժ-
տեալ կը թուի ձեզ , զգուշացէք յիմար կոչելէ զանի .
ընդհակառակը , զովեցէք . վասն զի գովեստը կը
նպաստէ իր զարգացման առաւել քան բոլոր դի-

առղութիւններ զորս կ'ուղէք անոր՝ իր յիմարութեան ակնարկելով։ Ի սկզբան մանուկ մը որ քիչ մը երկչոտ է, աւելի անմիտ կը թուի մեղ, մենք որ չենք գիտեր իր ներքին կացութիւնը, ինչ որ չէ իրապէս. յետոյ, երբ կը տեսնայ որ զինքը այսպէս կը նկատեն, իր երկչոտութիւնը կ'աւել-նայ, քանդի կը տարակուսի իւր ստորնութենէն եւ միշտ չափազանց ստորադաս կը նկատէ ինքզինքը։ Այս իրողութիւն կրնայ աղբիւր լինել ճշմարիտ տառապանաց, եւ իրապէս արգիլել իր զարգացումը։ Այսպիսեաց պէտք է շուայլել քաջալերութիւն։ Շատ ձիրքերով օժտեալ տղայք որ աւելի նուազ քաջալերութեանց կը կարօտին, ընդհակառակը՝ մեծապէս կը քաջալերուին, Անխորհուրդ գովեստներ եւ քաջալերութիւններ իրենց զարգացման կը վը-նասեն։ Ընդհանրապէս բան մը այնքան աղէտա-բեր չէ որքան տգեղութեան, անմտութեան, գե-ղեցկութեան եւ հանճարի վրայ դիտողութիւնք։ Դիտողութիւնը ներելի է այն բանին վրայ որ իր անձնական նախաձեռնութենէն յառաջ կուգայ, եւ բացարձակապէս աններելի՝ երբ կը վերաբերին այն-պիսի իրաց որք իր կամքէն անկախ են, ինչպէս ֆիզիզականը եւ իմացականը։ Այսու ինք իր անձին կարեւորութիւն կուտայ. ընդհակառակը, պէտք է զբաղեցնել այն ամէն բաններով որք զինքը իրմէ անջատելու կը ծառայեն։ Մարդասիրական կամ ան-տեղի դիտողութեամբք կը քաջալերենք ումանց ինք-նահաւանութիւնը եւ ումանց եւս պատճառ կու-տանք արտասովոր մտախոնութեան որ տեսակ մը բարոյական հիւանդութիւն կ'ենթաղբէ։

Համոզուած եմ որ մենէ իւրաքանչիւր ոք իրապէս կը տառապի այն բանով որ կը վերաբերի իրեն անհատականապէս : Ասկէ ծագումն առնող ամէն ինչ կրնայ ի գութ շարժել եւ հետաքրքրել զայն, այլ չի տար երբէք անոր դաւեն կամ սնապարծ ըղպացումներ : Քանի որ մանկան երջանկութիւնը կախումն ունի այն ուղղութենէն զոր կուտանք իր փափաքանաց եւ արամաղրութեանց, աշխատինք ուրեմն այս ճամբուն մէջ :

Ըսկերութեամբ տեղի ունեցած խաղերուն շատ միջոց տալով հանդերձ, չափէն աւելի դեռահաս մանուկները երբէք առանց հսկողութեան պէտք չէ թողուլ, քանզի առանց վայրագութեան իսկ կրնան յանդէտս մասել փոքրներուն կամ տկարներուն : Շատ հետաքրքրական կը գտնեմ հետամուտ ըլլալ իրենց անհատականութեանց որ այնքան քաղմազան է միմեանց հետ ունեցած յարաբերութեանց մէջ, եւ մինչեւ իսկ իրենց մանկական խօսակցութեանց մէջ : Շատ զարմանալի նիւթերու վրայ կը խօսին . շատ հետաքրքրաշարժ բաներ կը յիշեն, այնպիսի բաներ որք ըսուած են իրենց ներկայութեան առջեւ : Զգուշութիւն ընել պարտինք ուրեմն մեր խօսակցութեանց մէջ, եւ եթէ բացարձակապէս պէտք ունինք մէկն անուանարկելու, մէկուն վրայով թշնամական խօսքեր ընելու, հեռանալ պարտինք անոնցմէ, վասն զի անոնք պիտի կրնան հասկնալ մեղ : Ահաւասիկ խրատ մը որ հիմնուած է այս սիրեցեալ փոքրիկներուն յիշողութեան եւ լսողութեան փորձառութեան վրայ :



Ը.

Տարբերութիւն ընդ մէջ դաստիարակութեան եւ ուսուցման. — Թէ՛ որ պարագայից մէջ պէտք է պատրասել բարձր ուսմանց. — Սննդամոց զարգացում. — Ճարավիկութիւն. — Թերեւաւաժութիւն. — Դիտելու համար զգայարանքը զործածել զիտնալ. — Տարեք երաժշտութեան եւ զծագրութեան, անհրաժեշտ ամենուն:

Եթէ յաջողեցայ ցուցնել թէ գլխաւոր դաստիարակիչ տարերք կը գտնուին տղան շրջապատող քանին մէջ եւ ոչ ուղղակի ուսուցմանց մէջ, պիտի ընդունիք բնականաբար թէ դաստիարակութիւնը կը սկսի օրորոցէն, եւ թէ դաստիարակութիւնը անհրաժեշտ է, քանի որ գպրոցական բարձր կրթութիւնը ամէն մարդու մատչելի չէ, եւ չի կրնար դաստիարակութեան պակասը փոխարինել. դաստիարակութիւնը պարտի գրեթէ վերջացած ըլլալ հոն ուր կը սկսին ուսուցմունք: Ուսուցմունք չեն որ առողջութիւնը կամ նկարագիրը կը կազմեն. եթէ մտաց հողը որու վրայ կ'իյնան ուսուցման սերմեր պատրաստուած, ըլլալ, քանի մը չեն ծառայեր եւ կրնան իսկ վտանգաւոր ինչպէս վտանգաւոր պիտի լինէր զեղ մը յանխորհուրդս գործածուած, կամ սուր դանակ մը՝ տղումը ճեռքը անցած: Դարրոցի գրասեղաններէն «դաստիարակութիւն պահանջել անիրաւութիւն» է. «ուսումն» է ճշմարիտ բառը: Ապացուցանենք դայս.

բովանդակ աշխարհի մէջ , մեծամեծ չափ մարդիկ ընդհանրապէս ուսեալ , երբեմն ալ զիտուն մարդիկ են , բայց առանց դաստիարակութեան . եւ ամենէն թշուառ արարածոց մէջ , դպրոցները յաճախողներն են որ մեծ դժուարութեամբ կը ճարեն իրենց օրապահիկը , որոնց մէջ անձնասպանութիւն կամ յուսահատութիւն իր անթիւ զոհերը ունի :

Ուստի ի սկզբանէ անտի ուսման չի վերագրենքր այն արժանիքը զոր ըստ ինքեան չունի . ուսումը կ'ըլլայ բարոյական թանկագին գործիք մը այն մարդկային էակին համար որ առողջ դաստիարակութիւն մը սաացած է : Մեր դաստիարակութեամբ հսկենք որպէս զի ուսումը դպրոցաց եւ քննութեանց մէջ առաջին հանդիսանալու իրեւ միջոց մը չի նկատուի . այլ ազրիւր զոհունակութեան , ճշմարիտ լոյս եւ միծ օժանդակ կենաց խնդրոյն մէջ : Մեքենական ուսողութիւնը անսպառող , խոնջիչ եւ տաղտկացուցիչ աշխատութիւն մընէ : Այսպէս է սակայն որ կը կատարուի ընդհանրապէս առաջին տարիներուն մէջ . պատճառը յոյժ պարզ է . ուսմունք չափ կանուխէն կը սկսին մանկանց ընդհանրութեան համար . ժամանակէն առաջ անոնց կը թելագրուին շարք մը ծանօթութիւնք որք կը չփոթեցնեն , քանի որ չեն հասկցուիր , եւ ըղեղային աշխատութիւնը կը խանգարէ այս փափուկ գործարանը որում չի տրուիր զարգանալու միջոց բնական կամ յառաջդիմական կերպով : Այս աճապարանքը յառաջ կուգայ այն քանէն թէ ոչ ժամանակ եւ ոչ միջոց կ'ունենայ տակաւ առ տակաւ սկսելու , եւ հետեւարար , զայն ասպարէզ մը ընդգրկելու վիճակին մէջ դնել շտա-

պելով , կարելի եղածին չափ քիչ տարիներու մէջ ամէն կարելի բաներ սորվեցնել կ'ուզուի :

Ինձ կը թուի թէ միակ պարագայն յորս ծնողք պարտին խորհիլ իրենց զաւակաց համար բարձր ուսմանց վրայ , հետեւեալներն են .

1^o. Եթէ իրենց վիճակը կը ներէ ուշացնել զպրոցի աշխատութիւնը եւ պատրաստել միօրինակ եւ աստիճանական զարգացմամբ ֆիզիզական , իմացական եւ բարոյական կարողութեանց : Այս կարողութիւնք այն աստիճան անքակտելի կերպով միացած են , որ կարելի չէ մէկը զօրացնել , առանց միւսներուն մեաս պատճառելու :

2^o. Երբ տղայ մը բացառապէս օժտեալ է , ազատաբար եւ եռանդեամբ կ'աշխատի , այն բանին ջերմապէս հրապուրուելով : Գերագոյն իմացականութիւնք ամէն բանի կը յաղթեն . անուանի անձանց պատմութիւնը կ'ապացուցանէ դայս :

Գալով անոնց զորս կը ձանձրացնեն եւ կը յոդնեցնեն ուսմունք , ինձ կը թուի թէ անմտութիւն է այն բանին բռնաղատել զանոնք : Այս ծուլութիւն՝ զինքը երթարկել ուզուած աշխատութեան չի կարենալ տոկալու աստիճան շատ տիկար բնութեան մը ապստամբութիւնն է : Անոնց համար , ընելիք առաջին բանն է մատառրապէս զօրացնել զանոնք , քաղցրութեամբ եւ համբերութեամբ , վասն զի բռնութեամբ փոխելու ձեռնարկել փորձուած ամէն ինչ , ուրիշ բանի չի ծառայեր , բայց միայն աւելցնել անոնց աշխատութենսէ զզուանքը : Դպրոցական ուսման համար այս յետաձգման ժամանակէն օգուտ քաղելով , պէտք է ջանալ ճանչնալ իրենց բնական

ընդունակութիւնը . իւրաքանչիւր մանուկ բնական ընդունակութիւն մը ունի , եւ ինչ որ ալ ըլլայ , թողունք զանոնք որ անոր հետեւին : Աշխատութեան եւ ոչ մի սեռը ըստ ինքեան ամօթալի կրնայ ըլլալ . կարեւորն , մեր վաղանցուկ կենաց համար , այն է որ լաւ ընենք ինչ որ կ'ընենք , եւ մանաւանդ դատարկ չի մնանք : Մնացեալը նախապաշարում է , ծնողաց արժանապատութեան գործ է եւ . կը վախնամ ըսել , անյաջողութիւն մըն է , եթէ առաջադրեալ նպատակն է մարդկային էակի մը երջանկութիւնը : Համոզուած եմ որ երբ մասնաւոր տարիքի մը մէջ , բարձր ուսմանց փափաքը չի զարթնուր , պատճառն է կատարեալ անընդունակութիւն եւ հետեւաբար կազմային տկարութիւն մը զոր դժուարին է դարմանել : Եթէ որոշեալ աշխատութեան մը համար յարմարութիւնք կը պակսին , ամէնէն փայլուն քննութիւնք չեն ներեր որ անհատ մը զիտնայ գործածել ինչ որ իրեն ուսուցուած է : Ասոր ապացոյցը կը աեսնենք բարձրագոյն դասակարգէ բազմաթիւ անձանց վրայ որք , համալսարաններու եւ բարձրագոյն վարժարաններու մէջ , ուսանելէ զկնի , անգամ մը որ զուրս կ'ելնեն անկէ , դատարկապորտներ են բառին ընդարձակ նշանակութեամբ , ժամանակնին կը սպաննեն խաղամոլութեամբ . որսօրդութեամբ՝ եւ որոնք իւրովի կը հարցընեն արդարեւ թէ ինչո՞ւ համար այնքան չարչարուած են իրենց մանկութեան մէջ՝ իրենց ուսուցուելու համար այնպիսի բաներ որք երբեք օգուտ մը չեն ունեցած իրենց համար :

Անհատի մը ուրիշէ մը տարբերութիւնը այն-

պիսի իմն է որ անկարելի է որոշել տարիքը յորում
կրնայ սկսուիլ շարունակային ուսմանց , եւ յապա-
ղում մը առ այս՝ գֆբաղդութիւն մը չէ : Յապա-
ղումը առաւել նուազ վնասակար է քան ապաժա-
ման աճապարանքը : Մինչեւ իսկ օժտեալ մանկան
մը համար սիսալ է օդուտ քաղել իր կարողութե-
նէն՝ իւր տարիքէն դուրս զինքը ուսման պարա-
պեցնելու մամար : Ճօն Սթուարթ Միլ, դարուս
մեծահանձար հեղինակներէն մին , իր ինքնակեն-
սագրութեան մէջ կը պատմէ թէ ինչպէս իր հայրը,
իր կանխահաս տաղանդները չարաչար գործածելով,
սովորեցուց իրեն , երեք կամ չորս տարեկան եղած
ատենէն սկսեալ , Լատիներէն եւ Յունարէն , եւ
զինքը զիտութեան հրաշալիք մը լինելու առաջար-
կեց նոյն տարիքին մէջ յորում այլք կը հեգեն ի-
րենց այրուբէնը . արտաքոյ կարգի դիպուածաւ մը ,
իր յետազայ ուսմունք չի նեղեցին զնա . հասուն
մարդը յաջողեցաւ ձեռք ձգել զոր ինչ կը խոստանար
մանուկը . բայց իր կեանքը բովանդակ տիսրու-
թեամբ պաշարուած մնաց՝ մանկութիւնը չի վայե-
լած լինելուն համար . կը յիշէ միայն այս երջանիկ
ժամանակը տրտմութեամբ եւ զզուանքով . երջանիկ
չեղաւ : Այս բացառիկ պարագային մէջ իսկ կը
տեսնուի թէ իր երջանկութիւնը , իր էութեան հա-
ւասարակշուութիւնը , որքան վնասուեցաւ այս բըռ-
նազբօսիկ մշակութեամբ , որ կը թուէր թէ չէր ու-
նեցած աղէտալի հետեւանք . սովորական ըղեղներու
համար հետեւանքը եղած է հիւանդութիւն կամ
խելագարութիւն : Հրաշալի տաղանդի տէր տղայք
առհասարակ միջակ կազմութիւն մը կ'ունենան

կամ երիտասարդ կը մեռնին : Ո՞ զիտէ թէ Մօձառթ,
Գերմանացի անուանի երգահանը , լաւագոյնս չե
պիտի մաքառէր ընդդէմ հիւանդութեանց որոց տակ,
աւա՛ղ , ընկճեցաւ այնքան կանուխ , եթէ իր ման-
կութեան երեկոյթները անցուցած չի լինէր սրահ-
ներու մէջ , դիւթելու եւ յապուշ կրթելու համար
իր ունկնդիրներ : Ամէն ինչ սակայն դիւրին կը
թուէր նմա . բայց իմացական այս տարապայման
մշակութիւն իր կենսական ոյժին վեստակար էր ,
վասն զի ստացածէն աւելի կը սպառէր անկէ , այն-
պիտի տարիքի մը մէջ յորում ամէն ինչ պարտի զօ-
րանալ եւ յորում տեղի կ'ունենայ զարդացման գոր-
ծողութիւնը որ կը լափէ կը սպառէ յետ այնորիկ մի-
այն կազմութիւնը զօրացնելու համար գործածուած
ուժերուն մեծ մասը : Մնունգ , քուն եւ հանդիստ մեծ
չափով հարկաւոր են այն ատեն երբ բնութիւնը կը
պահանջէ ամէն ինչ հասակին եւ անդամոց զար-
գացման համար :

Եթէ կանխահաս աշխատութիւնը ծանր հետե-
ւանքներ կը ծնի այն արարածոց համար որք այնքան
բացառիկ կերպով օժտեալ են որքան անոնք որոց
վրայ խօսեցայ , հազար ո՛րքան սովորական մտաւոր
կարողութեան տէր մանկանց համար ծանրակշիռ
է այս վեասը , այն մանկանց համար որք մեծ
գժուարութեամբ կը սովորին . ուստի մանուկը ըղե-
ղային չափազանց աշխատութենէ պէտք է ետ կե-
ցընել : Ասոր համար է որ լաւ ճանչնալու է անհա-
տականութիւնը . ըղեղը երբէք չափէ դուրս յոգ-
նեցնելու չէ , երբէք բան մը մեքենապէս ուսուցանե-
լու չէ : Լաւ հասկցուած , լաւ պատճառարանուած

սկզբունք մը դիւրութեան զարմանալի արդիւնք մը
յառաջ կը բերէ : Եթէ մանկան մը ապագային հա-
մար որոշում մը արուած չէ , պէտք է թոյլ տալ որ
աշխատի ինչպէս որ կ'ուղէ իր բնութիւնը : Իրեն
արուած կարողութիւններ չեն կրնար արուիլ . ինչպէս
ուրիշ կարողութիւններ չեն կրնար արուիլ . ինչպէս
մէկը կրնայ սպաննել մարդ մը , բայց չի կրնար եր-
կայնահասակ ընել զայն , եթէ թզուկ է :

Ուստի զպրոցական ապագայ յաջողութեանց
վրայ խորհելէ առաջ , խորհինք այն բաներուն վրայ
որք հարկաւոր են ամենուն : Ինչ որ ալ ըլլայ ման-
կան ապագան , զիտուն , գործաւոր , արհեստաւոր ,
մշակ , եւայլն , կենաց մէջ յաջողելու համար , պէտք
է կարելի եղածին չափ զարգացնել անոր ան-
դամները , իր խորհելու կարողութիւնը , իր ոյժը
եւ ճարտարամտութիւնը : Իր բոլոր տուաջին տա-
րիները այսու օգակար կրնան ըլլալ . մնացեալը
երկրորդական է : Մարմնոյն բոլոր կրթութիւնները
օգակար են , եւ կ'ուղէի տեսնել որ մանչեր
եւ աղջիկներ այսու անցընէին իրենց ժամանակին
մեծ մասը մինչեւ տասներորդ տարին , եւ ալ աւե-
լլի , եթէ կարելի է : Յոյները շատ իրաւունք ու-
նէին ոյժ տալու՝ ինչպէս կ'ուտային՝ որպէս զի իրենց
մանկութիւն զօրանար ըմբշամարաներով , պարերով ,
ճարպիկութիւնը մշակող խաղերով եւ ամէն տեսակ
կրթութիւններով :

Օգտակար են մանաւանդ անոնք որք կը կազ-
զուրեն կուրծքը , պէտք է հեռի կենալ այնպիսի խա-
ղերէ որք կը կծկեցնեն մարմինը ևողալ , թիավարել ,
ծառերուն վրայ մագլցիլ . ատաղձագործութիւն , երկ-

րագործութիւն , անական աշխատառւթիւններ , ինչպէս աւլել , անկողինը զնել վերցնել եւայլն , քանի որ ծանր բեռներ վերցնելու մէջ չեն կայանար , դիւրաթեքութիւնը եւ ճկունութիւնը կը զարգացընեն եւ ամէն մարդու ալ կրնան դիւրամատչելի ըլլալ . մինչդեռ մարմնամարդ , ձիավարութիւն , որախաղութիւն եւ ուրիշ մեծածախ զրօսանք միայն հարուստներու վերապահեալ են . ասոնց վրայ չի խօսինք ուրեմն . լաւագոյն կերպերն անոնք են որ ամէնուն համար հաւասարապէս դիւրամատչելի են : Աղէկ կ'ըլլայ , եթէ տղայ մը , ինչ զրից մէջ որ ծնածըլլայ , ինք անձամբ կատարէ իր սենեակին գործերը . ասիկայ թէ կարգապահական սովորութիւնն մըն է եւ թէ մկանանց համար պարտաւորիչ կրթութիւնն մը , և այսպէս իր ծառայութիւնը ինք ընելու վարժուելով , ապագային ձեղի կարօտ պիտի չըլլայ , ինչ որ կենաց դիպուածներու մէջ , առանց ուրիշի մը զիմնու , իր գործը ինք տեսնելու պիտի առաջնորդէ զինքը : Իր մաքրութիւնը եւ իր դիւրակեցութիւնը գէթ չի պիտի կախում ունենայ սպասաւորի մը քմահաճոյքէն , սպասաւորի մը որ ամէն ժամանակ չի գտնուիր : Խաղերուն մէջ , ձիարշաւ , գնդախաղ , եւայլն , միեւնոյն նպատակը կայ միշտ : Անոնք որ խաղերու մէջ ճարպիկ են , ամէն մասամբ լաւագոյն գործաւորներ եղած են եւ աւելի քաջ հանդիսացած են ուսմանց մէջ : Յիշենք նաեւ որ ճարպիկութիւնը նշան մըն է հանճարմղութեան . գաղանային ուժը հանճարեղութիւն չենթագրեր : Կը տեսնուի թէ որ աստիճան հրաշալի ճարպիկութեան կը համնին այն անձինք որք վիճակեալ են իրենց ապրուսար հայթայթել իր-

ըեւ ձեռնածու , եւայլն . եւ յայտնի է որ ասոնք հանապազօրեայ կրկնութիւններու կը պարտին իրենց յաջողութիւնը , կրկնութիւններ որք խիստ կանուխէն կը սկսին , եւ որք կարող կ'ընեն խաղալու այնպիսի խաղեր որ մեզ զարմանալի կը թուին :

Ստուգիւ բոլոր բուսումներէն աւելի օդտակար կը գտնեմ զիւրաթեքութեան եւ ճարպիկութեան բարձրագոյն աստիճան զարդացումը , եւ չի կայ մէկը որ չի գիտնայ մեր անդամոց եւ մկանանց հազար տեսակ շարժումները զորս կը կատարենք վտանգներէ խոյս տալու եւ զմեզ շրջապառող բաները գործածելու համար : Ասոր համար , պէտք չի կայ յանդիմաննելու եւ յոգնեցնելու : Այս բաները սովլրեցնելու համար , պէտք է մեծ համբերութիւն եւ միեւնոյն բանի անընդհատ կրկնութիւն : Կ'ուղէի ուրեմն տեսնել որ մանուկները վարժեցնէին , եօթը տարու եղածին ոլէս , քալելու պարանի մը վրայ , բարձր տանիքէ մը կամ պատուհանէ մը պարանի մը միջոցաւ վար իջնելու , ձիու վրայ ցատկել ելնելու , վերջապէս մարմնոյն այնպիսի զիւրաշարժութիւն մը տալու , որ շատ քիչ ենթակայ ըլլայ այն վտանգաց որոց ենթակայ են ծանրաշարժութիւն , եւ անճարակութիւն : Ուստի մանկավարժ մը պարտի լաւ մարմնամարզութիւն զիտնալ միանգամայն : Մի՛ կարծէք թէ անիրաւ պահանջում մը կ'ընեմ : Եթէ այս խօսքիս կարեւորութիւն տրուէր , արդեօք ո՛րքան վտանգներու առաջքն առնուած պիտի ըլլայ : Եթէ կ'ուղէք զինքը պատրաստել ու եւէ ասպարէզի մը զոր կ'ընտրէ , ուսուցէք անոր լաւ գործածել իր զգայարանքները :

Այս ըսածներս առջի բերան կատակ կը թուին,
քանզի , պիտի ըսէք , ամէն ոք կը տեսնէ , կը լսէ,
կը ճաշակէ , կը չօշափէ առանց պէտք ունենալու
որ մէկը իրենց սովորեցնէ : Անշուշտ ամէն ոք կը
գործածէ իր զգայարանաց գործարանները , բայց
շատ քիչեր կը գործածեն զայնս իբրեւ մարդկային
էակներ , ունենալով խորհելու կարողութիւն մը զոր
կենդանիք չունին , կարողութիւն՝ որ այս զգայա-
րանաց կու տայ գորութիւն մը որուն վրայ մարդիկ
շատ տկար գաղափար մը ունին եւ որ զայնս կա-
տարելապէս գործածելու կը թոյլատրէ : Իմացակա-
նապէս շատ օժտեալ անձ մը , կ'ըսուի թէ , ուղիղ
կը տեսնէ , այսինքն թէ իր միտքը արագ կ'ըմբռնէ
այն բանը որ արդեամբ գոյութիւն ունի եւ այն բա-
նը որ առերեւոյթ գոյութիւն մը կը ներկայէ : Ոմանց
համար ամէն ինչ առանց նշմարելու կ'անցնի , իսկ
այլոց համար ամէն ինչ խորհրդածութեան նիւթ կը
մատակարարէ , եւ այս վերջինք են անոնք զորս կը
կոչենք հանճար . անոնց դիտողութեան կարողու-
թիւնը անցած է սովորական սահմաններէն անդին ,
եւ այսպէս , կը յաջողին նշմարելու զանգուած մը
իրաց որք միշտ գոյութիւն ունին , եւ զորս իրենք
ի յայտքերած են , վասնզի այս բաներ իրենց կողմէ
միայն կը տեսնուին ըղեղնին յոգնեցնելով : Ուրեմն
երկու եղանակ կայ այս գործարանները գործածելու .
միւսը՝ որ , խորհելու մարդկային առանձնաշնոր-
հումը գործածելով , զիտէ ճանչնալ , զմեղ շրջա-
պատող երեւոյթից մէջ , որոշ օրէնքներ , անոնց
այլաբանական կամ՝ եթէ կ'ուզէք՝ փիլիսոփայական

խմաստը , եւ այս հայեցողութիւնը որ ուղիղն է ,
տարածուելով . կ'ըլլայ ինչ որ կը կոչենք քաղա-
քակրթութիւն : Մարդու որքան անմշակ ըլլայ , այն-
քան կը տեսնէ իրերը այնպէս ինչպէս որ ըլլալ կը
թուին , ոչ թէ ինչ որ են իրապէս : Այսպէս , մին-
չեւ շատ մերձակայ ժամանակ մը կը կարծուէր թէ
երկիրը անհունութեան մէջ անշարժ էր , եւ թէ
երկնակամարը կը գառնար երկրիս շուրջը աստղե-
րուն հետ . մարդկացին աչքեր , որ կազմութեամբ
եւ տեսողական զօրութեամբ համանման են կա-
լիէի աչաց , զայն այնպէս տեսած էին . իսկ կա-
լիէ , ձեր աչաց նշմարածը իրեն խորին խորհրդա-
ծութեան առարկայ ընելով , երկրագնդին շարժման
ճշմարտութիւնը ի վեր հանեց : Ամէն օր կրնանք
զգալ թէ ո՞քան քիչ կրնանք վստահիլ մեր զգա-
յարանաց : Երբ կառախմբով կը ճանապարհորդենք ,
մեզ այնպէս կը թուի թէ երկիրը կը փախչի մեր
առջեւ . աչքերնիս այնպէս կը տեսնէ . բայց խոր-
հելով գիտենք որ բանն այնպէս չէ : Ամէն զգայա-
րանքներէն խորհելու զգայարանքն է որ առաւել
քան զայլս կը ծառայէ զարգացնելու դիտողութեան
կարողութիւնը . այնքան իսկ գերազանց է այն
միւսներէն , որ չենք գիտեր զայս կոյըերը ուսում-
նասիրած ըլլալէ՝ առաջ : Կարելի է անոնց վրայ գա-
ղափար մը կազմել շատ մը բաներու մասին զորս լսե-
լիք եւ շօշափելիք կրնան մեզ յայտնել , եւ խիստ
հարկաւոր կը կարծեմ զանց չառնել այս օժանդակ
զործարանները : Դիտողութեան կարողութիւնը ,
մասնաւոր գասակարգներու մէջ , ժառանգականա-
պէս զարգացեալ կ'ըլլայ այն աստիճան որ տարբեր

պայմանաց մէջ ծնած անձանց կարողութեան միջեւ
իրական տարբերութիւն մը կ'ենթագրէ : Այսպէս ,
անմշակ անհատք , մինչեւ իսկ չափահասք , չեն
կրնար ճանչնալ լուսանկար մը զոր մէկ տարեկան
փոքրիկ տղայ մը՝ լուսաւորեալ ծնողաց զաւակ՝
առանց վարսնման պիտի ճանչնայ որուն լուսանկարը
ըլլալը , Մանկան զիտողութիւնը զարգացնելու
համար , կրթենք իր զգացումները զինքը շրջապա-
տող բաններուն մասին . զիտել տանք իրեն թէ ի՞նչ
կը տեսնէ եւ կը լսէ որոշապէս բնութեան մէջ , ա-
պա արեստի եւ արուեստի մէջ : Տղայ մը որ ստուե-
րաց ուղղութեամբ կամ երկայնութեամբ օրուան որ
պահուն մէջ գտնուիլը գիտէ , որ զիւրաւ կը զա-
նազանէ թռչուն մը ուրիշէ մը՝ իր ճայնէն , թէ լաւ
կը ճանչնայ պտուղները եւ սունկերը՝ տեսած եւ սով-
րած նշաններով , վարժուած պիտի ըլլայ չի նետել
միայն անուշագիր եւ անորոշ ակնարկ մը ամէն բա-
նի վրայ , ինչպէս կ'ընեն այնքան անձինք որք ան-
կարող են իրենց զգայարանքներէն օգուտ քաղել
պէտք եղածին պէս :

Ականջին եւ տեսողութեան զարգացման բան
մը չ'օգնէր այնքան որքան երաժշտութեան եւ զը-
ծագրութեան ուսումը որ ինձ համար պարտաւորիչ կը
թուի իւրաքանչիւր մանկան համար : Մանաւանդ
երաժշտութիւնը կրնայ սկսուիլ խիստ կանուխէն
եւ առանց ոեւէ յոդնութեան եւ գժուարութեան ,
զրեթէ խաղալով ինսգալով : Դաշնակի մը վրայ երգ
զարնելով մէկտեղ , պէտք է զայն երգել եւ զրել միան-
գամայն սեւ մեծ տախտակի մը վրայ ուր գծուած են
երգերու գծերը . մանուկը պիտի երգէ զայն անմիջա-

պէս : Նոյնպէս պիտի գրուին միւսները , բայց միշտ զայնս զարնելով եւ երգելով , այնպէս որ երբէք երգի անուն մը անորոշ չըլլայ , այլ իրապէս ներկայէ որոշ ձայն մը : Երգելը այնպէս բնական է որպէս խօսիլը : Ժողովուրդներ կան որ կ'երգեն . ժողովուրդներ ալ կան որ անկապակից եւ անորոշ աղաղակներ կ'արծակեն . միեւնոյն գործարանները գործածելու այս տարբեր եղանակին պատճառը ֆիզիքական կազմութեան տարբերութիւնը չէ , այլ ժառանգական սովորութիւններն են , եւ նաև սա թէ ինչ որ լսուած է մանկութենէ ի վեր ըմբռնուած է բնազդօրէն :

Երգերու բանաւոր ուսուցումը կատարելապէս կը տարբերի դաշնակին ուսուցումէն որ մեր օրերը այնքան ընդհանրացած է եւ որ յաճախ տեղի կ'ունենայ առանց ծանօթութիւն մը իսկ տալու թէ ի՞նչ է երաժշտութիւնը : Երգելու ճաշակը ընտիր բան մըն է ժողովրդեան համար եւ կրնայ զանոնք հեռացնել խաղէ եւ զինովութենէ , երկու ահարկու չարիքներէ , որ կը թունաւորեն աղքատ աշխատաւորներու ընտանեկան երջանկութիւնը : Ախտ մատաղ հասակէն ի վեր , պէտք է վարժեցնել մանուկները խմբովին երգելու , եւ կը բաղձայի տեսնել , իւրաքանչիւր զիւղի եւ թաղի մէջ , որ կազմուէին երաժշտական փոքրիկ ընկերակցութիւններ , յորս , առանց ոեւէ քաղաքական կամ այլ ձգտումներու , բարեկամական յարաբերութիւն մը հաստատուէր ամէն դասակարգի մէջ : Ի Գերմանիա , այսպիսի ընկերութեանց երջանիկ ազգեցութիւնները արդէն կը վայելուին : Այսպիսի մանկական խմբերգութիւն մը կազմնելու համար , բաւական է հանձարեղ անձ մը որ քիչ մը

Երաժշտութիւն զիտնայ : Ի Գերմանիա , ի Շուէտ , ի Տանիմարդ , ընտանեաց իւրաքանչիւր անդամիր բաժինն ունի արդէն այս գործին մէջ : Այսպիսի անմեղ եւ ազնիւ զբուանքներով ամէնէն խոնարհ ընտանեականի յարկն իսկ հրապուրիչ կը դառնայ . կը բարձրանայ եւ կ'երջանկանայ : Այս արուեստը , որուն բարոյականի եւ նկարագրի վրայ ունեցած բարերար ազգեցութիւնը տակաւին ըստ բաւականին գնահատուած չէ , կը պահանջէ որ իր գործարանը կարելի եղածին չափ կանուխէն զարգացած ըլլայ . կը պահանջէ նուազ ըմբռնողութիւն քան անդրիագործութիւն . ամէն տղայ առանց դժուարութիւն մը զգալու կրնայ ըմբռնել ժողովրդական երգերու դիւթութիւնը եւ սիրունութիւնը եւ կը սկսի խաղալ վալսի մը եղանակին . ուստի , կը հետեւի աստիթէ , ամէն տղայ , առանց բացառութեան , զգայուն է երաժշտութեան : Հետեւաբար , երաժշտութիւնը ընդհանուր օգտակարութիւն մը ունի , ոչ թէ գործիքով ըլլալուն համար , այլ իր ազգեցութեամբ ականջին եւ ձայնին , մարդուն արուած այս երկութանկագին գործարաններուն , վրայ :

Երաժշտութիւնն ինչ որ է լսողութեան համար , գծագրութիւնն եւս նոյն բանն է տեսողութեան համար . միայն թէ այս վերջինը կը պահանջէ քիչ մը ուշ ուսուցուիլ , վամնզի մատիտ մը գործածելու համար աւելի խելք պէտք է քան բնազդ : Երբ տղու մը ձեռքը մատիտ մը տալ կ'ուզուի , նա կը պարտաւորի արտադրել ինչ որ կը տեսնէ : Այն ատեն պիտի ստիպուի դիտել առարկաները աւելի ուշադիր աչօք քան չէր ընէր զայն մինչեւ այն ատեն ,

եւ այսու պիտի շահի աչաց յիշողութիւնը որ ոչ
նուազ օգտակար է բաղմաթիւ սպարագայից մէջ՝
Բաց աստի չի կայ արհեստ մը կամ գիտութիւն մը
ուր գծագրել գիտնալը գլխաւոր օգուտ մը չըն-
ծայէ . մարդուս վեցերորդ զգայարանքն է այս :
Զարմանալի է որ շատ բան սովորած ըլլալ պահան-
ջող շատ անձինք անկարող են իրենց աչքերը գոր-
ծածել : Կը հարցուի այսպիսեաց թէ այն անհատը ,
որուն հետ խօսակցեցան , խարտեա՞շ է թէ թխա-
գոյն . չեն կրնար պատասխանել : Իսկ այս բանը չի
պատահիր երբէք այնպիսի անձի մը որ գիտէ գծագ-
րել ինչ որ կը տեսնէ , եւ որ պարտաւոր է , այս
նպատակին հասնելու համար , ուշադրութեամբ դիտել
ամէն ինչ . նա վերջ ի վերջոյ կը տեսանայ տեսողու-
թեան յիշողութիւնը : Պատկերներու վրայէ գծագ-
րութիւններ ընդօրինակել տալը սիսալ մըն է . ահա-
ւասիկ ասոր արդիւնքը : Տղայ մը կ'ընդօրինակէր
պատկերի մը վրայէն ձի մը որուն միայն երկու
ոտքերը կը տեսնուէր իր գտնուած տեղւոյն դիրքին
պատճառաւ : Այս տղուն հարցուցի թէ քանի ոտք ու-
նէր այս ձին : Ինձի պատասխանեց թէ «երկու - միւս
երկու ոտքերը կտրուած են » : Հետեւաբար երբէք
դիտած չէր թէ առարկաներու պատկերներու մէջ
ամէն բանը մէկանց տեսանելի չէ : Ինութիւնը դի-
տելով է միայն որ տղան պիտի կրնայ այս պարզ
իրողութեան վերահասու ըլլալ :

Կ'արժէ որ գծագրութիւնը դաս տրուի գրավար-
ժութեան պէս : Ամէն տղայ կրնայ յաջողիլ գծելու
ինչ որ շարունակ կը ներկայանայ իր աչաց առջեւ :
Սիսալ է երաժշտութիւնը եւ գծագրութիւնը ան-

ուանել զբառութեաց արուեստ : Երբ այս երկու բաները
կ'ուսուցուին ինչպէս որ պէտք է , անոնք անհատին
ընդհանուր զարգացման եւ բարելաւութեան համար
թանկաղին ծառայութիւններ կը մատուցանեն , եւ
զործնական կենաց մէջ առաւել իրական օգտակա-
րութիւն մը ունին քան աշխարհագրութեան այն ան-
թիւ յատուկ անունները եւ մանրամանութիւնները
որոնցմով կը ծանրաբեռնեն ուսման տարիները : Ա-
սոնք օգտակար են անխտիր ամէն անհատի , եւ զըժ-
ուարութիւններով ու տառապանքներով շաղախեալ
այս կեանքը հրապուրիչ եւ գեղածիծաղ կ'ընծայեն .
հարուստներուն համար , ստորին , նկարագրի եւ ա-
ռողջութեան վեասակար հաճոյից դէմ պատուար կը
հանդիսանան . իսկ աղքատներուն կու տան հոգ-
ւոյն անհրաժեշտ սնունդը . վասնզի Աւետարանը կ'ը-
սէ . «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ :



թ.

Թնուրեան առարկայից հետաքրքրելով մանուկը զարգացնել դիտողութիւնը. — Խուսափիլ այն ամեն ուսումներէ որոնք բացառձակապէս նշմարիտ չեն. — Ծաղրելին. — Ընտանիք. — Կրօն. — Բանասեղծական ուսուցմունք. — Գրքերը :

Զանալով զարդացնել զիտողութեան կարողութիւնը մեր մանկանց մէջ, կրնանք միեւնոյն ժամանակ իրենց հայթայթել այն ճարակը զոր կը պահանջէ անոնց հետաքրքրութիւնը : Պէտք չի կայ բնաւ զիտական ձանձրացուցիչ եւ տաղտկացուցիչ մանրամասնութեանց վրայ երկարաբանել : Միայն կ'ուզեմ որ, բուն իրենց զիտողութեամբ, ստանան ճշմարիտ ծանօթութիւններ կենաց եւ բնութեան մէջ զիւենք շրջապատող առարկայից վրայ, ծանօթութիւններ որոնք օր մը թանկագին պատրաստութիւն մը պիտի ըլլան զժուարագոյն ուսմանց : Նախ պէտք է սկսիլ իրենց ուշադրութիւնը հրաւիրել ծաղկանց, միջատաց, ձեան եւ փոթորկաց, վերջապէս սովորական հաղարաւոր երեւութիւ վրայ : Խիստ հակիրճ եւ պարզ պատմութիւններ կենդանեաց եւ միջատաց բնութեանց եւ աշխատութեանց վրայ, վիպակներու չափ կը հետաքրքրեն մանուկը : Բայց ձանձրոյթ զգալը

տեսնելնուդ պէս , դաղրեցէք : Մեզնէ մշտատեւ
խնամք պահանջող առարկայի մը յարելու բնազգը
այնքան զօրաւոր է մեր մէջ , որ քիչ մը պարտիզ-
պանութեամբ ուղղակի կերպով հետաքրքրուելով ,
վերջ ի վերջոյ իրապէս պիտի սիրէ այն տունկը ո-
րուն համար իր մատաղ խնամքները շռայլած է , եւ
այս կերպով անվրէպ միջոց մը հայժայթած կ'ըլլաք
իրեն՝ իր խորհուրդը . իր ձեռքերը եւ իր սիրտը միմի-
այն իրմով զբաղած ըլլալու , բան մը որ ճշմարիտ
գաղտնիքն է երջանկութեան : Վերջերս Ամէրիկայի
մէջ մանկական ընկերակցութիւն մը կազմուեցաւ .
կ'ուղէի որ ամէն ուրէք անոր օրինակին հետեւէին .
Ակասիզի Ընկերակցութիւնն է այս : Այս ընկերակ-
ցութեան անդամակից տղայք , ամէն տեղ շրջանակ
մը կը կազմեն , եւ այս շրջանակներ իրարու հետ
կը թղթակցին : Անոնց նպատակն է բուսաբանական ,
կենդանաբանական , հանքաբանական , երկրաբանա-
կան , եւայլն , հաւաքածոներ կազմել : Իրարու կը
հաղորդեն իրենց զիաողութիւնք , իրենց զիւտեր ,
եւ այսպէս յարաքերութիւններ կը հաստատեն միեւ-
նոյն բաներէ հետաքրքրուող բազմաթիւ անհատից
հետ : Այսու կ'ընդարձակի իրենց յարաքերութեանց
շրջանակը . այսու կը մզուին տարեեր երկիրներէ
եւ տարբեր զիրքերէ բազմաթիւ անձանց հետ առըն-
չութիւն հաստատել : Ասիկա եղանակ մըն է զար-
գացնելու համակրութիւնը որ պարտի գոյանալ մի-
եւնոյն կերպով խորհող բոլոր մարդոց միջեւ : Մա-
տաղ հասակէն ի վէր , օգտակար եւ հրահանգիչ շըր-
ջագայութեանց պէտք է վարժեցնել զայն : Աննպա-
տակ շրջագայութիւնք ձանձրոյթ եւ տաղտուկ կը

պատճառեն : Ֆիզիքականին օգտակար կրթութիւնը ,
առաստ ախորժակ եւ հանդարտ քնոյ երջանիկ հե-
տեւանքներովը հանդերձ , իր հետ զուարժութիւն եւ
հաճոյք կը բերէ , եւ միտքն ու խորհուրդը անզբաղ
չի թողուր : Երբ եղանակին սասակութիւնք չեն նե-
րեր շրջագայիլ եւ պարտէզով զբաղիլ , լաւ կ'ըլլար ,
ինչպէս կ'ուսուցանէր արդէն Ժ. Ժ. Ռուսօ , որ իւրա-
քանչիւր ոք սովորէր արհեստ մը . ճախարակագործ ,
ատաղձագործ , կօշկակար , կազմարար , մէկ խօս-
քով ինչ որ կ'ուզուի , բայց յարատեւ : Բաց աստի
ապահովեալ ապրուստի միջոց մըն է այս , եթէ ու-
րիշ միջոցներ կը պակսին , եւ ճարպիկութիւնը կը
զարգանայ կառարեւու աշխատութեամբ մը , ինչ սե-
ռէ որ կ'ըլլայ այն : Կ'ուզէի նաեւ որ այս արհեստք
ընկերութեամբ ուսուցուէին , եթէ կարելի էր :
Բացի այն իրարու նմանելու նախանձաւորութենէն
եւ զուարժութենէն որ պիտի յառաջ գան ասկէ , սա
ընտիր եղանակ մըն է՝ ազգի եւ ցեղի խարութեան
արուեստական պատուարները առանց գժուարութեան
կործանելու համար : Միեւնոյն զործատեղոյ մը մէջ
իրարու քով աշխատող երկու տղաք , կենաց հա-
մար մտած են այս եղբայրակցութեան մէջ որ պար-
տի միացնել մեզ ամէնքս , եթէ ճշմարտապէս քաղա-
քակրթուիլ կ'ուզենք :

Այս առթիւ , թոյլ տուէք ինձ որ յորդորեմ
զձեզ , ամէն ուսումէ առաջ , խոյս տալ այն կարգ
մը սխալ ուսումներէ որք կը վիստան անդադար
ձեր շուրջ , եւ որք շատ չարիք կը գործեն զորս
չեն կարող դարմանել լաւագոյն յորդորներ :

Նախ եւ առաջ , եւ ոչ մի պարագայի մէջ , եւ ոչ

մի առթիւ, երբէք մի՛ ուստուցանէք ատել : Այս նպատակաւ երբէք մի՛ խօսիք անարդանոք կամ հակակրութեամբ երկրի մը, ազգի մը, ցեղի մը, դասակարգի մը, կրօնի մը վրայ : Ասիկայ կը նշանակէ ջընջել եղծանել այն ամէն բարիքները զորս կ'ուսուցանէք միւս կողմէ : Եւ այս է պատճառը որ մատաղ հասակէ ի վեր տղայոց մտքին մէջ բոյն կը դնեն անարդանք եւ ատելութիւն՝ շինծու տարբերութեանց եւ խտրութեանց վրայ հիմնեալ : Եթէ քաղաքակրթութիւնը՝ որուն աւանդապահները կը դաւանինք զմեղ՝ նոր եւ գեղեցիկ բան մը բերած է յաշխարհ, սա՛ այն գաղափարն է թէ մենք ամէնքըս եղբայր ենք, եւ անկարելի է հաւատալ ասոր՝ ատելով այն մարդիկ զորս չենք ճանչնար, եւ որք կը ծնանին, կը տառապին, կ'աշխատին, կը խորհին եւ կը մեռնին մեղ նման, եւ զորս հաւատալեաց վաղանցուկ ձեւ մը կամ լեզուի տարբերութիւն մը մեզ նկատել կուտան իրեւ օտարականներ եւ թշնամիներ : Կրօնասիրութեան եւ ընտաննեսիրութեան պատրուակաւ այս եպերելի զգացումները թելազրելով, խորհուրդն եւ բանականութիւնը կը սպանենք, քանզի այս ատելութեանց հիմն է կոյր եւ ժառանգական կիրքը, որ յառաջ կուգայ անձնասիրութեան եւ սնափառութեան ստորին զգացումէ մը :

Երբ այս գաղափարք այլոց համար անարդանոք կամ ատելութեամբ ընկերացած են, ձեւ մըն են անձնական մնափառութեան որ կը պահանջէ որ մեզի հետ վերաբերութիւն ունեցող ամէն բան ուրիշներէ աւելի բարձր, աւելի գերազանց ըլլայ . մարդկութեան

տղայական զգացումն է այս : Փոքրիկ մանուկը ինք-
զինք մէկ հատիկ ըլլալ , աշխարհի կեղրոնն ըլլալ , կը
կարծէ եւ կ'ըսէ թէ ամէն բան իրեն համար ըս-
տեղծուած է : Անկիրթ մարդը ամէն ինչ որ իրմէ
կախումն ունի ֆիզիքական կապերով (քահղի ասոնք
միայն կարեւոր են ըստ իւր տկար դատողութեան)
կը նկատէ իրրեւ բացառութիւն կազմող եւ իրրեւ
տարբեր եղող մնացեալէն . նա կը ձգտի այս նկա-
տողութիւնը մեղմացնելու , քանի հեռանայ իր ան-
միջական անձնականութենէն , նկատմամբ անոնց
որք կը խօսին միեւնոյն լեզուն եւ կը պաշտեն մի-
եւնոյն բանը զոր ինք կը պաշտէ : Իսկ անոնք որ իր
դասէն չեն , կը ծաղրէ կամ կ'ատէ :

Ինական սէրն ու համակրութիւնը զոր կը ըդ-
գանք անոնց համար որք մօտէն մեզ հետ կապակ-
ցութիւն ունին վասն զի աւելի կը նմանինք անոնց ,
այնքան ընդհանուր կերպով տարածուած զգացում
մըն է , որ պէտք չի կայ զայն զօրացնել այլոց նկատ-
մամբ ատելութիւն ներշնչելով : Ցորչափ ողջամիտ
դատողութիւն տիրապետէ մեր կենաց մէջ , պիտի
գտնանք իսկապէս մէկ ընտանիք , մէկ կրօնք ամէն
անոնց մէջ որք կը խորհին մեզ նման եւ որք կը
սիրեն միեւնոյն բաները ինչպէս մենք : Եւ եթէ
բարձրանանք նախապաշտումներէ վեր , կը գանենք
որ կը զգանք ամէն բան եւ կը խորհինք այն ամէն
բանի նկատմամբ զոր մարդկութիւնը կ'արտադրէ մեծ ,
վեհանձն եւ յաւիտենական :

Ընտանեաց եւ կրօնի խնդիրք կ'անցնին , քանի
որ այս բաները կորնչական են . կը մնան , անցելոյն,
ներկային եւ ապագային հետ , այն բաները միայն

որք չի պիտի անցնին երբէք , եւ եթէ հիմա մեռզի համար անտարբերութիւն կ'ենթադրէ գիտնալութէ ի՞նչ եղած է անհատից եւ մինչեւ իսկ ազգաց վիճակը , անոնց զգալու եւ խորհելու եղանակը կենդանի շարունակութիւն մը կը գտնէ մեր որտին մէջ : Ուստի խորհելով անոնց պէս որոնք համակիր եւ հասկնալի են մեզ ամէնուս , կը գտնենք զմեզ միացած մանէ առաջ ապրած մեծ տաքերու փառաւոր շարքին . անոնց մէջ ունինք ընտանիք մը ուրուն ներկայիս մէջ կրնանք ընկերակից ընել ամէն անոնք որք , մեզ նման , կը մերժեն այս արուեստական բաժանմունք : Մղուելով սիրելու բոլոր մարդիկ , երբէք չենք սխալիր , չենք խաբուիր . բայց մղուելով ատելու , միշտ պիտի սխալինք , միշտ պիտի խաբուինք :

Մենք ամէնքս ալ հակամիտութիւն մը ունինք ծաղրելի , սոսկալի կամ անհեթեթ գտնել այն բանը որուն վարժուած չենք . բայց ասիկայ ընազդական եւ կենդանական զգացում մըն է : Ի՞նչ որ մեզ բնական եւ լաւ կը թուի , կրնայ միեւնոյն մերժողական արդիւնքն ունինալ այլոց վրայ : Զինացւոց ոտքերուն ժապաւէններուն եւ մեր լանջակալներուն մէջ մեծ տարբերութիւն մը չի կայ . մեր եւրոպական բարեւները պարտին վլրջին ծայր ծազմելի թուիլ անոնց որ զիրար բարեւել կը դաւանին քթերնին իրարու քթի քսելով : Բնականաբար կը նախադասենք զայն որուն վարժուած ենք . կ'ուզէի միայն որ այս փոքրիկ էակաց չի թելազրուէր այն դաղափարը թէ անցաւոր տարբերութիւնք կարեւոր բաներ են : Ասոնց երեւակայական ըլլալուն ապացոյցը այն է թէ դիպ-

ուածը միայն զանոնք կը ծնուցանէ : Երկու կամերէք սերունդք փոխադրուած մի ուրիշ միջավայրի մէջ՝ կը բաւեն զանոնք մուցնելու : Քրիստոնէութիւնը բերած է ընդհանուր եղբայրակցութեան սկզբունքը, բայց ի գործ չի դրուեցաւ այն, քանի որ մինչեւ ցայսօր արհամարհանք կը համարուի կոչուիլ, ըստ ազգութեան կամ կրօնի որում կը վերաբերուի, Գերման, Բոլոնիացի, Գաղղիացի, Քրիստոնեայ կամ Հրեայ : Այս գեղեցիկ սիզբունքը մարդոց բարուց կամ մտաց մէջ քանդակելու ճշմարիտ միջոցն է ցուցնել մատաղ սերնդեան ինչ որ միշտ ծաղրելի կամ արհամարհելի է, բովանդակ դասակարգին, բովանդակ ընտանեաց մէջ :

Յետոյ չի պիտի երբէք սովորեցնէի, ինչպէս անդադար տեղի կ'ունենայ այս, սեռի մը համար ուրիշ սեռ մը արհամարհել : Տղայ մը երբ երկչուա կամ վեհերուած է, անոր «աղջիկ» է կ'ըսուի, որպէս թէ այս պակասութիւնք մեր սեռին իդական կիսոյն ստացուածքը ըլլային ճշմարտապէս : Ասիկայ եւս դադանական ուժոյ գերազանցութեան արհիրարբարոսութեան սկզբունքէն յառաջ կու գայ : Մանկութեան մէջ սեռին տարբերութիւնը ոչինչ է, եւ անհաժեշտ կը նկատեմ վարժեցնելու աղջիկներ եւ մանչեր միեւնոյն կրթութեանց, զօրացնելու համար իրենց անդամները եւ զարգացնելու՝ իրենց ճարագիկութիւնը : Մանչ կամ աղջիկ ըլլալու իրողութիւնը ոչ գերազանցութիւն մըն է եւ ոչ ստորնութիւն մը : Պարտիմք սակայն յիշեցնել թէ երկուքն ալ հարկաւոր եւ օգտակար են աշխարհիս մէջ, եւ նոցա ուժը հաւասար է, թէեւ տարբեր ձեւով մը կ'արտայա-

տուի այն : Շնորհիւ այս արհամարհանաց դասին
դէպի այն սեռը որում կը պարտի իր մայրը , փոք-
րիկ մանուկը կը վարժուի արհամարհանօք նայելու
ասեղնագործութեանց : Ուստի , ինձ կը թուի թէ ,
իւրաքանչիւր մարդկային արարած , ինչ որ ալ ըլլայ
իր սեռը , կրնայ եւ պարտի սովորիկ կար կարել : Ան-
հատից դասակարգ մը կայ , որ չի կրնար մեղագրու-
իլ կանացի ըլլալուն համար . նաւազք են անոնք
որք ասեղնագործել զիտեն կատարելապէս , եւ ոչ
մի երկրախոյզ , որսորդ , հեռաւոր երկիրներ զըր-
կուած զինուոր , չի կրնար առանց կարել , ձեւել ,
կարկտել եւ հիւսել զիտնալու ըլլալ : Ուստի կը հար-
ցընեմ , ո՞ր տարօրինակ իրաւամք իբրեւ արհամար-
հելի կը նկատուի իր տասը մասները գործածել : Կը
հասկընաք , այնպէս չէ՞ , որ եթէ կը սիրեմ տեսնել
փոքրիկ աղջիկներ որ սովորին իրենց եղբարց բոլոր
կրթութիւնները եւ արհեստները , սոքա եւս պար-
տին զիտնալ կար եւ խոնարարութիւն՝ իրենց քրոջ
պէս : Ժրութիւն եւ ճարապիկութիւն երկու սեռին
համար եւս հաւասարապէս պէտք են : Ասեղի վե-
րաբերեալ աշխատութեանց վրայ այս զիտողութիւնը
կ'ընենք , վասն զի ըստ ինքեան ամօթալի չի նկատ-
ուելիք բաները ամօթալի նկատելու սիսալը կը գոր-
ծենք : Այս անհիմն ամօթներու վրայ է որ հիմնու-
ած է նախապաշարմանց մեծ մասը , եւ որք այնքան
կը պղտորեն գաղափարները բարւոյն եւ չարեաց
վրայ : Այսպէս , կը մղեն մանուկը իր մատաղ հասա-
կէն խիստ մեծ ուշագրութիւն ընծայել այլոց իր վրայ
խորհածին , որոնք ընդհանրապէս անծանօթներ կամ
անտարբերներ են : Իբրեւ ամէնամեծ չարիք կը ներ-

կայացուի իրեն անոնց աչքին ծաղրելի ըլլալը, մինչդեռ
կենաց մէջ ոչ ոք երկար ատեն հոգ կ'ընէ նկատմամբ
այն բանին զոր ուրիշ մը կ'ընէ կամ կ'ըսէ : Իր արժա-
նապատութեան կոչում ընել, ջանալ վիրաւորել
իր մնափառութիւնը զինքը ուղղելու համար՝ բա-
ցարձակ սխալ մըն է ուրեմն . վատ բաներն անոնք
են որք իրեն անձին վեաս կը հասցնեն . միայն այս
տեսակէտով է որ պարտինք զայնս իրեն ցոյց տալ :
Երբ ձեր կեանքը ապականած եւ վեասուած է ձեր
գործած յանցանքներով, ուրիշները չեն խորհիր ա-
սոնց վրայ երկար ատեն, բայց ձեզ համար հետե-
ւանքները անջնջելի են :

Վերջապէս պէտք չէ պատմել տղուն սուտ զար-
մանալիք մը՝ զմեղ չրջապատով ճշմարիտ զարմա-
նալեաց բաղզապամամբ : Մի՛ սովորեցնէք այն բանը
զոր յետոյ հերքելու պէտք ունիք ըսելով թէ ինչ
որ կ'ըսէիք ան ատեն իր տարիքին համար պէտք
էր : Աւելի լաւ է ժուժկալ մնալ խօսակցութեան
մէջ, քան պատմել այնպիսի ցնորական բաներ ո-
րոնցմով կը պահանջուի բացարել տղայոց, իրենց
հասկնալի եղանակաւ, յոյժ բնական երեւոյթներ :
Դերազանցապէս ապօրինաւոր կը գտնեմ զայս՝ նը-
կատմամբ այս մատաղատի էակաց որք ձեզի կա-
տարեալ վստահութիւն ցոյց կուտան : Թշնամի եմ ե-
րեւակայական եւ գերբնական պատմութեանց, վասն
զի այսպիսի պատմութիւններ անոնց երկիւզը կը
զօրացնեն, մինչդեռ բնութեան խորհրդաւոր բա-
ները, երեւակայութեան ասպարէզ տալով հանգերձ,
կը հանգարտեցնեն եւ կը զիւթեան միայն : Ի՞նչ հարկ
կայ երեւակայութիւնը գրգուելու ջանալ այնպիսի

պատմութիւններով՝ որք բոլորովին սուտ են, որք կը թողուն, ինչ որ ալ ըսուի, յոռի հետքեր մտաց վրայ եւ որոց դէմ պարտինք ապա մաքառիլ մեծ դժուարութեամբ։ Մանկութեան մէջ ամէն բանի կը հաւատացուի կուրօրէն, որքան որ անհաւանական կամ անպիտան եղած ըլլան։ Եթէ նպատակէս շեղիլ ուզէի, պիտի ծանրանայի նկատմամբ անլուր կարեւորութեան այն այլանդակ ծանօթութեանց որք կը հաղորդուին մանկանց յորբանէ անտի — պարիկներու եւ ուրուականներու պատմութիւններ, եւ այլն։ Ամէն տեսակ նախապաշարմունք, կենդանեաց եւ "մեռելոց միջեւ խօսակցութեանց նմանող առասպելներ, իրենց արմատներն ունին ստնտուին պատմութեանց մէջ։

Բան մը այնքան մեծ եւ աղջեցիկ գեր չի կատարէր այս պատմութեանց մէջ քան մահն եւ իր սարսափ. այսպիսի վտանդաւոր խրտուիլակներով վրևխաւորաբար կը զբաղեցուին մատաղ միտքեր, որոց բոլոր ուշադրութիւնը պարտի զրաւուիլ կենաց վրայ յորում կը մանեն։ Մանկութեան այսքան անյագ երեւակայութիւնը զոհացնելու միջոց մը կայ, որ զայն հիւանդաղին կերպով զրդուելէ հեռի, թանկազին ծառայութիւն մ'եւս կը մատուցանէ. Յոյները, մեր վարպետները ամէն բանի մէջ, ընդունած էին զայն, եւ մեզի կը մնայ հետեւիլ անոնց օրինակին՝ սովորելու համար թէ ինչպէս հոգին արիութիւն կը ստանայ յաւիտենականապէս ճշմարիտ եղող բանին վրայ զարմանալով։ Մարմնոյ կրթութեանց քով, որոց վրայ արդէն խօսեցայ, ունէին Մուսայից ուսումը, կ'ուզէին ապրեցնել հոգին

բանաստեղծներով եւ սրբազնն պատմութիւններով, ինչ որ գեղեցիկ եւ սուրբ է : Առաջին կարգի բանաստեղծութիւնը ոճի եւ գաղափարի միջեւ եղած ներդաշնակութիւնը կը զօրացնէ, եւ բան մը այնքան լաւ չէ որքան կանուխէն ընտանեցնել միտքը յաւիտենական զլուխ-գործոցներով : Ճշմարտապէս գեղեցիկ քերթուածը այնպիսի դիւթութիւն մը ունի, որ տեսած եմ կարի գեռասոր մանուկներ որք խանդավառ սիրով հետաքրքրուած են անկէ . ի սկզբան անոնց ականջը գոհացում մը կը ստանայ . ապա տակաւ առ տակաւ վսեմ եւ կենդանի գաղափարը անջնջելի կերպով կը քանդակուի իրենց յիշողութեան մէջ, եւ այնպիսի կատարեալ կերպով մը, որ այնունետեւ յոռի կամ գռենիկ բան մը երբէք հաճոյք մը չազդէր անոնց : Ասոնցմով մնուցանենք այս մանուկ երեւակայութիւնները որք կը բոցավառին հպմամբ Աստուածային հրոյն որուն մեծ քարոզիչներն եղած ըլլալ կը թուին բանաստեղծք դարերէ ի վեր : Սրբազնն պատմութիւնը, մարդկային աղքի պատմութիւնը, ամէնէն հետաքրքրական, ամէնէն զարմանալի եւ ամէնէն խորհրդաւոր դիւցազներգութիւններ չե՞ն միթէ : Ստուգիւ Աստուածաշունչին, Պատմութեան եւ Բանաստեղծութեան այս զարմանալի զրքին, ընտանեկան շրջանակներու մէջ ուսուցումը մեծ ուժ մը եղած է բովանդակ անկլօ-սաքսօն աղքին համար :

Մարդոց՝ գաղափարը զրքերու միջոցաւ կ'ապականին : Նախ կը սկսուի պարիկներու եւ ուրուականներու պատմութիւններուն ունկնդրել . յետոյ վիպասանութիւնք են որ ոչ նուազ կը վնասեն, եւ այսպէս

կը սփռեն մտաց վրայ թոյներ որոց ազգեցութիւնը
կը տարածուի յորբանէ մինչեւ գերեզման : Զգուշա-
ցէ՛ք ուրեմն թունաւորիչ գրքերէ : Մանկութեան հա-
մար զրապէս յանձնարարելի միակ գիրքն է Կոմս Թողա-
թօյի ընթերցանութեան առաջին գիրքը : Ահաւասիկ
Ռուսիոյ մեծագոյն հեղինակը , որ բարեհաճած է գը-
րել կարգ մը փոքրիկ զլուխ-կործոցներ , զորս չորս
տարեկան տղայք կրնան հասկնալ : Այս գրուածք կը
միացնեն այն ամէն յատկութիւնք զորա կը պահան-
ջեմ մանկութեան համար . ոճը պարզ է , մէկին ,
բայց կատարեալ . պատմութիւնք՝ քաղուած իրական
կեանքէ , այնպիսի համառօտութեամբ եւ ճշգր-
տութեամբ , որ ի վեր կը հանեն միշտ ուղիղը , բարձ-
րը եւ օգտակարը , եւ այսպէս կարճ առակներու
մէջ , կը սիրցնեն բարին՝ անոր հետաքրքրելով զնա :
Բայց աւաղ , բացառութիւն մըն է այս , եւ այս մա-
սին ընդհանրապէս ընդունուած կարծիքներուն մաս-
նակցելէ հեռի եմ :

Երեւակայութեան վրայ հիմնուած գրքերուն
գալով , ասոնցմէ շատ քիչեր կրնան յարմարիլ ման-
կութեան , վասն զի անոնց հեղինակները մանկու-
թիւնը ուսումնասիրած չեն այնպէս ինչպէս որ պէտք
է , եւ բաց աստի , չեն կրցած հասկնալ եւ ուսում-
նասիրել այն հասարակութիւնը որուն կ'ուզգեն ի-
րենց խօսքերը : Բայց Թօլութօյի նկատմամբ բանն
այնպէս չէ . անիկայ մանուկները լաւ ճանչցած է .
մանուկները ճանչնալու արտաքոյ կարգի յարմարու-
թիւն մը եւ կարողութիւն մը ունի Թօլութօյ . կար-
ծես թէ գեռ ինքը մանուկ մըն է :

Դասական առակներու եւ անուանի մանուկնե-

ըու պատմութեանց վրայ աւելցնենք ուղեւորութիւնները , իրեւ առողջ մնունդ մտաց : Ամէն տղայ կը սիրէ Ռոպէնսօնի զիրքը , եւ վատահ եմ որ այս ընթերցանութիւնը երբէք վեասակարութիւն մը չունի :

Գիտութեան զալով , պէտք է ճշմարիտը միայն ուսուցանել . բան մը եպերելի չէ այնքան որքան այն զրքերը , որոնց մէջ զարմանալին խառնուած է զիտական ծանօթութիւններով իրեւ թէ հածելի ընծայելու համար : Մանուկը չի կրնար զանազանել այս նրբութիւնները եւ կը հաւատայ թէ ուղեւորութիւն մը ի լուսին կամ ուրիշ ցնորք մը իրօք կակարելի է : Գրքին միւս մասը կը ձանձրացնէ զայն քանի որ չի կրնար զայն հասկնալ :

Ընդհանրապէս խօսելով , զմեզ շրջապատող երաց վրայ , յիշենք մեր տգիտառութիւնը եւ զգուշանանք այնպիսի ծանօթութիւններէ կամ այնպիսի խօսակցութիւններէ որք հիմնուած են ընդունուած սկզբանց վրայ բայց անկարելի՝ ապացուցանել : Զոր օրինակ , ինչո՞ւ համար ըսել տղու մը թէ ի՞նք հոգի մը ունի եւ թէ շունը չունի : Ի՞նչ զիտենք : Այսու , անգթօրէն վարուելու առաջնորդած կ'ըլլանք զայն կենդանեաց հետ , որոց համար միշտ պարտինք , ընդհակառակը , իր համակրութիւնը զարթուցանելու փորձել . քանզի զգացմանց ամէնէն գովելին եւ ամէնէն փափաքելին է գթութիւնը՝ որքան կարելի է այնքան շատ , եւնա որ չունի այս զգացումը կենդանեաց համար , իր նմանեաց համար եւս ունենալէ հեռի է : Ի՞նչ որ ալ ըլլայ , բան մը ուսուցանելէ առաջ , վատահ ըլլանք թէ զիտենք ի՞նչ որ կ'ըսենք : Այս առաջին զիտելիք որք , ինչպէս կը տեսնէք ,

կը խօսին մանաւանդ այնպիսի բաներու վրայ որոնց-
մէ խուսափիլ պէտք է , պարտին ճռխապէս բաւել լե-
ցընելու համար տղու մը բովանդակ կեանքը մինչեւ
այն պահուն երբ կը մտնէ դպրոց : Թանկագին ժամա-
նակ մըն է սա , վասն զի եթէ դպրոցը ստիպեալ է ըն-
դունիլ հաստատուն կանոններ որք հաւասարապէս
ամէնուն համար ալ գործադրելի են , կրնաք այս
առաջին ժամանակամիջոցին մէջ , ուսումնասիրել ,
հասկնալ եւ զարգացնել իր անհատականութիւնը .
պիտի կրնաք , այս ծանօթութեանց չնորհիւ , իրեն
թողուլ իր ուսմանը կամ արհեստին ընտրութիւնը ,
եւ անոր տուած պիտի ըլլաք գեղեցկին այն զաս-
տիարակութիւնը որ կը կազմէ , ամէն անհատի հա-
մար , եւ ամէն պարագայի մէջ , ամէնէն թանկագին
գանձը , կամ միակ գանձը զոր ոչինչ կրնայ յափըշ-
տակել անկէ :



Ժ.

Ամենուն համար անհրաժեշտ եղող առողջապահիկ կանոններ . — Առաջարգել բժօկուրիւնը կամ առողջապահուրիւնը . — Ճշմարիք դասիարակուրիւն արագրած արդիւնքը :

Քիչ խօսեցայ հիւանդութեանց վրայ ընդհանրապէս , վասնզի , դարմանաց համար , չեմ կրնար գրեթէ խորհուրդ մըտալ , խիստ չափաւոր վստահութիւն մը միայն ունենալով բժշկութեան ծանօթբոլոր զբութեանց վրայ : Աղքատաց միմիթարութեան համար , պիտի ըսեմ թէ կարգ մը բժշկաց հետ խորհրդակցիլը հարուստներուն զբօսանքն է : Աւելի լաւ է միշտ զիմել բժշկի մը որ կը ճանչնայ այն անհատականութիւնը զոր կը խնամէ եւ որոց օգտակար խորհուրդը լուսամիտ բարեկամի մը խորհրդոց կը նմանին : Բայց միակ ճշմարիտ բժշկութիւնը , որ ամէն մէկուն մատչելի է , առաջարգել բժշկութիւնն է , այսինքն առողջապահութիւնը . վասն զի աւելի լաւ է առողջապահիկ օրինաց համաձայն ընթանալ եւ բժշկի զիմելու պէտք չ'ունենալ , քան անտես առնելով զանոնք ստէպ բժշկի խորհրդածութեան զիմելու պարտաւորիլ : Եւ եթէ բժշկի զիմելու անհանջելի հարկ մը զգաք , պէտք է իր ժամանա-

կին այս հարկին տեղի տաք . այսինքն թէ հիւանդութիւնը տակաւին սկզբնաւորութեան մէջ զըստնուած միջոցին պարտիք բժշկին զիմել . ապա թէ ոչ հիւանդութիւնը , իր քայլերն առնելով դէպի յառաջ , դժուարին կ'ըլլայ ալլեւս յաղթել անոր : Իւրաքանչիւր ժառանգական հիւանդութեան տրամադրութիւն պարտի նկատողութեան առնուիլ օրօրոցէն ի վեր . առանց սպասելու որ այդ արամադրութիւն ինքինք ցոյց տայ , նկատենք զայն իրբեւ մի թշնամի՝ յաղթուելու արժանի : Մարգկութեան ընդհանուր վիճակը առողջ ըլլայէ հեռի ըլլալով , միշտ վախնալիք բան մը ունինք իւրաքանչիւր անհատի համար , եւ հարկ չիկայ կրկնել ձեզ թէ պէտք է խնամել ամէնէն փոքրիկ վատառողջութիւնը իրբեւ մի հիւանդութիւն ճանչնալով զայն . այսպէս , ժամանակ վաստկած , բժշկի մը միջամտութենէն զերծ մնացած , եւ սոսկալի հետեւանքներ ծնելիք երկար ձանձրոյթներէ խոյս տուած կ'ըլլաք : Ամէն ուսումներու մէջ անժխատելի կերպով օգտակարն է իր առողջութիւնը պահել պահանել զիտնալը , եւ լաւ կ'ընենք , եթէ մանկութենէ ի վեր . այս խորհուրդը կը թելադրենք մանկան խիստ զօրաւոր կերպով , պարտաւորութիւն զգացնելով զայն չանտեսել երբէք :

Հոս կը յաւելում մի քանի խրատներ առողջապահութեան վրայ : Մաքրութեան եւ օգոյնորոգութեան վարժեցնելով , հիւանդութեանց դէմ պաշտպանած պիտի ըլլաք զայն : Այս մասին խօսեցայ մանկութենէն սկսեալ տարուելիք խնամոց կարգին մէջ . այս խնամք հարկաւոր են բոլոր կենաց մէջ :

Աւլուած կամ վերցուած փոշին ուրիշ բան չը-
նէր եթէ ոչ վերստին կ'իյնայ ձեր վրայ կամ այլ մի
տուարկայի վրայ , եւ փոշին ալ կը պարունակէ բոլոր
հիւանդութեանց սերմերը : Ուստի զգուշացէք կարե-
լի եղածին չափ անոնց ընդունարանը եղող կերպաս-
ներէ եւ գորգերէ , եւ վարժեցուցէք մանուկը որ իր
սենեակը ինք աւլէ թրջած ջնջոցով մը եւ վերցնէ
ամէն անսմաքրութիւն :

Պազառութիւններէ զգուշացնելու համար , բան
մը որում ենթակայ կ'ըլլան մանաւանդ փափկա-
կազմակազմ , երբէք մի՛ թոյլ տաք ցուրտին տալ
ինքինքնին սաստիկ կերպով քրանելէ ետքը : Դուրս
ելնելէ առաջ հանդարտ կեցուցէք զայն մի քանի
վայրկեան , եւ մանաւանդ ցուրտ կլիմայի մը մէջ
սպասեցէք ջերմութեան բոլոր հետքերուն անհե-
տացման : Շատ ծանր հագուստներ մի՛ հագցնէք ,
մինչեւ իսկ եթէ օդը սաստիկ ցուրտ ըլլայ , քանզի
ծանր հագուստներու պատճառած յոգնութիւնը կը
քրանցնէ զայն եւ , այսպէս , հարբուխ ըլլալու կը
պատրաստէ : Ամառը , բաղնիքէն առաջ , պէտք է
հսկել խնամով բարեխառնութեան մորթին , որ պար-
տի ջուրը մանելէ առաջ իր բնական վիճակը վերա-
տանալ : Հարաւային կլիմայից մէջ արեւամուտէն
պէտք է զգուշանալ . յաճախ մահառիթ է այն ,
վասն զի չորս կողմէ պատող օդին մէջ յառաջ եկած
փոփոխութիւնը այնքան սաստիկ է որ կարծես
թէ սառի մէջ կը խորասուզեն զքեզ այն պահուն
երբ տաք էք : Առողջութեան վեասակար ժամանա-
հութիւնք զետնէն ուժգնապէս կը բարձրա-
նան մթնոլորտին մէջ , եւ ահա այս է պատճառը

որ տեսակ տեսակ տենդեր յաճախաղէպ են տաք կլիմայից տակ :

Պէտք է յարդել միշտ քունը , եւ կ'ուզէի տեսնել այս սկզբան երկարատեւ կիրառութիւնը մանկութեան բովանդակ տեսողութեան մէջ : Դժբաղդապէս անկարելի է այս , բայց գէթ զանոնք կառավարել կրցած ատեննիս , զզուշանանք զանոնք զրկելէ այս լաւագոյն զօրացուցիչն , բնութեան այս զարմանալի զօրավիգէն : Տասը , տասներկուժամ կամ աւելի՝ եթէ պէտք է , քնացնելու է զանոնք : Բայց արմնաւնուն ողէս , անկողնին մէջ մի՛ թողուք . անսմիջապէս սկսել տուէք մարմնական կրթութեան մը : Բան մը այնքան տկարացուցիչ եւ վնասակար չէ ջղային զրութեան համար որքան մինալ անկողնոյ մէջ աչքերը բաց :

Ժամերու մէջ մեծ կանոնաւորութիւն ողահեցէք . ելնել , պառկիլ , ճաշել , աշխատիլ՝ որոշեալ ժամերուն մէջ պէտք է տեղի ունենայ , վասն զի կենաց մէջ կարգապահութիւն՝ զօրացուցիչ մըն է ջղերուն համար զորս կը խանգարեն անակնկալ պարագայք՝ կարի յաճախ կրկնուած : Կերակուրք երբէք չափէն աւելի առատ ըլլալու չեն , այլ միջոցները բաւական իրարու մօտ ըլլալու են : Ամէն երեք ժամը անգամ մը պէտք է ուտել . եթէ կ'ուզէք որ ստամոքսնիդ չի ծանրաբեռնէք , պարտիք այս կանոնին հետեւիլ : Կերակուրէն եաքը մի՛ թոյլ տաք որ կրծելիք բան մը գտնեն : Ո՞րքան վնասակար է տղայոց ի դէպս կամ յանդէպս շաքարեղէն տալով իբրեւթէ հաճոյք պատճառել անոնց : Եթէ խսկապէս անօթի են , պէտք է անուցանել , բայց իրենց ժա-

մանակին , եւ բնաւ պէտք չէ տալ շաքարեղէն կամ
խմորեղէն բաներ :

Կ'ըսեն թէ շաքարը կը վնասէ ակռաներուն :
Ոչ թէ միայն ա՛րաներուն կը վնասէ , այլ եւ ստա-
մոքսին . լորձունքը կ'ըլլայ թթու երբ այս գործա-
րանը լեցուած է չափէն աւելի , մանաւանդ շաքա-
րեղէններով որ թթուութիւնը կ'աւելցնեն : Տղան
առաջին ակռան հանած ատեն ամէն խնամ տանիլ
պէտք է : Ակռաները , հակառակ ամէն խնամոց ,
յաճախ գէշ յատկութիւն ունենալով — աւելի յա-
ճախ ժառանգական պատճառներով — պէտք է երկ-
րորդ ակռաները երեւան ելածին պէս , տղան ա-
տամնաբոյժին տանիլ : Այն ատեն շատ զոյզն ծախք
մը կ'ընէք , եւ այսու , ծանր ծախքերէ խոյս տա-
լով հանդերձ՝ ակռայի հիւանդութիւններէ ազատած
կ'ըլլաք , հիւանդութիւն մը որ կեանքը ճշմարիտ
պատուհասի մը կը զարձնէ : Առաջին աստիճան կարե-
ւորութեան արժանի է երկար ատեն պահել ակռաները
որչափ որ կարելի է , մինչեւ իսկ եթէ խիստ զոհացու-
ցիչ զիրք մը չունենան , պէտք չէ հանել տալ : Արուես-
տական ակռաները բնական ակռաներուն գործը չեն
կրնար տեսնել : Բնական ակռաներով ծամելը՝ մար-
սողութեան վրայ ուղղակի ազգեցութիւն ի գործ
զնող լորձունքներուն պաշտօնը կը կանոնաւորէ :
Լաւ ստամոքս մը ունենալու համար կերակուրնե-
րուն պարզութեան եւ կանոնաւորութեան վրայ
պէտք է աւելցնել նաեւ զանազանութիւն մը որպէս
զի արեան մատակարարէ քիմիական զանազան մա-
սերը որոց կը կարօտի : Ուստի կաթնեղէնք , խմո-
րեղէնք , բանջարեղէնք , ձուկ , հաւկիթ , միս , աղ

եւ շաքար պարտին մտնել մարդկային կազմութեան մէջ : Ի միմիթարութիւն անոնց որոց վիճակը չի ներէր թարմ միս ուտելու , պիտի ըսեմ թէ , թարմ բանջարեղէնք միծ քանակութեամբ ազօդ կը պարունակեն , եւ մսին մէջ մեր փնտռածն ալ արդէն այս է : Սունկն ալ մեծաքանակ ազօդ կը պարունակէ քան ամէնէն ընտիր միսը : Այս բոլոր նիւթերն եւս անհրաժեշտ են . բայց ասոնցմէ եւ ոչ մինչ չափէն աւելի ուտուելու չէ : Տհաս պտուղները ճշմարիտ թոյն են , եւ ընդհանրապէս ամէն ինչ որ կ'ուտուի հում վիճակի մէջ , աւելի դժուար կը մարսուի . հետեւաբար փափուկ ստամոքսի տէր անձինք պարտին զգուշանալ հում ուտելիքներէ եւ խակ պտուղներէ :

Ըմպելիք — զինի , գարեջուր , կամ ըստ երկրին այլ հեղուկներ — պարտին խմուիլ կերակուրէն վերջը , մէկ քառորդ ետքը : Բովանդակ բնութեան մէջ կը տեսնենք որ կենդանիք նախ կ'ուտեն եւ ապա կը խմեն : Մեր ուտելիքները արդէն իրենց մէջ ըստ բաւականին հեղուկ կը պարունակեն մարսողութեան համար : Ուտելու ատեն խմելու սովորութեան պահանառաւ է որ որկրամոլ կ'ըլլանք , քանզի առանց խմելու , անկարելի է ուտել անօթութեան պահանջածէն աւելի , եւ խմելիքի չափազանց գործածութիւնը մարտողութիւնը կը դժուարացնէ , ճարպի մասնակի կուտակմամբ կամ կազի առատ կազմութեամբ , որոնցմով կը տառապին այնքան տղայք :

Կարճատեսութիւնը ընդհանուր հիւանդութիւնը մը եղած է մանաւանդ գոլորոշաց մէջ , ուր լոյսը

ընդհանրապէս պահանջածէն սակաւ է , որով աշակերտաց աչքերը չափէն աւելի կը յոգնին : Այս պարագայից մէջ մարմինը վտանգաւոր զիրք մը կ'առնէ , որովհետեւ տղան , կարդացածը լաւ տեսնելու համար , կը պարտաւորի իր կուրծքը զրասեղանին վրայ կրթնցնելու :

Եթէ կարճատեսութիւնը շատ յառաջացեալ վիճակի մէջ է , փոխանակ զրասեղանին վրայ իյնալու , աւելի լաւ է զօրաւոր ակնոցներ գործածել . զրեթէ չկայ տղայ մը որ ի բնէ կարճատես եղած ըլլայ , բայցի անոնցմէ որոնք ժառանգականապէս կարճատես են :

Թոթովախօսութիւնը դարմանելու համար պէտք է տղաքները վարժեցնել խիստ ծանր կերպով խօսելու , վանկերը ազդուութեամբ արտասանել եւ ամէն մէկ վանկին շունչ առնել տալով : Անդամի մը յարաբերական տկարութիւնը կամ խեղանգամութիւնը դարմանելու համար , բժշկական մարմնամարզի զիմելու է , որ անդամներու տկարութենէ յառաջ եկած ամէն թերութիւն կ'ուզզէ :

Հիմա խօսինք անխուսափելի հիւանդութեանց առեն տարուելիք մի քանի խնամքներու վրայ : Մէն մի տկարութեան պէտք է խնամք տանիլ սկիզբէն . ապա թէ ոչ տկարութիւնը շարունակելով հիւանդութեան հանգամանք կ'առնու , եւ հիւանդութիւնն ալ չարունակելով անդարմանելի ախտի մը սպատճառ կ'ըլլայ : Ճշմարիտ բժշկութիւնը հիւանդութիւնն մը իր տկարութեան աստիճանին մէջ բնաջինջ ընելուն մէջ կը կայանայ . այսպէս , զոր օրինակ , պազառութիւնը պարտի ազդուապէս դարմանուիլ , վաանգաւոր

հիւանդութիւն մը դառնալէ արդիլելու համար : Մոր-
թային հիւանդութեանց գալով, եթէ անմիջապէս
բժիշկ չկրնաք զանել, կարելի եղածին չափ տաք
պահելու հոգ տարէք : Ահաւասիկ առիթ մը հասկր-
նալու համար թէ տղան լաւ կրթուած է, թէ հնա-
զանդ է . հազարաւոր տղայք կրթուած են պար-
զապէս վերմակնին վրանուն նետելու — բացուելու —
յամառելուն համար : Այս հիւանդութիւնք որքան
ալ որ հասարակ բաներ թուին, իրեն ծանր հիւ-
անդութիւններ նկատեցէք զանոնք եւ ըստ այնմ
հոգ տարէք տղայոց : Խիստ երկարատեւ ժուժկա-
լութիւն պէտք է կերակրոյ մասին — գէթ ինն օր
հաւու մսի ջուր տալու է (ամէն երկու ժամը ան-
դամ մը գաւաթ մը), հացէ եւ կարծր ուաելիքներէ
զգուշանալու է . անկողին եւ հանդիսատ պահանջելու էք
մինչեւ երեք ամիս : Եթէ եղանակը ձմեռ է եւ այս
պատճառաւ բնակարանը առողջապահական պայման-
ներու տակ չի գտնուիր, անկողինի մէջ անցընելու
ժամանակը երկարիցէք . մինչեւ վեց ամիս դուրս
մի՛ հանէք : Տղայոց յատուկ միւս բոլոր տկա-
րութեանց, զոր օրինակ, կոկորզի հիւանդու-
թեան, հազի, եւայլն, ատեն կը յիշեցնեմ ձեզ զըր-
քիս առաջին գլխուն մէջ յանձնարարած դարման-
ներս — շփումները : Այս պարզ զրութեամբ արեան
չքանը վերահաստատուելով, հարբուխը թոքերու
բորբոքում ըլլալէ արդիլուած կ'ըլլայ :

Հարուածներէ եւ վէրքերէ յառաջ եկած թե-
թեւ արկածներու գալով, առաջինները պարտին
դարմանուիլ՝ հարուածեալ տեղը մետաղի կտոր մը
գնելով, որով արդիլուած կ'ըլլայ ուսուցք եւ կա-

պուտութիւն . եթէ մորթը ելած է՝ մարմինը մերկ թողլով , պէտք է առատ պաղ ջուրով լուալ : Կըտրուածներու համար , քիչ մը թողլով որ արիւնի , վիրաւորեալ մասը ջուրին մէջ պէտք է բռնել , եւ յետոյ զայն հին կտորներով փաթթելու է , այնպէս որ ոչ օդ , ոչ աղտեղութիւն չի թափանցեն մինչեւ վէրքին մէջ : Եթէ կտրուածքը տեղի ունեցած է այնպիսի գործիքով մը որուն մաքրութիւնը տարակուսելի կը թուի ձեզ , քիչ մը վիհնօլ (հանքածուխէ հանուած տեսակ մը իւղ) խառնելով լաւ մը լուացէք : Նոյնպէս մաքրել պէտք է այլուցքները եւ փաթթել այրուած մասը թերթ մը վարկայով որ կ'արգիլէ օդին հաղորդակցութիւնը : Վէրքերը օդով կամ շօշափումամբ եւ աղտեղութեամբ միայն կը ռնան սաստկանալ . պէտք է ուրեմն միշտ տան մէջ չիչ մը փինօլ ունենալ որ կ'արգիլէ ամէն տարածում կամ փոխանցում :

ՅԱՆԿ ՅՈԳՈՒԱԾՈՅ

Երկու խօսի (քարգմանիցը)

Նախարան (հեղինակութիւն)

Ներածուրիւն

Ել

11

Ա.

Թէ ինչ է մանուկը. — Ժառանգականուրիւն.

— Նախնական խնամոց կարեւորուրիւնը. — Զերմուրիւն. — Օդ

21

Բ.

Ոնունդ. — Քուն. — Առաջին սարուան հան-

դիրձեղենիք

35

Գ.

Դարձ կտրել. — Մանուկները բազկաց վրայ կրե-

շու կամ տունձին բողելու վտանգները. — Հնա-

զանդուրիւն. — Օրօրնեց սկսիալ վարժեցուելիք

սովորուրիւններ. — Սովորուրեանց զօրուրիւնը

49

Դ.

Պատիճները. — Վախցնելու վտանգները. —

Մանկանց դայեակները

58

Ա.

Անհատականուրիւնը յարգելու պէսթ. — Պա-
կասուրիւնը եւ յանցանի պարտին նկատուիլ իրեւ
նիւանդուրիւն. — Բոնուրիւն. — Խոժոռուրիւն.
Պահանջմուն. — Օգտակար խուսափում 71

Զ.

Մանկուրեան արտային սպաւորուրիւն. — Դե-
ղեցկին ձաշակը տալու համար՝ այս սպաւորուրեանց
զգայարանաց վրայ ներզործած գօրաւոր ազդեցու-
րեանին բաղուիլիք օգուտը. — Այս նպատակին հաս-
նելու համար պարզ միջոցներ 85

Է.

Խաղաղիկներ. — Մեծածախ հագուստներ. —
Վճառակար զարդարաններ. — Անվնաս զարդարան. —
Դրամ եւ ողորմուրիւն. — Հասարակաց խաղեր.
Ֆիզիֆականի եւ մտաւորականի վրայ ո եւէ դի-
տողուրիւն ընելկ զգուշանալ 96

Ը.

Տարբերուրիւն ընդմէջ դասիարակուրեան եւ
ուսուցման. — Թէ որ պարագայից մէջ պէսթ կ
պատրասել բարձր ուսմանց. — Անդամոց զար-
գացում. — Ճարպիկուրիւն. — Թէրեւաշարժու-
րիւն. — Դիտելու համար զգայարանիք գործածել
գիտնալ. — Տարեր երաժշուրեան եւ գծագրու-
րեան անհրաժեշտ ամենուն 106

Թ.

- Բնուրեան առարկայից հետաքրքրելով մանուկը¹
զարգացնել դիտողութիւնը. — Խուսափիլ այն ամեն
ուսումնիրկ որնի՛ բացարձակապէս ձշմարիս չեն.
— Ծաղրելին. — Ընտանիք. — Կրօնի. — Բանասեղ-
ծական ուսուցմունի՛. — Գրքեր 122

Ժ.

- Ամենուն համար անհրաժեշտ եղող առողջա-
պահիլ կանոններ. — Առաջարգել բժշկութիւնը
կամ առողջապահութիւնը. — Ճշմարիս դասխարա-
կութեան արտադրած արդիւնի՛լ 136



